



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


238

Ա ԱԹԱՆԱՍԵԱՆ

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

# ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴ, ԿԵՆԴԱՆԻ, ԲՈՅՍ և ՀԱՆՔ



Դասընթացի հաշոյ ժողովրդական եւ քաղաքային դպրոց-  
ների III, IV եւ V ս շիւների



Պիտե Է 65 109ԷԿ

ուրաւնեհինգ մարդակազմական, կենդանաբանական եւ  
բուսաբանական նկարներով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ֆպարան Ա. Մ. Թառաւմեանցի

1907

5 (075)  
Ա-26

85  
60  
55

Управление Управления

40

18. 3. 80

20 MAY 2010

5 (2015)

Ա-26

W


Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ

19 MAY 2005

**Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք**

# **ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**

**ՄԱՐԴ, ԿԵՆԴԱՆԻ, ԲՈՅՍ և ՀՆԵՔ**



*Դասընթացի հաշյոց ժողովրդական և քաղաքացիական պարտեզների III, IV և V սարիների*



*ութաունեից մարդակազմական, կենդանաբանական և բուսաբանական նկարներով*

**ՑՊԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ**

**Թ Ի Ֆ Լ Ի Ս**

**Ցպարան Ա. Մ. Թառամեանցի**

**1907**

25232-տ՝Շ 238

- .01. 2013



11101-57 (4434-56)

### ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍՏՏՈՒՆԵՐԻՆ

Բնական գիտությունները որպէս մեր, նոյնպէս և ռուսական դպրոցներում տաննակ տարիներ շարունակ եզիլ են խորթ գաւակներ և որպէս այդպիսիներ հնարաւոր եղածին չափ հալածել են թէ ստորին և թէ միջնակարգ դպրոցներում: Միայն վերջին ժամանակներս, երբ կծու և անողոր քննադատութեան տակ պարզեց կլասիքական և գուտ բարոյարգիտական (եկեղեցական-ժխական) դպրոցների պակասաւոր կողմերը, սկսեցին կրթութեան և ուսման ծրագրի մէջ բնական գիտություններին յատկացնել աւելի պատուաւոր տեղ:

Այդ քննադատութեան արդիւնքն է անշուշտ այն երևոյթը, որ այժմ պետական և ժողովրդական բոլոր կարգի դպրոցներում բնութեան օրէնքների և հրաշալիքների հետ ծանօթութեան հիմքը դրուում է աւելի վաղ—երրորդ տարւայ դասընթացից և շարունակուում է միջնակարգ ուսման գրեթէ ողջ ընթացքում:

Նոյն այդ սխտեմին հետևել է մեր ուսումնարանական այն Մասնաժողովը, որ 1905 թւին հրաւիրեց հայ եկեղեցական-ժխական դպրոցների համար ծրագրի նախագիծ կազմելու: Այդ նախագիծը բնական գիտությունների ուսումը սկսում է երրորդ տարւայ և շարունակում է չորս տարի, որի ընթացքում աշակերտները պէտք է ստանան մի ամփոփ տեղեկութիւն բնութեան երեք թաղաւորութիւնների մասին, ապա բնագիտութեան (Ֆիզիկայի), քիմիայի և առողջապահութեան:

Որպէս այդ առարկաների ուսուցիչ թէ Գէորգեան ճեմարանում և թէ Արմաւիրում ու վերջերս նաև Թիֆլիսի ս. Նշանի օրիորդաց դպրոցում, մենք հետաքրքրուել ենք, թէ ինչ ծաւալով և օլսանմով են աւանդւում այդ գիտությունները մեր ժողովրդական դպրոցներում, բայց մեզ միշտ էլ մեր ընկեր ուսուցիչները պատասխանել են, որ իրենցից ամեն մէկը անցել է այն, ինչ որ ցանկացել է և այնպէս, ինչպէս որ իրենք յարմար են գտել:

Սե դրա պատճառներից մէկը, դուցէ և ամենագլխաւորը, եղել է այն, որ հրապարակում չէ եղել ոչ որոշ ծրագիր և ոչ էլ հայերէն լեզուով մի դասագիրք:

Այժմ, ըստ երևոյթին, պատճառներից մէկը պէտք էր վերացած համարել, քանի որ ուսումնարանական խորհուրդը նույնպէս մէջ դծել է բնական գիտութեանց այն գլխաւոր կէտերը, որ պէտք է աւանդուին մեր դպրոցներում:

Ծանօթանալով այդ կէտերի հետ, մենք գտանք, որ ուսումնարանական խորհուրդը գոնէ բնական գիտութիւններ Վերաբերմամբ կանգնած է եկել ոչ ցանկալի ճանապարհի վրայ, երբ բնութեան հետ ծանօթացնելու համար նա ընտրել է տեղադրական սխեմա—այսինքն նախ տուն, յետոյ բակ, պարտէզ, դաշտ, անտառ և այլն և երեխաներին ծանօթացրել է այն կենդանիների և բոյսերի հետ, որ նրանք կարող են տեսնել իրենց շուրջը:

Անկասկած, այդ սխեման հետևելով նախագիծ կազմողները աչքի առաջ են ունեցել ծանօթից դէպի անծանօթը, մօտիկից հեռուն ուսումնասիրելու գաղափարը, մտանալով մի գլխաւոր բան, այն, որ այդ մօտիկում երեխան կպատահի նաև այնպիսի կենդանիների և բոյսերի, որոնք չափազանց բարդ և՛ կեանք և՛ կազմ ունին և դրանց հետ խառը այնպիսի մարմիններ, որոնք պարզ են ու հասկանալի և երբեմն շատ անհետաքրքիր:

Սեր կարծիքով, տնդարական սխեմանը նիւթերի ընտրութեան մէջ մտնում է չափազանց շատ պատահականութիւն, այն ինչ երեխաներին ծանօթացնելով բնութեան օրէնքների հետ, պէտք է նախ և առաջ ցոյց տալ այն յաջորդական, զարգացողական ներքին կապը. որ կայ բնութեան և նրա բոլոր առարկաների ու երևոյթների մէջ: Ի՞նչ է, որ հետաքրքրում է թէ երեխային և թէ հասակաւորին, և նրանց ստիպում ամեն տեղ գտնել պատճառ և հետեւանք:

Այս հանգամանքը ընդգծւած է թէ Նւրոպսկան և թէ Ռուսական գրեթէ բոլոր լու դասագրքերի մէջ, սկսած Պոլ Բերի տարրական բնապատմական դասագրքից, Շնիցէրի շվեցարական տարրական դպրոցներում ընդունւած ձեռնարկից, մինչև Նարոչևսկու և Գերզի դասագրքերը:

Նրանց բոլորի մէջ էլ բնական պատմութիւնը սկսում է կամ երեխային ամենից ծանօթ և մօտ առարկայից ինչպէս՝ իր մարմինն է և հետզհետէ ծանօթացնում է կենդանիների և բոյսերի հետ կամ, ընդհակառակը, սկսում է հանքերից, ապա անցնում պարզ բոյսերին, անողնաշարաւոր կենդանիներին և վերջացնում մարդով:

Այս վերջին պատմական—զարգացողական (էվոլյուցիոնական) սխեմանը ընդունւած է աւանդել միջնակարգ դպրոցներում, սկսած չորրորդ դասարանից, այսինքն ուսուցման եօթերորդ տարուց, այն ինչ առաջինը, այսինքն մարդից մինչև հանքը, դասաւանդուում են բնա-

կան գիտութեան ուսուցման առաջին շրջանում նաև է III, IV, V և VI դ բաժանմունքներում:

Մենք, հաւատարիմ մնալով նախագիծում որոշւած նիւթի ուսուցման ողջ ծաւալին, բայց հետևելով եւրոպական և ուսական լաւագոյն հեղինակներին ու ձեռնարկներին, մեր այս դասագրքի մէջ ընտրեցինք առաջին սխեման. այն է՝

Երեխան նախ ծանօթանում է իր մարմնի, քարծարանների, կեանքի հետ, որպէս իրեն ամենամատչելի և կարևորի: և ապա, զարգացողական իջնող սասիւնանով և համեմատական սխեմանով, անցնում ենք բնական պատմութեան միւս նիւթերին՝ կենդանիներին, բոյսերին և վերջը միայն հանքերին:

Այս եղանակով դասաւանդելու փորձը ունենալով հէնց այն դպրոցում, ուր մենք պարապում էինք, գտանք, որ երեխաները կրկնակի հետաքրքրութեամբ թէ լսում և թէ սովորում են այն բոլոր նիւթերը, որ նրանց հաղդում են:

Այսքանը սխեմանի մասին:  
Այժմ մի քանի խօսք դասաւանդման ձևի:

Եթէ ուսուցիչը, տալով մեր այս դասագիրքը երեխաների ձեռքը, ցանկանայ նրանց հաղորդել և սովորեցնել միայն այն և այնքան, որքան որ դա կայ այս դասագրքում, նա դրանով արջի ծառայութիւն արած կլինի թէ իր սանին և թէ բնական գիտութիւններին, որովհետև աշխարհիս վրայ դեռ ևս չկայ մի որևէ դասագիրք և այն ևս մանր երեխաների համար, որով երեխաները ծանօթանային բնութեան հրաշալիքների և օրէնքների հետ միայն այդ դասագրքով:

Ոչ. առաջարկելով այս դասագիրքը մեր երեխաներին ու ուսուցիչներին, մենք միայն տալիս ենք մի սահման քի ինչ բանի մասին պէտք է ուսուցիչը խօսի երեխայի հետ. իսկ թէ ո՞րքան պէտք է նա խօսի և ի՞նչպէս—այդ մենք թողնում ենք իրեն ուսուցիչին. այստեղ արդեն նրա առաջ բացում է զրուցատրութեան մի անծայր և վերին աստիճանի շնորհակալ ասպարէզ. դա ողջ բնութիւնն է, միշտ կենդանի, միշտ ձեր աչքի առաջ, միշտ հետազօտելի և միշտ էլ հետաքրքիր:

Այն ուսուցիչը, որ բնութեան պատմութիւնը երեխաների հետ չէ անցնում բնութեան մէջ—նա բնական պատմութեան ուսուցիչ չէ, այլ արհեստաւոր և այն էլ վատ ու անչորք արհեստաւոր. որովհետև ամեն մի մորթաց հաւ, խւրաքանչիւր արմատով հողից հանած բոյս կամ քաղած ծաղիկ, երբ նրա աչքի առաջ բացում, մասնատում էք և իրեն ցոյց տալիս, դրանով երեխային աւելի շատ բան էք ասում, քան ամենահրաշալի դասագրքերով ու գունաւոր նկարներով:

Իրա համար էլ բնական պատմութեան ուսուցիչը պարտաւոր է օգտուել ամեն մի առիթից՝ երեխայի ուշադրութիւնը գրաւելու հա-

Իսկ այս դասագիրքը լոկ նրա համար է, որ նախ ուսուցիչը իմանայ թէ ինչ նիւթի մասին խօսի իր սաների հետ, իսկ սաները կարողանան իրենց միտքը պահել ուսուցչի պատմածի զլխաւոր կէտերը, այսինքն այն, որ անւանում է գիտական նեմատրոփիւններ կամ փաստեր. որովհետեւ այսպէս թէ այնպէս երեխային պատմած և ցոյց տւած բոլոր նիւթերից նրա ուղեղի մէջ պէտք է որ մնայ քանձաւացած մի բան: Ահա թանձրացած այդ բան է, որ տալիս է այս դասագիրքը:

Գծարդտաբար, հայոց լեզուով մինչև այժմ մենք այնքան քիչ բնապատմական գրքեր ունենք. որ մեր ուսուցիչները հազու թէ նրանցով կարողանան հագեցնել հէնց իրենց հետաքրքրութիւնն ու պաշարը, նախքան երեխաներին պատմելն ու ծանօթացնելը. սակայն այդ կողմից չսովորանց հարուստ է ուսուցող գրականութիւնը, որից անպայման պարսական են օգտուել մեր հայ ուսուցիչները, դասատուները. որովհետեւ, մինչև որ ինքը ուսուցիչը չսովորի, չիմանայ իր աւանդած առարկան լաւ և հիմնաւոր, նա չէ կարող իր սաների մէջ զարթնեցնել սէր դէպի բնութիւնը և ծանօթութիւն նրա օրէնքների ու երևոյթների հետ:

Այս ունենալով աչքի առաջ, մենք գրքի հետևի չապիկի վրայ տալիս ենք մի շարք գրքերի, դասագրքերի անուաններ, որոնցից կարող են օգտուել մեր ուսուցիչները, գնելով թէ իրենց և թէ պարտքի գրադարանի համար:

Տարաբարտար բոլոր հետաքրքիր և գնահատելի գրքերը, ինչպէս օր. Բրէմի կենդանաբանութիւնը կամ Բանկէի մարդակազմութիւնն ու բնախօսութիւնը և այլ բազմաթիւ գրքեր գնի կողմից անմատչելի են մեր գաւառական ուսուցչի և պարտքի աղքատիկ բիւրժէի համար, ուստի և մենք նշա՛ տկում ենք այնպիսի դասագրքեր, որոնք համեմատաբար տւելի արժան են:

Գալով պաշարկածս ներկայ դասագրքի նիւթի դասաւանդութեան սահմաններին, աչքի առաջ ունենալով բնական գիտութիւններին յատկացրած ժամերն ու տարիների թիւը, մենք կառաջարկենք մեր բնկերներին այսպէս վարելի:

Աչքի առաջ ունենալով, որ բնական պատմութիւնը մեր դըպրոցներում գասաւանդուում է երրորդ, չորրորդ և հինգերորդ բաժանմանը և ընդամենը շարաթաղան երեքական ժամերով, մենք առաջարկում ենք դասաւանդման հետևեալ կարգը:

Միայն երեք բաժանմունքներ ունեցող դպրոցներում՝

Մարդակազմութիւն— երեք ամիս (սեպտ. հոկտ. և նոյեմբ.)

Կենդանաբանութիւն՝ երեք ամիս (դեկտ. յունւար և փետրւար) միայն ողնաշարաւորները:

Բուսաբանութիւն— երկու և կէս ամիս (մարտ, ապրիլ և մայիսի կէսը՝ մինչև ծաղիկները § 213—288:

Որչափ և ըստ երևոյթին մեծ երևայ մի տարւայ համար՝ այս դասընթացքը, բայց ուսուցիչը համառօտելով կարող է այդ անցնել: Չորս բաժանմունք ունեցող դպրոցներում՝ դասագրքի նիւթը կարելի է անցնել աւելի մանրամասն այն է՝

Երրորդ բաժանմունքում—

Մարդակազմութիւնից— մինչև արեան շրջանաւորութիւնը § 1—41:

Կենդանաբանութիւնից — Ողնաշարաւորներից— կաթնասուններ և թռչուններ § 81—161:

Բուսաբանութիւնից՝ սկզբից մինչև ծաղիկները՝ § 213—288:

Չորրորդ բաժանմունքում.

Մարդակազմութիւնը վերջացնել:

Կենդանաբանութիւնից անցնել մինչև անողնաշարային կենդանիները § 161—190:

Բուսաբանութիւնից— վերջացնել:

Հինգ բաժանմունք ունեցող դպրոցներում՝ դասագրքի ողջ նիւթը պէտք է անցնել հնարաւոր եղածին չափ ընդարձակ, այն է՝ չորս բաժանմունք ունեցող դպրոցների ծաւալը, աւելացնելով դրա վրայ հինգերորդ բաժանմունքում՝

Մարդակազմութիւնից՝ առողջօրպահութեան վերաբերեալ անհրաժեշտ գիտելիքներ.

Կենդանաբանութիւնից՝ աւարտել ողջ դասընթացքը.

Բուսաբանութիւնից— ծաղիկներ և այլն, աւարտել ողջ դասընթացքը.

Հանքաբանութիւնից՝ ողջ դասընթացքը:

Վատ չէր լինի եթէ կենդանաբանութիւն դասաւանդելու ուսուցիչը երկար կանգ առնէր հինգերորդ բաժանմունքում կողի, մեղրի և շերամի որդի վրայ, որով երեխաներին ծանօթացրած կլինէր կաթնատնտեսութեան, մեղաբուծութեան և շերմապահութեան հետ: Մանաւանդ այս բանի վրայ պէտք է ուշք դարձնեն մեր զիւղական դպրոցների ուսուցիչները:

Բուսաբանութիւնից երկար կանգ առնէին յատկապէս հացաբոյսերի, թիւրբոյսերի (վուշ, կանէփ, բամբակ) և պողպարոյսերի՝ խողող, տանձ, խնձոր և այլն և ապա պատուաստի և բոյսերի սուսանց սերմերի բազմանալու եղանակները. հանքաբանութիւն անցնելիս ուշք դարձնէին հողի մշակութեան, նրա տեսակների և պարարտացման միջոցների վրայ\*):

Նորից դարձնում ենք ընկեր դասատուների ուշադրութիւնը այն բանի վրայ, որ այս դասագիրքը աշակերտների համար ծառայե-

\*) Չղանկանալով դասագիրքը գնի կողմից թանկացնել, մենք կուլտուրական բոյսերի մասին պատրաստած մասը դժարացանք այս ազգագրութեան մէջ գնել, այլ պահեցինք երկրորդ տպագրութեան համար:

լու է, որպէս ուսուցչի անցածի կոնսպէկտ, վերարտադրելու ուսուցչից լսածի և տեսածի ամենագլխաւոր մասերը. իսկ ինքը ուսուցչիչ պարտական է ամեն ինչ, որ հնարաւոր է, ցոյց տալ բնութեան մէջ, որպէսզի աշակերտը աչքով տեսնի, քննի, համեմատի և ինքնուրոյն մտածելու ընդունակութիւն ձեռք բերի—այն չափով, որ նա կարողանայ դասագրքում չլիչւած, բայց իրեն ծանօթ մի բոյս կամ կենդանի նկարագրել, չմոռանալով յիշել պատմած առարկայի էական մասերը.

Թէ ուսուցիչներին և թէ մանուանդ աշակերտներին դիւրութիւն տալու նպատակով, մենք կանգ չառանք մեծ ծախքերի առաջ և առաջին անգամ հայերէն մի դասագրքում տւեցինք 85 գեղեցիկ և ճիշտ կատարւած նկարներ: Մօտ 40 հատ կլիշէներ մենք Պետերբուրգից ստացանք միայն այն ժամանակ, երբ դասագիրքը արդէն տպագրւում էր, ուստի գրքիս յաջորդ երկրորդ տպագրութիւնը կլիշէ թէ նկարներով աւելի հարուստ և թէ նիւթերով ճոխացրած:

Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ



I. ԲՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ ՄՍՐՄԻՆՆԵՐ

1. Այն բոլոր առարկաները, իրերը, որ մենք տեսնում ենք և շօշափում՝ ունեն ձեռք տա մարմին:

Բնական մարմիններ

Ամեն մի մարմին կազմւած է նիւթերից: Նիւթերը լինում են փափուկ կամ սիւնդ:

Մեր աշխարհը լի է անթիւ մարմիններով. և տեսաւ մեր ամողջ աշխարհը իր փրայ և իր մէջ ունեցած այդ անթիւ մարմիններով կոչւում է բնութիւն:

2. Բնութեան մէջ գտնւած բոլոր մարմինները բաժանւում են երեք մեծ խմբերի, այն է՝ կեղևակներ, որոնք կեղևի ունեն, ուրիշ խօսքով մարմիններ, որոնք ծնւում, շնչւում, շարժւում, կերակուր են ուտում, ապա իրենց նման նոր մարմիններ առաջացնում և յետոյ մեռնում: Երկրորդ մեծ խումբը բոյսերն են. սրանք էլ կենդանիների նման դարձեալ ծնւում, մեծանում, բազմանում և մեղմում կամ չորանում են և վերջապէս կայ մարմինների մի երրորդ խումբ, որոնք ոչ ծնւում, ոչ մեծանում և ոչ էլ մեռնում են—զրանք հասկերն են:

3. Հէնց զրա համար էլ բնութեան մէջ գտնւած բոլոր մարմին ունեցող առարկաները բաժանւում ենք երեք մեծ խմբերի կամ երեք քազարտորթիւնների՝ կեղևակական, բուսական և հասկային:

Բնութեան քազարտորթիւններ

4. Թէ կենդանիները և թէ բոյսերը ապրելու, այսինքն ծնելու, ծլելու, շնչելու, կերակուր ընդունելու և թէ շարժւելու համար մարմնի վերայ և մարմնի մէջ ունեն զանազան մասեր. մարմնի այդ մասերը շարժւում, գործում աշխատում են. հէնց զրա համար էլ բոյսի և կենդանու կեանքի համար գործ կատարող այդ մասերը անւանւում են գործարաններ:

Գործարան, գործարանական և անգործարանական մարմիններ

Յոյսը բոյսերը եւ կեանքակիները ունեն գործարաններ, դրա համար էլ բոյսերը և կենդանիները կոչուում են գործարանական մարմիններ. իսկ երրորդ մեծ խմբին պատկանող մարմինները՝ հակեքը գործարաններ չունեն—դրա համար էլ ասում ենք՝ հակեքը ակգործարանական մարմիններ են.

5. Երբ մենք ծանօթանում ենք բնութեան մէջ գտնուած այդ երեք թագաւորութիւններին պատկանող զանազան մարմինների կեանքի և կազմաւածքի հետ, կնշանակի մենք ուսանում ենք բնական պատմութիւն:

Երբ մէնակ հակեքի հետ ենք ծանօթանում—ասում ենք, մենք սովորում ենք հակաբանութիւն, երբ քննում և ճանաչում ենք բոյսերի կեանքը, կնշանակի մենք բուսաբանութիւն ենք սովորում, իսկ երբ ծանօթանում ենք միայն կեանքակիների կեանքի և կազմի հետ, նշանակում է մենք սովորում ենք կեանքակաբանութիւն:

Բնական պատմութիւն եւ բնական գիտութիւններ



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա. ՄԱՐԴԱԿԱԶՄ ՈՒԹԻՒՆ

6. Բնութեան մէջ ապրող և մեզ ծանօթ բոլոր կենդանիների մէջ մարդը ամենից կատարեալ, ամենից հասկացող և ամենից շատ գործարաններ ունեցող կենդանին է, և մարդի համար չկայ աւելի թանկագին բան, քան իր մարմինը և իր կեանքը. դրա համար էլ մենք ամենից առաջ ծանօթանանք մեր մարմնի կազմի եւ նրա կեանքի հետ:

Մարդը

7. Մարդի մարմնի մէջ, ինչպէս և բոլոր կենդանիների մարմնի մէջ, գիշեր և ցերեկ անդադար զանազան գործեր են կատարուում. դրա համար էլ մեր մարմնի ամեն մի մասը լի է գործարաններով. բայց գործարանները բոլորն էլ միևնոյն գործը չեն կատարում, այլ մի քանի գործարաններ մի տեսակ գործ են կատարում, մի քանի ուրիշ գործարաններ՝ ուրիշ տեսակ գործ. այնպէս որ, եթէ մենք լաւ քննենք, այն ժամանակ մեր մարմնի մէջ գործող բոլոր գործարանները իրանց կատարած գործի համեմատ, երեւ գլխաւոր խմբերի կբաժանենք:

Մարդի գործարանները

8. Առաջին խմբին պատկանում են այն գործարանները, որոնք մեր մարմնի զանազան մասերի հիմքն են կազմում և ծառայում են այդ մասերը շարժելու: Երկրորդ խմբի գործարանները մեր մարմնին սնունդ են տալիս, իսկ երրորդ խումբը գործարանները զգում են և կառավարում մեր մարմինը. դրանք անւանում են զգայարաններ:


Գործարանների բաժանումը

Հէնց այդ կարգով էլ քննենք մեր գործարանները:

# I ՇԱՐԺՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

Ոսկր, միս,  
կմախք

9. Մեր մարմինը բաղկացած է երկու տեսակ մասերից—պինդ և փափուկ. պինդ մասերը ոսկրներն են, փափուկը միսն է: Փափուկ մասերը կամ կպած են կամ շրջապատում են ոսկրներին, այնպես որ ոսկրները, կազմելով մեր մարմնի հիմքը, մարմնի զանազան մասերին որոշ ձև են տալիս և նրանք, վերցրած այնպես, ինչպես որ կան մեր մարմնի վրայ, անւանուում են կմախք:



Ոսկրներ  
և խոռոչներ

Կմախքի  
մասերը

Գլխի ոսկրներ

10. Կմախքը բաղկացած է երկու հարիւրից աւելի զանազան ձևի և մեծութեան ոսկրներից: Այդ ոսկրներից մի քանիսը միանում և կազմում են խոռոչներ. այդ խոռոչների մէջ պաշտպանւում են մեզ համար թանկագին գործարանները՝ թէ՛ զրոսից և թէ՛ ներսից:

11. Մսից և ոսկրներից կազմւած մեր մարմինը տեղ գլխաւոր մասերի է բաժանւում, այն է՝ գրոխ, իրան և վերջաւորութիւններ, այսինքն՝ ձեռքեր և ոտքեր. այդ հրեք մասերից ամեն մէկը ունի իր ոսկրները:


12. Գլխի ոսկրները կազմւած են երկու խումբ ոսկրներից՝ զանգի և երեսի

№ 1. Մարդի կմախքը. ոսկրներից:

Գանգի ոսկրները ընդամենը ութ հատ են—մի ճա-

կասի ոսկր, երկու զագարի ոսկրներ, երկու ֆներակների, մէկ ծոծրակի ոսկր, մէկ հիմնակաւ և մէկ էլ մաշակման ոսկր:

Այս բոլոր ութ ոսկրները միանում են միմեանց հետ ատամնաւոր կարերով և կազմում են



№ 2. Գլխի ոսկրներ.

մի խոռոչ, որ կոչւում է զանգի խոռոչ. դրա մէջ գտնւում է մեր գործարաններից ամենից կարեւորը և քեթոյշը՝ գլխի ուղեղը:


Երեսի ոսկրները, հաշւած մեր բերնի մէջ գտնւած ատամները, 12 հատ են, այն է՝ երկու ծեօսներ՝ վերին և ներքին, երկու իրի ոսկր, երկու աչի ոսկրներ, երկու աչերի ոսկրներ, երկու արսաստի ոսկրներ, շեղի սակի մի ոսկր և մի միջնապասի ոսկր:

Բացի ներքին ծնօտի ոսկրից, երեսի բոլոր ոսկրները անշարժ են:

Երեսի և զանգի այս բոլոր 20 ոսկրները, միանալով միմեանց հետ, կազմում են մի քանի խոռոչներ, ուր գտնւում են գլխի գործարանները, ինչպէս օրինակ՝ ուղեղի խոռոչը, բերնի խոռոչը, աչքերի, քթի խոռոչները:

13. Իրանի ոսկրների մէջ ամենից կարեւորը ողնաշարն է, որը սկսւում է

Իրանի  
ոսկրներ




№ 3. Մարդի ողնաշարը.

կարեւորը ողնաշարն է, որը սկսւում է

ծոծրակից և, շարունակելով, վերջանում է պոչուկով։ Ողնաշարը մի ոսկր չէ, այլ բաղկացած է մի շարք օղանրման, միմեանց վրայ հազցրած կլոր, տափակ ոսկրներից, որոնք կոչւում են ողեր. դրանց մէջը կայ մի անցք. այդ անցքի մէջ գտնւում է ողնաշարի ողեղը. սա միացած է գլխի ուղեղի հետ և կազմում է նրա շարունակութիւնը։

Ողնաշարի զանազան ողեր՝ զանազան անուններ ունեն։ Վզի վրայի եօթ ողերը անւանւում են պարանոցի կամ վզի ողեր. մէջքի վրայի ողերը թւով 12 հատ են և կոչւում են մեջքի ողեր, ապա գալիս են գօտի հինգ ողերը. դրանից յետոյ կան 9 հատ ողեր, որոնց մէջ անցք չկայ։ Բոլոր ողերը, բացի վերջին 9 ողերից, շարժական են, հէնց դրա համար էլ մենք կարողանում ենք մեր ողնաշարի այս և այն մասը ազատ շարժել դէպի զանազան կողմեր։ Ողերի դրսի մասի վրայ կան ոսկրից ցցւածքներ — դրանք, ամբողջ ողնաշարի հետ միասին, կոչւում են ողնաշարայ։




№ 4. Գրծքի վանդակը.

Մէջքի 12 ողերի աջ և ձախ կողմերից կպած են 12 գոյգ բարակ, տափակ և աղեղնաձև ոսկրներ՝ կողերը։ Սրանք մէջքից գալիս են դէպի մեր կուրծքը և այստեղ մի քանիսը միանում են մեր առաջի մի ուրիշ ոսկրի՝ կրծոսկրի հետ, իսկ միւսները իրենց ծայրերով միանում են փափուկ կրճուկներով միմեանց հետ և այսպիսով կազմում են մի մեծ խոռոչ, որը անւանւում է կրծքի վանդակ. այս վանդակի մէջ գտնւում են մեր մարմնի մի քանի շատ կարևոր գործարաններ։

Վերին կողերի ետևի մասում գտնւում են երկու տափակ, թիականման եռանկիւնի ոսկրներ—

թիակները. սրանք էլ միացած են դէպի կրծոսկրը գնացող երկու գլանաձև ոսկրների՝ ակրակների հետ. անրակները և թիակները միացնում են մեր ձեռքերը իրանի հետ։

Նոյնպիսի միացնող ոսկրներ կան և մեր իրանի ցածի մասում. դրանք կոմի հաստ, երկու մեծ ոսկրներն են, որոնց ցածի փոսերի մէջ մտնում են մեր միւս վերջաւորութիւնները՝ ոտքերը և դրանով՝ ոտքերը միացնում են իրանի հետ։



№ 5. Գոնք.

14. Վերջաւորութիւնները երկու գոյգ են—վերին գոյգը կոչւում է ձեռքեր, ներքին գոյգը՝ ոտքեր։

Վերջաւորութեան ոսկրներ

Ձեռք բաղկացած է երեք մասերից, առաջին մասը— դա ուսից մինչև արմունկը մի հաստ ոսկր է, որ կոչւում է կռու. սրան միացած է երկրորդ մասը՝ բազուկը, որը, իրենց ծայրերով միմեանց կպած, երկու ոսկրներ են. դրանցից ցածինը աւելի երկար է և անւանւում է արմընկի ոսկր, իսկ վերինը, որը գտնւում է բութ մատի ուղղութեամբ, արմունկի ոսկրից կարճ է. սա կոչւում է ծղիկ. ձեռքի երրորդ և վերջին մասը քարշ կամ դաստակն է, որ բաղկացած է մի շարք մանր ոսկրներից, որոնք վերջանում են մատների ոսկրներով։


Ձեռքերի ոսկրներին շատ նման են ոտքերի ոսկրները. սրանք էլ բաղկացած են երեք մասերից. առաջինը, որ սկսում է կոնքից և վերջանում է ծնկի մօտ—դա մեր մարմնի ամենից հաստ և մեծ ոսկրն է և անւանւում է ազր և համապատասխանում է ձեռքի կուռին, ապա ծնկից սկսւում է ոտքի երկրորդ մասը՝ արմընք—սա, որպէս եւ ձեռքի բազուկը, բաղկացած է երկու ոսկրներից, առաջինը՝ աւելի հաստ ոսկրը կոչւում է մեծ ոտք, երկրորդը, ետեւինը առաջինից բարակ է. սա ասւում է փոքր ոտք. ապա գալիս է թաթը իր բազմաթիւ ոսկրներով, որոնց մէջ ամե-

Ոսկրի կազմը

նրից մեծը կրուակի ոսկրն է. թաթը վերջանում է մաս-  
կերի ոսկրներով:

15. Այժմ. երբ մենք ծանօթացանք մեր մարմնի բո-  
լոր ոսկրների հետ, տեսնենք թէ ինչ բան է ոսկրը,  
ինչպէս է նա կազմւած և ինչպէս են նրանք միանում  
միմեանց հետ:

Երբ մենք շօշափում ենք ոսկրները, նրանք թւում  
են մեզ միանման կարծր մարմիններ. բայց իսկապէս  
ոսկրի բոլոր մասերն էլ նոյն կարծրութիւնը չունեն. այլ  
ոսկրի միայն արտաքին կեղևն է, որ կարծր է, իսկ այդ  
կեղևի տակ նա աւելի փափուկ ու քնքոյշ է և կազմւած



№ 6. Ոսկրի ներքին կազմը.

մանր, ապուցակման ծակոսիկներից: Կան ոսկրներ, որոնք  
խողովակների են նմանում—այսինքն նրանց մէջը ծակ է  
և լցւած է սպիտակ կամ սևագոյն փափուկ մի նիւթով,  
որը կոչւում է ոսկրի ուղեղ: Ոսկրի արտաքին ամուր կե-  
ղևը անւանւում է ոսկրաւաշկ և նրա միջով է, որ ծծւում  
է արիւնը ոսկրի մէջ և մտնելով տակի ծակոտիների մէջ  
կերակրում է ոսկրին. ոսկրամաշկը ոսկրի ամենակարևոր  
մասն է, առանց որի ոսկրը կփտի:

Ոսկրները մարդի մատաղ հասակում համեմատաբար  
աւելի փափուկ են և միայն յետոյ փոքր առ փոքր նրանք  
հաստանում և կարծրանում են. այդ հեշտ է նկատել  
փոքրիկ երեխայի մարմնի վրայ, մանաւանդ նրա գլխի  
ոսկրների, որոնք, ձեռքով սեղմելիս, ճմում են:

16. Ոսկրները կամ անշարժ միացած են լինում մի-  
մեանց հետ, կամ թէ նրանք միացած են այնպէս, որ

Ոսկրի միացման միջոցները

ճշ-բէ

նրանցից ամեն մէկը կարող է առանձին շարժել. օրի-  
նակ գլխի ոսկրները անշարժ են և մանր ատամներով  
կամ կարերով միմեանց են հագած, իսկ ձեռքերի ոսկր-  
ները միացած են այնպէս, որ ազատ շարժւում են—այս  
վերջին դէպքում, ասում ենք ոսկրները յօդաւորւած են.  
այն տեղերում, ուր մի ոսկրը միանում է միւսի հետ, ոս-  
կրների ծայրերին կայ ոսկրանման փափուկ մի նիւթ,  
որը կոչւում է կոճուկ. կոճուկները պատած են լինում  
խոնաւ մի նիւթով. նրանց ծայրերը շատ ողորկ են  
լինում, որով հեշտանում է ոսկրների շարժումը. այնտեղ,  
ուր ոսկրները յօդաւորւում են, մի ոսկրը ունենում է  
փոս, իսկ միւսը դուրս ընկած գլուխ. այդպէս մի  
գլուխը մտնում է փոսի մէջ, և, շնորհիւ կրճուկի, միւսի  
վրայից հեշտութեամբ սահում է:

17. Յօդերի մէջ և նրանց վրայ լինում են ամուր,  
բարակ, բայց ոչ կարծր կապեր, դրանք են որ կապում,  
միացնում են մի ոսկրը միւսի հետ և թոյլ չեն տալիս  
ոսկրներին բաժանւելու միմեանցից. այդ կապերը կոչ-  
ւում են յօդակապեր կամ ջլեր:

18. Մենք ասացինք, որ մարդու մարմինը բաղկա-  
ցած է պինդ և փափուկ մասերից. պինդ մասերը ոսկր-  
ներն են, իսկ փափուկ մասերն անւանեցինք միս. միսը  
ունի նաև ուրիշ անուն—մկան:

Մեր մարմնի ոսկրները պատած են մկաններով և  
սրանք են, որ մարմնին տալիս են կլորութիւն, գեղեց-  
կութիւն, որոշ ձև, փափկութիւն: Բացի այդ՝ մկաններն  
են, որ շարժում են մարմնի զանազան մասերը թէ զրօից  
և թէ ներսից, և ոչ միայն ոսկրները, այլ և մեր մարմնի  
զանազան գործարանները նոյնպէս պատած են մկաններով:

19. Մկանը կամ միսը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի-  
մեանց հետ խիտ կերպով միացած մանր, բարակ,  
փափուկ թելերի խուրձեր. նրանք զրօից պատած են  
կաշիով, ներսից կարմիր գոյն ունեն. այդ կարմրութիւնը  
առաջանում է նրանից, որ մկանների միջով անցնում են  
արեան մանր խողովակներ կամ արիւնասար անօրկեր:  
Բացի դա մկանների մէջ մենք տեսնում ենք ուրիշ թելեր

Կապեր, յօդեր

Մկաններ

Մկանների կազմը

55-1011

4439-56




էլ—աւելի սպիտակ, մազանման և ճիւղաւորւած—դրանք մեր նեարդերն են: Մկանների մէջ բացի սրիւնատար անօթներից և նեարդերից կան գանազան հաստութեան իւղի փառեր կամ ճարպի շերտեր: Մկանների թելերը իրենք ևս պատած են հաղիւ նկատելի մի թափանցիկ կաշիով՝ որ կոչւում է քաղակ:

Մկանների գործը

20. Մկանների մեծ մասը կամ կպած են մեր ոսկրներին կամ թէ միացած են միմեանց. դրա շնորհիւ ամեն մի շարժում, որ մենք գործում ենք, կամ թէ կատարւում է մեր մարմնի մէջ, լինում է մկանների միջոցով. և որովհետև մկանները փափուկ են, առաձգական՝ ուստի և նրանք հեշտութեամբ կծկւում են և դրանով քաշում, իրար են մօտեցնում այն ոսկրները, որոնցից իրենք կպած են. իսկ երբ ձգւում, երկարում են—միմեանցից հեռացնում և ձգում են նաև մեր ոսկրները կամ մարմնի մասերը:

Մկանների բաժանումը



№ 7. Ձեռքերի մկանները.

ձում, որ մենք դրանց շնորհիւ կատարում ենք մեր կեանքի համար անհրաժեշտ բոլոր գործողութիւնները: Մկանները մի ուրիշ յատկութիւն էլ ունեն—կան

մկաններ, որոնք շարժում են մեր կաւիճի հարեւոյն, այսինքն երբ այդ մենք ենք ցանկանում, կան սակայն մկաններ, որոնք շարժում և գործում են ինքնակամ:

Մեր ձեռքերի, ոտքերի, վզի, երեսի և ընդհանրապէս մեր մարմնի արտաքին մկանների մեծ մասը կամաւոր մկաններից են կազմւած, իսկ մեր ներքին գործարանների մկանները, ինչպէս ստամոքսի, սրտի, ստոծանիի և այլ մկանները ինքնակամ գործող մկաններ են, որոնք գործում են նաև այն ժամանակ, երբ մենք քնած ենք, կամ երբ նոյն իսկ չենք ցանկանում որ գործեն:

Մկանների մարզութիւնը

22. Մեր մարմնի ոյժը եւ շարժողութեան արագութիւնը կախւած է մեր մկանների զարգացման աստիճանից. որքան շատ և կանոնաւոր ենք գործ անում մեր մկանները, այնքան աւելի են զարգանում և այնքան աւելի ամուր և ուժեղ են լինում. դրա համար էլ մարմնամարզութիւնը և ֆիզիքական աշխատանքը մեր առողջութեան, ուրեմն և ոյժի համար մեծ կարևորութիւն ունի:

## II. ՍՆՆԻԱՌՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

23. Մարդի մարմինը գործելու, ուրեմն և ապրելու համար սնունդ է օդ է պահանջում: Սնունդը կամ ուրիշ խօսքով կերակուրը, մտնելով մեր գործարանների մէջ, մարսւում է, այսինքն արիւն է դառնում. այդ արիւնը լցւում, մտնում է մեր մարմնի բոլոր մասերը, կերակրում, թարմացնում և ոյժ է տալիս նրան. ապա նրա անպէտք մասերը այրւում են և մեր մարմինը նորից նոր սննունդ է պահանջում:


Սնունդի օրգանաւորութիւնը

Մեր մարմնին սնունդ և օդ տալու համար մենք ունենք մի շարք գործարաններ, որոնք կոչւում են սննդաւորութեան գործարաններ:

24. Որովհետև արիւնը կազմւած է գանազան պինդ և ջրալի նիւթերից, իսկ այդ նիւթերը նախ քան արիւն դառնալը պէտք է որոշ գործարաններում մի քանի փոփոխութիւններ կրեն, ուստի այն գործարանները, որոնք

Մարսողութեան գործարաններ

ամուր և ջրալի կերակուրները ընդունում և դրանց արիւն դառնալուն օգնում են—կոչւում են մարսողորթեան գործարաններ:




№ 8. Մնդառութեան գործարանները.

Մարսողութեան գործարաններին օգնում են մի քանի ուրիշ գործարաններ, որոնց մէջ պատրաստում են զանազան հիւրեր: Այդ հիւրերը խառնելով մեր ընդունած կերակուրին, փոփոխում են և դրանով հեշտացնում մարսելը: Այն գործարանները, որոնք մարսելու հիւրեր են պատրաստում՝ անւանւում են գեղձեր:

Մարսողութեան գործարանները ունեն մի երկար ճանապարհ, որ սկսւում է քերձից և վերջանում է մի այլ անցքով՝ արբանով: Այդ ճանապարհը զանազան տեղերում զանազան անուններ ունի—սկզբում, որտեղից մենք ընդունում ենք կերակուրը՝ նա կոչւում է քերան, յետոյ քրկոր, յետոյ սաւնոխս և վերջապէս աղիքներ, որով և վերջանում է մարսողութեան գործարանների խողովակը:

25. Քերան: Բերանը այն խոռոչն է, որ կազմւած է երեսի ոսկրներից և նրանցից կազմ մկաններից. այդ խոռոչի առաջի և կողքերի մասում՝ ծնօտների վրայ ամրացած են մեր սաւնները, որոնք մեր ընդունած կերակուրի մարսելուն շատ օգնում են. քանի որ մենք ընդունում ենք ոչ միայն ջրալի, այլ և պինդ կերակուրներ: Սաւնները ամուր կերակուրները, լինեն նրանք հաց միս թէ պտուղ և այլ պինդ կերակուր, կտրատում են, մանրացնում, ծամում, լաւ խառնում. միաժամանակ ատամներին օգնում է մեր բերնի մի ուրիշ շատ շարժուն մկան—լեզուն, որ կերակուրը շուռ է տալիս, մի կողմից միւս կողմը տանում, զգում է նրա փափուկ կամ կոշտ լինելը և ապա՝ երբ կերակուրը բաւականին փափկած և պատրաստւած է լինում, ուղարկում է նրան բերնի ետեւի մասը՝ զէպի կրանը:



№ 9. Բերան և թքի գեղձերը.

26. Թէ ատամները և թէ լեզուն ոչինչ չէին կարող անել, եթէ բերնի մէջ կերակուրին

Մարսողորթեան նաւապարհը

Բերան և նրա միջի գործարանները


Թուփ և նրա գեղձերը

չխառնւէր մի ուրիշ բան՝ քոֆը. սա է, որ ընդունած չոր, ամուր կերակուրը բերնում խոնաւացնում, փափկացնում է և նոյն իսկ ներքին փոփոխութեան ենթարկում և ապա—այդ թանձր շփոթը մարսելու համար նախապատրաստում:

Թոֆը մի ջրալի հիւթ է, որ պատրաստուում է մեր ականջների էտեում և նրա ցածի մասում, նոյնպէս և լեզւի տակին՝ յատուկ գործարաններում և մանր խողովակներով ծորում է բերնի մէջ. այն գործարանները, ուր պատրաստուում է թուքի հիւթը՝ կոչւում են քոֆի գեղձեր: Ահա այդ գեղձերն են, որ թուք պատրաստելով՝ մի կողմից չոր կերակուրներն են թացացնում, նրանց հեշտ մարսելու համար պատրաստում, միւս կողմից՝ մեր բերանի ներսը միշտ խոնաւ պահում և չորանալուց պաշտպանում:

Ասամներ

27. Մեր մարտողութեան համար այդքան կարևոր գործ կատարող *ասամները*, ինչպէս ասել ենք, ամրացած են մեր ծնօտների փոսիկների մէջ և իրենց վերին սպիտակ, փայլուն մասերով են միայն երևում: Ատամների այն մասը, որ ծածկւած է մեր ծնօտների մէջ, կոչւում է ատամի *արմատ*, իսկ փայլուն, սպիտակ մասը՝ ատամի *պրակ*:



№ 10, Ատամներ

ատամի *պրակ*: Պսակը, ինչպէս ասացինք, սպիտակ է և փայլուն—դա նրանից է, որ նա պատած է մի կարծր ապակիանման կեղևով, որ ասում է *եմալ*. էմալը պաշտպանում է ատամները փշրելուց և փտելուց ու հէնց որ նրա մի կէտը կարծր կամ թթու և քաղցր բաներ ուտելուց փշանում ու թափւում է—ատամն էլ սկսում է ցաւել և

փշանալ: Թէ էմալը ամբողջ և թէ ատամը սուղջ պահելու համար անհրաժեշտ է ատամները մաքուր պահել, բերանը կերակուր ուտելուց յետոյ սրբել և ատամների արանքներում մնացած մսի կամ կերակրի այլ մասերը փափուկ չփոփով մաքրել: իսկ էմալը ամուլի փոշիով կամ յատուկ ատամնափոշիով սրբել:

Մարդ, երբ ծնւում է, ատամներ չի ունենում և նրանք դուրս են գալիս հետզհետէ՝ սկսած 7—8 ամսական հասակից. մինչև երրորդ տարին դուրս են գալիս քսան ատամներ, որոնք 7—14 տարեկան դառնալը հետզհետէ թափւում են և զրանց տեղը դուրս են գալիս *մշտական ասամներ* և արդէն 20 տարեկան հասակում մարդ ունենում է բոլոր 32 ատամները:

Ասամների  
սեակները

28. Բոլոր ատամները միանման չեն, այլ տարբեր. այսպէս բերնի առաջին մասում կան 8 ատամներ, չորս-չորս հատ ամեն ծնօտի վրայ—զրանք *կտրիկներն* են, զրանց կողքերին աջ և ձախ գտնւում են մի մի հատ սուր ատամներ—ընդամենը չորս հատ, զրանք *ժանիկներն* են, իսկ ժանիքների կողքին՝ վերև և ներքև, աջ և ձախ կան հինգ-հինգ հատ տափակ, ճիւղաւոր ատամներ—զրանք *սեղանաւասամներն* են, թւով 20 հատ: Սեղանատամների վերջին երկուսը կոչւում են *խնասուրեան* ատամներ, որովհետև նրանք դուրս են գալիս 20 տարեկան հասակում:

Կլան

29. Բերնից կերակուրը լեզւի օգնութեամբ գնում է դէպի մեր բերնի խորքը. այդտեղ կայ մի անցք—որը կոչւում է *կլան*. կլանի առջև կայ կախւած մսի կարմիր մի փշտակ, որը կոչւում է *լեզուակ*, սա պաշտպանում է բլթի անցքը, որ նրա մէջ կողմնակի բաներ չընկնեն:

Կլանի ետևում՝ դէպի ցած երկու անցք է բացւում, առաջինը օդ մտնելու համար է, իսկ նրա ետևինը՝ կերակուրի համար. երբ կերակուրը հասնում է այդտեղ՝ անցքը իսկոյն փակւում է և կերակուրը կլանից գնում է դէպի որկոր:


Որկոր

30. Որկորը երկար, ձգւող ու փափուկ մի խողովակ է: Նրա միջի մասում գտնւում են երկարութեամբ և լայնու-

Թեամբ մի շարք հարթ մկաններ, որոնք, հէնց որ կերակուրը մտնում է այդտեղ՝ սկսում են կծկել ու ձգել, շնորհիւ դրան կերակուրը գնում է խողովակի միջով ցած և մտնում է մարսողութեան մի այլ գործարան—*usumofu*:

Usamofu  
և նրա  
հիւքերը

31. *Usamofu* պարկի ձև ունի և գտնուում է կրծքից ցած, փոքր ինչ դէպի ձախ, կրծքի խոռոչը բաժանող մի այլ գործարանի՝ *usnodusihhi* տակ: Ստամոքսը երբեմն շար-




№ 11. Ստամոքս.

ժուում, նոյն իսկ շուռ է գալիս: Ստամոքսի պատերը ունեն ինքնակամ շարժող մկաններ, մանաւանդ մուտքի և ելքի մօտ. նրա պատերը պատած են միմեանց վրայ դարսւած գեղձերով. այս գեղձերից, որ կոչւում են *usamofu*ի *գեղձեր*, դուրս է գալիս մի ուրիշ հիւթ, — ստամոքսի հիւթը, որը ունի փոքր ինչ թթու և աղի համ:


Հէնց որ կերակուրը մտնում է ստամոքս, իսկոյն նրա միւս ծայրը, մուտքը՝ օդանման մկանների շնորհիւ կծկւում, փակւում է, իսկ պատերից ծորում է ստամոքսի հիւթը և խանութում կերակուրի հետ. այդ ժամանակ ստամոքսը սկսում է շարժել, գալարել և նրա ցածի մասը փոքր ինչ բարձրանում, ուռչում է: Այստեղ, այս և ուրիշ հիւթերի ազդեցութեան տակ, կերակուրը հալելով դառնում է միանման *խուսպ* և պատրաստւում է մարսելու, որին օգնում է ստամոքսի պատերից դուրս եկող մի

ուրիշ հիւթ, որ կրում է *պէպսին* անուներ. սա առանձնապէս ազդում է իւզալի և ծանր մարսող մասերի վրայ: Կերակուրը ստամոքսում մի քանի ժամ է մնում, ապա փականը ինքնաբերաբար բացւում է և այդտեղից այդ քուսպը գնում է դէպի աղիքներ:



№ 12. Ստամոքսի ներսի ծալքերը.


32. Ստամոքսի շարունակութիւնը կազմում են աղիք- Աղիքներ և Աղիքներ, որոնք երկու տեսակ են, սկզբում բարակ աղիքները, յետոյ հաստ աղիքները: Բարակ աղիքների ներսի



№ 13, Բարակ և հաստ աղիքներ.

պատերը իրենց մէջ պարունակում են մկանային թելեր (անկւածներ), իսկ պատերի մէջ կան բազմաթիւ գեղձեր, պտուկներ եւ առշայիւն աւօրներ, որոնք և ծծելու յատկութիւն ունեն:

Հաստ աղիքների ներսը հարթ է և նրանցում անօթներ չկան. բարակ աղիքների ընդհանուր երկայնութիւնը 5—8 արշին է և զանազան մասերում զանազան անուններ ունի. օրինակ՝ ստամոքսից դուրս գալու մասում, մօտ 8—10 վերջօկ երկարութեամբ, անւանւում է *սասներկումասներայ աղիք*: Բարակ աղիքները վերջանում են հաստ աղիքներով, սրանց երկարութիւնը 2 1/2 արշին է. նրա սկզբում կայ մի որթանման աղիքի կտոր, որը կոչւում է



№ 14. Ստոծանի և տասներկու մատնեայ աղիքը.

կոյր աղիք, ուր, եթէ ընկնում են կեռասի, բալի կորիզներ, կամ մի ուրիշ կարծր բան, այս վերջինը այնտեղից դուրս գալ չի կարողանում և դրա շնորհիւ կոյր աղիքը բոքբորւում է, սկսւում են խիստ ցաւեր և երբեմն մարդ նոյն իսկ մեռնում է:

Հաստ աղիքի վերջին մասը կոչւում է *ուղիղ աղիք*, որի վերջում գտնւում է *սրբանը*, ուր դարձեալ կայ կծկող փական կամ մկաններ:

33. Երբ կերակուրի քուսպը ստամոքսից գալիս մըտնում է տասներկու մատնեայ աղիքը, այստեղ սրան խառնւում է մի յատուկ հիւթ՝ *լեղին*, որ պատրաստւում է մեր ստամոքսի աջ կողմում գտնւած մի մեծ գեղձի՝ *լեարդի* մէջ. այդտեղից լեղին, որը դառը և բացզեղնագոյն հեղուկ է, թափւում է մի փոքրիկ փամփուշտի՝ *լեղի փամ-*

Լեղի,  
լեարդ


*լիուշի* մէջ և մի խողովակով՝ *լեղասարոյ* անցնելով, գալիս թափւում է տասներկու մատնեայ աղիքի մէջ:

34. Լեղին, խառնելով քուսպի իւղի հետ, նրան մանրացնում, մանր կաթիլներ է շինում, իսկ մի ուրիշ մեծ գեղձ, *սասնոխի սակի գեղձը*, — փոփոխում է քուսպի միջի չլուծւած նիւթերը և նրանց վերջնականապէս պատրաստում է մարսելուն կամ ծծելուն ու արիւն դառնալուն:

Կերակուրի  
մարսելը  
աղիքներում

35. Երբ քուսպը աղիքների պատերի մէջ ծծւելով գնում է դէպի հաստ աղիքները — այստեղ նրա ջրային մասերից շատերը արդէն ծծւած են լինում և մնում է

Չմարսւած  
կերակուրը



№ 15. Լեարդը և լեղի փամփուշտը.

աղիքների կերակուրի դժւարամարս կամ անմարսելի, պինդ մասերը, որոնք, անցնելով հաստ աղիքների միջով, գալիս և սրբանից դուրս են գնում:

Կ Ե Ր Ա Կ Ո Ւ Ր Ը

36. Որովհետև կերակուրն է, որ պատրաստւում է մեր մարմնի համար հարկաւոր բոլոր նիւթերը, դրա համար էլ համառօտ կերպով ծանօթանանք նախ մարմնի համեմատանը մասերի — (անկւածների) կազմի հետ. դրանից կիմանանք թէ մարդին ինչ կերակուրներ են հարկաւոր:

Ինչ հիւրքեր է պահանջում մարմինը

37. Մարդի մարմնի կշռի ամենամեծ մասը (67%) Ջուր կազմում է ջուրը, որը թէ մեր մարմնի միջի արեան և

Ջուր

III. ԱՐԵԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹԻՒՆԸ

Թէ այլ մասերի գլխաւոր մասն է. դրա համար էլ ջուրը և ջրալի բոլոր կերակուրներն ու ըմպելիքները, ինչպէս թէյ, կաթ, սուրճ, զինի և այլն մեր մարմնին տալիս են հարկաւոր ջուր, որը սակայն մեծ մասով նորից դուրս է գալիս թէ մեր կաշւի (քրտինք), թէ երկկամուրջներին (մէզ) և թէ թոքերի (բերնի գոլորշի) միջոցաւ:

Սպիտակուցային ցիւբեր մակարդուում է

38. Մեր մարմինը կազմող երկրորդ գլխաւոր նիւթը— սպիտակուցային մարմիններն են, որոնք, ինչպէս ձի սպիտակուցը, բարձր տաքութեան ազդեցութեան տակ ամրանում և մակարդուում է: Մեր մսի (մկանների), արեան, ուղեղի և նեարդերի մէջ սպիտակուցը ամենամեծ մասն է կազմում և ջրից յետոյ, մեր մարմնի ծանրութեան ամենագլխաւորը (15<sup>0</sup>/<sub>0</sub>):

Սոսնձային, նարպային և հանգային ցիւբեր

39. Երրորդ տեղը բռնում են սոսնձային մասերը (5<sup>0</sup>/<sub>0</sub>). սրանք մեր ոսկրների կռճուկների և կաշւի գլխաւոր մարմինն են կազմում. չորրորդ տեղը (2<sup>1</sup>/<sub>2</sub><sup>0</sup>/<sub>0</sub>) բռնում է իւզը— ճարպային նիւթերը: Ճարպով լի են մեր մարմնի զանազան մասերը, նրանով պատած են մեր մկանները, նեարդերը և դրանց սիջի շերտերը: Վերջապէս մեր մարմնին հարկաւոր են նաև հանքային նիւթեր— այն է կիր, ֆոսֆոր, աղ, ծծումբ, երկաթ, որոնք մտնում են թէ արեան, թէ ոսկրների և թէ եղջիւրային մասերի մէջ:

Ի՞նչ մասերից է կազմւած մեր կերակուրը

40. Այս նիւթերից որն էլ որ պակաս լինի մեր մարմնի մէջ, նա՝ մարմինը կվնասուի, կթուլանայ և վերջապէս կհիւանդանայ. ահա թէ ինչու մենք պէտք է այնպիսի կերակուրներ ընդունենք, որոնք մեր մարմնի մէջ մտցնեն այդ բոլոր նիւթերը: Այդ պատճառով էլ մենք միայն մի տեսակ կերակուր չենք ուտում, այլ զանազան տեսակ. օրինակ՝ անասունների միս, կաթ, ձևեր, հաց և այլն, որոնք մեր մարմնին տալիս են սպիտակուցային նիւթեր. իւզը, կաթի միջի կարգը մեր մարմնի համար պատրաստում են ճարպային մասեր, իսկ զանազան շաքարային և օսլային նիւթերը, ինչպէս գետնախնձոր, շաքար, միրգ, հաց, պատրաստում են *sulfur* իւր *arsen* (ածխածնաթուրային) նիւթեր:

41. Մենք տեսանք, որ ունենք մի շարք գործարաններ, որոնք սնունդ, կերակուր են ընդունում և, դրան մտցնելով մեր մարմնի մէջ, այնտեղ մարսում, այսինքն արիւն են պատրաստում և այդ արիւնով կերակրում մեր մարմնի բոլոր մասերը:


Արիւն

Եթէ մենք ուզում ենք մեր աչքով տեսնել և հաւատալ թէ, ճիշտ որ մեր մարմնի բոլոր անկիւնների, բոլոր մասերի մէջ արիւն կայ— դրա համար հարկաւոր է մեզ ասեղի ծայրով ծակել մեր մարմնի մի որևէ մաս և մենք կտեսնենք թէ ինչպէս ծակած տեղից դուրս է գալիս բաց կարմրագոյն մի հեղուկ— դա արիւնն է: Եւ որտեղ էլ որ մենք ծակենք— նոյն բանը կստանանք— բոլոր տեղերից էլ արիւն դուրս կգայ. միայն հղունգներն են, որ իրենց մէջ արիւն չունեն. այս փորձը ցոյց է տալիս, որ մեր ամբողջ մարմինը լիքն է արիւնով: Եւ ճիշտ որ, հաշւած է, որ արիւնը կազմում է մեր մարմնի կշռի մի եօթերորդ մասը, կամ ուրիշ խօսքով հասակն առած մարդու մարմնի մէջ կայ 18—22 ֆունտ արիւն:

Ընչից է կազմւած այն արիւնը, որ այդքան մեծ պաշտօն է կատարում մեր կեանքի համար:

42. Եթէ մենք խոշորացոյցի տակ քննենք մեր արիւնը, կտեսնենք, որ նա բաղկացած է երկու տեսակ մասերից՝ ամենամեծ մասը թափանցիկ, մատների տակ ձգւող մի հեղուկ է, միւսը այդ հեղուկի մէջ լողացող կարմիր գնձակներ են. թափանցիկ հեղուկը անւանւում է սպլազմա. ուրեմն մեր արեանը կարմիր գոյն տուողը իսկապէս այդ կարմիր գնձակներն են: Այդ գնձակները բոլորաձև են և տափակ— դրանք ազատ

Արեան բաղադրիչ մասերը




№ 16. Արեան գնձակները.

լողում են պլազմայի մէջ և անցնում մեր մարմնի արիւնատար անօթներին միջից:

Արեան գնահատուցները

43. Բացի արեան կարմիր գնդակներից, պլազմայի մէջ մենք կտեսնենք էլի գնդակներ, միայն թէ սրանք սպիտակ են և նոյնպէս թափանցիկ. դա առիշն է, որը նոյնպէս գտնուում է արեան մէջ: Թէ որքան մանր են արեան կարմիր գնդակները, բաւական է ասել, որ քորոցի ծայրին կպած արեան մէջ գտնուում են մօտ 5 միլիօն կարմիր գնդակիկներ և մօտ 14 հազար աւշային գնդակներ: Թէ պլազման, թէ կարմիր գնդակները և թէ աւիշը իրենց մէջ պարունակում են նոյն նիւթերը, ինչ որ մենք որպէս կերակուր ընդունել ենք, այսինքն ջուր, սպիտակուց, իւր, շաքար, աղեր, երկաթ և այլն: Սրանից մենք եզրակացնում ենք, որ կերակուրը, մտնելով մեր գործարանների մէջ, ճիշտ որ արին է դարձել:



№ 17. Սիրտը.

մէջ գտնուի մի գործարան, որ արիւնը մի կողմից մղի մարմնի ամենահեռուոր անկիւնները, իսկ միւս կողմից քաշի, ժողովի փշացած արիւնը և նրա մասերը:

Մենք ասացինք, որ մարմնի բոլոր մասերումն էլ արիւն կայ, որ նա մտնում է ամեն տեղ և, մի կողմից նորոգում, սնունդ է տալիս մեր մարմնի զանազան մասերին, միւս կողմից մարմնի մէջ գտնուած և արդէն փշացած մասերը դուրս է բերում:

Որպէս զի արիւնը կարողանայ մտնել մեր մարմնի բոլոր մասերը և այնտեղից դուրս գայ — դրա համար անհրաժեշտ է, որ մեր մարմնի


Էւ իրաւ որ, մարմնի մէջ կայ այդպիսի մի գործարան և այդ գործարանը սիրտն է:

44. Սիրտը գտնուում է մեր կրծքի խոռոչում, փոքր ինչ դէպի ձախ: Նա մկաններից կազմուած, սեղմուած բռնունցքի մեծութիւն ունեցող մի պարկ է — ցածի մասում նեղ և սուր, իսկ վերին մասում լայն: Սիրտը փաթաթուած է մի փառի մէջ, որ կոչւում է *սրտի շապիկ*. սա պաշտպանում է մեր կեանքի համար կարևոր այդ գործարանը:

Սիրտը եւ նրա կազմը

Սրտի ներսի մասը, վերեւից դէպի ներքեւ, մի *միջնորմով* (պատով) բաժանուում է երկու հաւասար կէսերի — *աջ* և *ձախ սրտի*, իսկ ամեն մի կէսը լայնութեամբ բաժանուում է դարձեալ երկու մասերի, որոնցից վերինը աւելի փոքր է և կոչւում է *նախասիրտ*, իսկ ցածինը աւելի մեծ և սրտի *փորիկ* է անուանուում:

Եւ այսպէս սիրտը ունի չորս խորշեր, այն է՝ *աջ նախասիրտ* և *աջ փորիկ*, *ձախ նախասիրտ* և *ձախ փորիկ*. ամեն մի նախասրտից դէպի փորիկները կայ մի դուռ կամ *փակասն*, այն ինչ նախասրտից նախասիրտ, կամ փորիկից փորիկ ոչ մի անցք և հաղորդակցութիւն չկայ:



Սրտի գործունէութիւնը

№ 18. Սրտի խորշերը.


45. Սրտի պատերը, ինչպէս ասացինք, կազմուած են մկաններից. այդ մկանները, ինչպէս և բոլոր մեր մկանները, կծկւելու և ձգւելու ընդունակութիւն ունեն և սրտի մկանները այն մկաններիցն են, որոնք կծկուում և ձգուում են ինքնաբերաբար, առանց որ մենք ուզենք կամ չուզենք: Եւ բերաբար, առանց որ մենք ուզենք կամ չուզենք է, որ նա մղում է սրտի հէնց այդ կծկւել ու ձգւելով է, որ նա մղում է մարմնի զանազան մասեր, մէջ գտնուած արիւնը դէպի

խակ միւս կողմից մարմնի զանազան մասերից իր մէջ է ժողովում փշացած արիւնը:

Արիւն-  
սար անօր-  
ներ

46. Արիւնը մարմնի մէջ տանելու և այնտեղից փշացած մասերը ժողովելու համար, մենք ունենք յատուկ գործարաններ. դրանք մեր երակներն են — այսինքն զանազան մեծութեան և հաստութեան խողովակներ, որոնց միջով հոսում է արիւնը: Այդ խողովակները կոչւում են նաև *արիւնասար անօրներ*:

Չարկե-  
րակներ եւ  
վեճաներ



№ 19. Վեճաների և զարկերակների գործը.

ները (վեճաները) աւելի վերին, դրսի մասում. նրանք այն կապույտ երակներն են, որ երևում են մեր կաշի


տակին, մանաւանդ ձեռքերի, ոտքերի թաթերի որոշ տեղերում:

Չարկերակներից արիւնը հոսում է արագ և զարկերով, այն ինչ վերաների միջից նա անցնում է հանգիստ և միանման: Չարկերակների միջով արեան հոսելը մեր մարմնի մի քանի տեղերում մենք կարող ենք նոյն իսկ մատներով շօշափել—այդ տեղերը մեր ձեռքի և ոտքի թաթերի մօտ են, կամ քներակների վրայ, եթէ մատներս զննք նրանց վրայ, կզզանք, թէ ինչպէս այդ տեղերում երակները զարկեր են տալիս և բժիշկը, ցանկանալով մեր սրտի գործողութիւնը իմանայ, ձեռքով բռնում է զարկերակը և ժամացոյցի վրայ համարում է զարկերի թիւը. առողջ մարդի զարկերակը մի րոպէում բաբախում է 70—80 անգամ, իսկ երեխայի զարկերակը նոյն միջոցում՝ 110—120 անգամ:

48. Այժմ ծանօթանանք, թէ ինչպէս է սիրտը արիւնը տանում դէպի մարմնի և ինչպէս է արիւնը նորից նրա մէջ ժողովում: Սրտի հետ անմիջապէս միացած են ամենազլխաւոր և ամենից հաստ արիւնատար անօթները—այսինքն երակներն ու զարկերակները—դրանք թւով ութ հատ են, որից երկուսը զարկերակներն են և ծառայում են մաքուր արիւնը սրտից տանելու համար, իսկ վեց հատը վեճաներ են—սրանց միջով վատ արիւնն է մտնում սիրտը: Չարկերակներից ամենից մեծը, որը և մեր երակներից ամենից մեծը և հաստն է կոչւում է *աօրսա*. սա դուրս է գալիս սրտի ձախ փորիկից. միւս զարկերակը աւելի փոքր է և դուրս է գալիս աջ փորիկից ու գնում է դէպի թոքերը և կոչւում է *թոքերի զարկերակ*: Վեճաներից չորսը թոքերից գալիս են և թափւում աջ նախասիրտ: Կրանցից մէկը կոչւում է *իջևող-վեճա*. սա դիւրից, մարմնի վերին մասերից, ձեռքերից բերում է արիւնը դէպի սիրտ, միւսը՝ *բարձրացողը* բերում է արիւնը մարմնի միւս մասերից դէպի սիրտը. այդ երկուսն էլ սրտի մէջ թափւելուց առաջ միանում են մի երակի մէջ: Երբ սրտի մկանները սկսում են կծկւել—այն ժամանակ արիւնը սեղմւելով դուրս է գալիս. իսկ երբ սիրտը լայնանում է,

Արեան  
հաւա-  
պահի

արիւնը նորից թափուում է նրա մէջ. բայց բանը նրանումն է, որ երբ կծկուում է սրտի փորիկը, այն ժամանակ բացուում է նախասիրտը և ընդհակառակը, երբ կրծկընում է նախասիրտը՝ բացուում է փորիկը. և որովհետև նախասրտի և փորիկի մէջ կան դռներ, որոնք բացուում և



№ 20. Արեան շրջանառութեան ճանապարհը.

փակուում են, ուստի հէնց որ նախասիրտը կծկուում է, նա մղում է արիւնը դէպի փորիկ, յետոյ կծկւած նախասիրտը նորից բացուում է և նրա մէջ թափուում է արեան

նոր հոսանք ու այսպէս շարունակուում է, որով մի ընդհանում արիւնը, անցնելով ամբողջ մարմնի միջով, նորից, բայց այս անգամ հակառակ կողմից, գալիս թափուում է սրտի մէջ:

Սրտի այս կծկելն ու բացելը կամ նրա փականների բացելն ու փակելը առաջ է բերում *արտի քաքախում*, որը մենք կարող ենք լսել, եթէ ականջներս դնենք մեր կրծքի վրայ:

Այժմ ծանոթանանք թէ ինչպէս է արիւնը շարժուում մեր մարմնի մէջ:

49. Սրտից, այսինքն ձախ փորիկից, մաքուր, վարդագոյն կարմիր արիւնը մտնում է մեծ զարկերակ՝ այսինքն ասորտա—և նրա միջից անցնելով, գնում է և, բաժանելով անթիւ զարկերակների, մտնում է մարմնի բոլոր մասերը, այստեղ նա, կերակուր տալով մարմնի գանազան մասերին նորոգում է մեր մարմնի բոլոր անկւածները, որտեղից մանր թելանման արեան անոթների մէջ ժողոված մեր անկւածների փշացած մասերը առնելով իր հետ, դուրս է գալիս դրանց միջից և վեհանների մէջ է ընկնում. այստեղ արդէն բաց վարդագոյն արիւնը փոխուում է մոյգ կարմիր, կապտագոյն արեան, որը և գալիս է նրանց միջով դէպի սիրտը և թափուում է աջ նախասիրտ: Այն նախասիրտը այդ արիւնը մղում է դէպի աջ փորիկը, որտեղից փշացած արիւնը թոքերի վեհանների միջով գնում է դէպի թոքերը. թոքերի փամփուռների շուրջը փշացած արիւնը, միանալով օդի թթւածնին, մաքրուում է և այդտեղից կարմիր, ալ գոյն ընդունելով, գալիս մտնում է ձախ նախասիրտ. ապա մտնում է ձախ սրտի փորիկ և այդտեղից կրկին մտնում ասորտա և նորից իր առաջւայ շրջանը կատարում:

Արեան մաքրումը

50. Այդպիսով արիւնը երկու շրջան է կատարում— մէկը ձախ փորիկից, ասորտայի միջով՝ անցնելով ամբողջ մարմնից, գալիս թափուում է աջ նախասիրտ—սա արեան մեծ շրջանառութիւնն է. երկրորդ՝ աջ նախասրտից փշացած արիւնը գնում է աջ փորիկ ու այդտեղից գնում է թոքեր, թոքերի մէջ մաքրուում է և գալիս թափուում

Արեան մեծ և փոքր երկու շրջանառութիւն

ձախ նախասիրտը — դա արեան փոխրիկ շրջանառու-  
թիւնն է:

Պէտք է ասել, որ փշացած արեան մի մասը, նախքան  
սիրտ գալը, մտնում է մեզ ծանօթ մի այլ մեծ գործա-  
րանի՝ լեարդի մէջ և այստեղ, մասամբ մաքրելով, նորից  
թափւում է սիրտ:

#### IV. ԱԻՇԱՅԻՆ ԵՒ ԿԱԹՆԱՅԻՆ ԱՆՕԹՆԵՐ

Բացի արիւնատար անօթներից մեր մարմնի մէջ  
կան ուրիշ նոյնպէս մանր, բարակ խողովակներ, որոնք  
անւանւում են աշային անօթներ:

Աշային անօթները տեղ տեղ հաստանում, լայնա-  
նում են և դառնում են յատուկ գործարաններ — դրանք  
աշային գեղձերն են, այսինքն գործարաններ, ուր պատ-  
րաստում է աշային հիւթը: Աշային հիւթի հետ մենք  
ծանօթացանք, երբ քննում էինք արիւնը և տեսանք, որ  
նրանք կազմւած են մաղձային թափանցիկ, գունատ գըն-  
տակներից: Մաղձաւիշը անօթների միջոց անցնելով գա-  
լիս կենտրոնանում է մի մեծ խողովակի մէջ, որը վրտն-  
ւում է կրծքի խոռոչում և անւանւում է կրծքի աւազան.  
այստեղից նա խառնւում է վեներներից մէկի հետ: Աւիշը  
սննդատու հեղուկ է, որ իր հիւթը ընդունում է արիւնա-  
տար անօթների միջից և ինքն էլ իր սննդարար  
մասերով կերակրում մեր մարմնի զանազան գործարան-  
ներ. ապա, ընդունելով նրանց միջի փշացած մասերը,  
աշային անօթներով տանում թափում է վեներայի մէջ:  
Աւիշը իր անգոյն գնդակները ժողովում է մի այլ գոր-  
ծարանի, փայծեղի մէջ-որտեղից արդէն խառնւում է  
արեան հետ: Փայծեղը մոյգ, կարմրագոյն փոքրիկ գոր-  
ծարան է, որը կպած է ստամոքսի ձախ կողմից:

52. Բացի աւիշից մեր մարմնի մէջ կայ և մի ուրիշ  
հիւթ — դա կարն է, որը, առաջանալով մեր կերած կերա-  
կուրներից, ծծւում է յատուկ պտուկներով և այդտեղից  
առանձին անօթներով գնում թափւում է կրծքի աշային  
աւազանը: Կաթը աւիշից զանազանւում է նրանով, որ


նրա մէջ գտնւում է իւղի մեծ քանակ. կաթը այդ աւա-  
զանի միջից յատուկ անօթներով դուրս է գալիս և լցնե-  
լով կանանց ստինքսը հնարաւորութիւն է տալիս այդ  
զիւրամարսելի սննդով — կաթով կերակրել իրենց զաւակ-  
ներին:

#### V ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

53. Շնչառութեան գործարանները ծառայում են օդ  
ընդունելու, նրան ներս՝ դէպի թոքերը տանելու (ներշնչե-  
լու), այնտեղ գտնւած փշացած արիւնը մաքրելու և փշացած  
զազային մասերը դուրս բերելու (արտաշնչելու) համար:

Շնչառու-  
թեան հա-  
նապարհը

Շնչառութեան գոր-  
ծարանները սկըս-  
ւում են բերնում և  
քթի անցքերում, ո-  
րոնց միջից դրսի  
օդը ներս է մըտ-  
նում, ապա նա անց-  
նում է կոկորդ, այդ-  
տեղից մտնում է  
շնչափող և շնչա-  
փողից վերջապէս  
անցնում է թո-  
քերը: Նոյն ճանա-  
պարհով, միայն հա-  
կառակ կարգով, օ-  
դը նորից դուրս է  
գալիս շնչառու-  
թեան գործարան-  
ների միջից:



№ 21. Բերան և կոկորդ

54. Բերնի մա-  
սին խօսելիս մենք  
ասեցինք, որ բերնի և քթի խոռոչները բերնի խորքում  
միանում են և օդը, ներս մտնելով թէ բերնից և թէ քթի  
անցքից, գնում է նախ կոկորդ:

Բերան,  
փք, կո-  
կորդ, քրն-  
չափող


Կարնային  
անօթներ

Կոկորդը գտնուում է մեր բերնի խորքում, որկորի առաջև, նա բաղկացած է մի շարք միմեանց վրայ դարսւած ուռուցիկ կրճուկներից. նա նման է կարճ խողովակի, որը, շնորհիւ մի քանի մկանների, շարժուում է:

Կոկորդի սկզբում, մուտքի առաջ կայ մի փական, որը փակուում է, հէնց որ նրան օդից բացի մի ուրիշ մարմին է կաշում. դա կոկորդի փակասնն է: Նոյն տեղում, անցքի վրայ գտնուում են ճայնակասն շարերը. դրանք բարակ թաղանթներ են. և օդը անցքից թէ ներս մըտնելու և թէ դուրս գալու կաշում է այդ լարերին և նրանք, նայելով օդը դուրս հանելու համար մեր գործ դըրած ոչժին, զանազան ձայներ են արձակում:

Կոկորդի մէջտեղում կայ մի ուռուցիկ կրճուկ, որը նոյն իսկ դրսից պարանոցի վրայ երևում է սա անւանւում է Ադաւի խնձոր:

Թոքեր



№ 22. Ջնշափող և թոքերի կմախք.

բերին ամբացած են փոքրիկ, շատ բարակ պատեր ունեցող փամփուշտիկներ. շնշափողը նմանուում է երկու ճիւղերի բաժանւած խաղողի ողկոյցի, որի մէջ դադարկ խողովակ է, իսկ խաղողի տեղ՝ փամփուշտիկներն են:

55. Կոկորդի անմիջական շարունակութիւնն է կազմում շնշափողը: Սա երկար, մի շարք (20) կրճուկներից կազմւած խողովակ է, որը ցածում բաժանւում է երկու ճիւղերի՝ աջ եւ ձախ. ամեն մի ճիւղը ճիւղաւորւում է աւելի բարակ խողովակների, իսկ սրանք բաժանւում են աւելի մանր ճիւղերի, որոնց ծայրերին ամբացած են փոքրիկ, շատ բարակ պատեր ունեցող փամփուշտիկներ. շնշափողը նմանուում է երկու ճիւղերի բաժանւած խաղողի ողկոյցի, որի մէջ դադարկ խողովակ է, իսկ խաղողի տեղ՝ փամփուշտիկներն են:


Ջնշափողը իր բոլոր ճիւղերով կազմում է մեր շնշառութեան ամենակարեւոր գործարանի՝ թոքերի կմախքը:

Թոքերը գտնուում են կրծքի խոռոչում, ամեն մի կողմում մի հատ և երկար քսակների տեսք ունեն: Թոքերը շատ փափուկ են ու ձգւող և նման են սպունգի. նրանք պատած են մի թաղանթով, որ կոչւում է թոքերի շապիկ:

Թոքերը, ինչպէս ասեցինք, բաժանւում են երկուսի— աջ և ձախ թոքի, սրանք վերւում աւելի նեղ են, իսկ ցածի մասում՝ լայնացած:

Ստոմանի

56. Թոքերը միեւնոյն մեծութիւնը չունեն, այլ աջ թոքը ձախից լայն է, աւելի կարճ և բաժանւած է երկու մասերի. այստեղ նրանք իջած են մեր կրծքի խոռոչում գտնւած մկաններից կազմւած մի պատի վրայ, որը կոչւում է ստոմանի. սա բաժանւում է կրծքի խոռոչը երկու մասի. վերին մասում թոքերն են և սիրտը, իսկ ցածի մասում—ստամոքսը, լիարզը և այն բոլոր գործարանները, որոնք ստամոքսից ցած են: Ստոմանին իր միջին մասով ներս է մտնում երկու թոքերի մէջ և դրանով թոքերին տալիս է գմբէթի ձև:



№ 23. Աջ և ձախ թոքեր.

57. Երբ մենք օդը ներս ենք շնչում, այն ժամանակ նա, անցնելով շնշափողի գլխաւոր խողովակի միջից, մտնում է նրա ճիւղերի մէջ և այդտեղից գնում է դէպի մանր խողովակները ու մտնում փամփուշտիկների մէջ, որոնք և ուռչում են. ուռչելով, թոքերը բարձրանում են և բարձրացնում մեր ողջ կուրծքն ու կողերը:

Թոքերի գործուեկութիւնը

Իսկ երբ օդը դուրս է գալիս—փամփուշտիկները դադարկւում, փոքրանում են, որով մեր կուրծքն էլ իջնում, նստում է:

Սրտի մասին երբ խօսում էինք, ասեցինք, որ փշա-  
ցած արիւնը վեճաներից գալիս մտնում է թոքերի մէջ  
և այստեղ նորոգելով և թարմանալով նորից գնում է  
սիրտ և այդտեղից արդէն որպէս գարկերակային մաքուր  
արիւն տարածւում է ամբողջ մարմնի մէջ:

Այժմ անոններ ինչպէս և ինչո՞ւ է վատ արիւնը թո-  
քերի մէջ թարմանում:

Օդը, բո-  
ւերը և  
արիւնը

58. Այն օդը, որ մենք շնչում ենք, բաղկացած է եր-  
կու տարրերից—քրուածնից և բորակածնից: Թթւածինը,  
խառնելով գանազան մարմինների և նիւթերի հետ, այր-  
ւում է և այրելով դառնում է մի ուրիշ գազ—ածխաքր-  
ւոս: Երբ մեր թոքերի փամփուշտիկները լցւում են  
օդով, փամփուշտիկների բարակ պատերից օդը մտնում  
է նրան շրջապատող արեան անօթները և այստեղ օդի  
միջի թթւածինը, խառնելով արեան հետ, արեան գոյնը  
մոյգ կարմրից փոխում է բաց կարմիր գոյնի, իսկ ինքը,  
ընդունելով արեան ածխածինը, դուրս է գալիս որպէս  
ծանր և փշացած գազ և բերում է իր հետ վատ արեան  
փշացած բոլոր գազային մասերը. նրա հետ միասին դուրս  
են գալիս նաև բորակածինը և այլւելուց առաջացած  
ջրային գոլորշիներ. իսկ թթւածինով թարմացած արիւնը  
թոքերի վեճաների միջոցով գնում է սիրտ և այդտեղից  
աօրտայի և այլ գարկերակների միջոցով շրջում է մեր  
մարմնի մէջ. այստեղ նա խառնելով մեր մարմնի մէջ  
գտնւած գանազան փշացած, փտած մասերի հետ, ինքն  
էլ ի հարկէ փշանում է և, մտնելով վեճաների մանր անօթ-  
ների մէջ, որպէս մոյգ արիւն գալիս թափւում է սրտի մէջ,  
իսկ այդտեղից գնում է դէպի թոքեր, ուր նորից խառ-  
նելով թթւածնի հետ, մաքրւած դուրս է գնում, իսկ  
փշացած գազերը բերնով և քթով արտաշնչւում են:

Եւ այսպէս թոքերի օգնութեամբ մի րոպէի մէջ 16—18  
անգամ մենք օդը ներշնչում և արտաշնչում ենք:

Շնչել; դա՞միւննոյն է թէ այրել մեր մարմնի միջի  
վատ մասերը. և որովհետև այրելուց միշտ առաջանում  
է տաքութիւն, ուստի և մեր մարմնին էլ տաք է շնորհիւ  
շնչառութեան միջոցով կատարւած այրման գործողութեան:

Եւ այսպէս շնչառութեան գործողութիւնը կապւած  
է արեան շրջանառութեան հետ. որով՝ շնորհիւ շրն-  
չած օդի, մի կողմից վատ արիւնն է թարմանում, միւս  
կողմից արեան օգնութեամբ մեր մարմնից դուրս են գալիս  
արեան փշացած մասերը:

Ուրեմն վեճաների վատ արիւնը, մտնելով թոքերի  
մէջ և խառնելով օդի թթւածինի հետ—դառնում է  
գարկերակային մաքուր արիւն և գնում է նորոգելու մեր  
մարմնի մէջ գտնւած փշացած մասերը:

### VI. ԿՍՇԻՆ ԿԱՄ ՄՈՐԹԸ

59. Մեր ամբողջ մարմինը զբոսից պատած է բարակ  
քաղակներով, որ կոչւում է կաշի կամ մորթ: Մորթը բաղ-  
կացած է երկու շերտերից, առաջինը կոչւում է վերնաճշկ,  
երկրորդը՝ նրա տակինը—եւրաճշկ: Վերին մասը, վերնա-  
մաշկը աւելի ամուր է և եղջիւրային ծագում ունի. նա  
կազմւած է մի շարք թափանցիկ քելերից, որ առաջա-  
նում է ներքին լորձային մասի չորանալուց. սա շատ չո-  
րութիւնից սկսում է թէփի նման թափւել: Մորթի եղ-  
ջրային մասի մէջ չկան ոչ նեարդեր և ոչ էլ արիւնա-  
տար անօթներ. ահա թէ ինչու, երբ մեր կաշի միայն  
վերին շերտն ենք ծակում կամ սուր գանակով կտրում,  
նա ոչ ցաւում է և ոչ էլ նրա միջից արիւն է դուրս  
գալիս:

Մորթի  
մասերը

60. Մորթի տակի մասը կամ ենթամաշկը պարու-  
նակում է իր մէջ ներկող մի նիւթ, որ կոչւում է պիգ-  
մենտ. նա է, որ գանազան մարդկային ցեղերին և նոյն  
մէջ կան արեան բազմաթիւ անօթներ, ուստի և մեր  
մէջ կան արեան բազմաթիւ անօթներ, որ վերնամաշկը բարակ է, ինչ-  
մարմնի այն տեղերում, ուր վերնամաշկը բարակ է, ինչ-  
պէս շրթունքների, երեսի և այլն, արիւնը խիստ հոսելուց  
այդ տեղերին տալիս է կարմիր գոյն. իսկ երբ արիւնը  
մի այլ պատճառով հետ է գնում, այդ տեղերը գունատ-

Մորթի  
կազմը


ում են, ինչպէս օրինակ վախի կամ բարկութեան ժամանակ:

Մտքի գործունէութիւնը

61. Ամբողջ մորթը ունի մանր, հասարակ աչքով հազիւ տեսանելի ծակոսիկներ, դրա միջից դուս են գալիս մեր մարմնի նստաբաշխ մասերը եւ ֆրսիկը. դրանով մեր մարմնի մէջ տեղի է ունենում օդի և նիւթերի կանոնաւոր փոխանակութիւն և, երբ այդ ծակոսիկները հիւանդութեան կամ մի ուրիշ պատճառով փակուում են և կամ վատ գործում, մարդու ամողջ մարմինը սկսում է հիւանդանալ:

Մազերը

62. Կաշի և մորթի մէջն են ամբողջած նաև մեր մարմնի զանազան տեղերում գտնւած մազերը. մազերը ունին սոխի նմանութիւն, այսինքն նրա արմատի կողմը ուռուցիկ է, իսկ ծայրը բարակ. մազի արմատը գտնւում է կաշի տակի ուռուցիկ անօթների — մատնոցանման անօթների մէջ, որտեղից և նա ստանում է իր սնունդը. երբ այդ անօթների մէջ սննդատու նիւթեր պակասում են — մազերը սկսում են թուլանալ և թափւել: Նորակները նոյնպէս առաջանում են մեր կաշի եղջիւրային մասից. նրանք ամբողջած են մեր



№ 24. Կաշի, մազեր և նեարդերը.


մատների ծայրերին, կաշի ծալքերի մէջ և երբ մենք նրան կտրում ենք, նրանք նորից նորոգւում են:

Կաշին ծառայում է մեր մարմինը պաշտպանելու բնութեան և եղանակի զանազան վատ և փոփոխուող ազդեցութիւններից՝ շոգից, ցրտից. նա պաշտպանում է նոյնպէս մեր արիւնը և նեարդերը անմաքրութիւնից ու


վարակումից. բացի այդ, կաշին, ինչպէս ասեցինք, մեր արեան մէջ գտնւած ջրային մասերը կարգաւորում է, մի կողմից գոլորշիացնելով նրան դուրս է բերում, միւս կողմից դրսից ծծում է իր մէջ խոնաւութիւն:

Երիկամներ

63. Նոյն նպատակին է ծառայում նաև մի այլ գործարան՝ երիկամակները. աղիքների հետևում, ողնաշարի մօտ. մեր երկու մեծ գեղձերն են, նրանց մէջ գտնւում են մեծ քանակութեամբ ծակոտիներ և խողովակներ, որոնք ժողովում են իրենց մէջ արեան ջրային և բորակային մասերը և յատուկ խողովակներով լցնում են մէզի փամփուշը, որի միջի հեղուկը մէզը — կամաց կամաց դուրս է գալիս:



Եւ այսպէս մեր մորթը և մի քանի գործարաններ ծառայում են մեր № 25. Երիկամները և մէզի փամփուշը.



№ 26. Երիկամները և անօթները.

մարմնի համար որպէս շնչառութեան զործիքներ և կատարում են նոյն գերը, ինչ և թոքերը, միայն թէ ուրիշ ճանապարհով:

Չ Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

Նեարդեր  
եւ ուղեղը


64. Մեր մարմինը իր կեանքը պահպանելու, որպէս  
և զանազան շարժումներ գործելու համար ունի մի զըլ-  
խաւոր հրամանատար, որը ամեն ինչ զգում է, տեսնում  
է, լսում է, որը և հրամայում է մեր մարմնի այս կամ այն  
մասին կատարել այն բոլորը, ինչ որ մարմնի համար  
անհրաժեշտ է և օգտակար:

Մարմնի այդ գլխաւոր հրամանատարը մեր ուղեղն  
է. սա ունի անթիւ հրամանատարներ—գրանք մեր  
նեարդերն են, որոնք մի կողմից  
հաղորդում են ուղեղին իրենց զգա-  
ցածները, միւս կողմից կատարում  
են ուղեղի տաժ պատւէրները, շար-  
ժելով կամ գործել տալով մեր մար-  
մնի զանազան մասերին: Չնորհիւ  
այդ հրամանատարի մեր մարմինը  
և նրա մէջ գտնուող բոլոր գործա-  
րանները անգուզար շարժման մէջ  
են և այդ շարժման շնորհիւ է, որ  
պահպանում է մեր կեանքը: Ու-  
րեմն մեր մարմնով անցնող նեար-  
դերի կենտրոնը կազմում է ուղեղը,  
որը գտնուում է զանգի խոռոչի և  
ողնաշարի անցքի մէջ:

Գլխի ու-  
ղեղի  
կազմը

65. Գլխի ուղեղ: Եթէ մենք  
բացենք մեր զանգի ոսկրները,  
նրա մէջ կտեսնենք փափուկ, բազ-  
մաթիւ ծալքերով լի մի մարմին,  
որը կոչւում է ուղեղ:


Գլխի ուղեղը բացի հաստ ոս-  
կրներից, պատած է լինում նաև  
երեք հաստ թաղանթով, որոնք  
պաշտպանում են ուղեղը ցնցում-  
ներից: Ուղեղը կազմւած է երկու



№ 27. Գլխի և ողնաշարի ուղեղը:

գոյնի զանգւածով, մէկը մոխրագոյն, միւսը—ապիսակ.  
ուղեղը բազկացած է երեք մասերից. ա. մեծ ուղեղը, որ  
բռնում է ճակատի, դագաթի և կողքերի մասը և ծածկում  
է սպիտակ գոյն ունեցող կամ փոփոխ ուղեղը և վերջա-  
պէս դրա տակին մոխրագոյն և սպիտակ զանգւածը՝  
ուղղաձիգ ուղեղը: Մեծ ուղեղը իր ամբողջ երկարութեամբ  
բաժանւում է երկու կիսագնդերի—աջ և ձախ, որոնց մէջ  
գտնուում են բազմաթիւ ծալքեր. այս ծալքերի մէջ տա-  
րածւած են արիւնատար անօթները, որոնք և սնունդ են  
տալիս ուղեղին:

Մեծ ուղեղի տակին գտնուող փոքրիկ ուղեղը, որը,  
ինչպէս ասացինք, սպիտակ գոյն ունի, որպէս և մեծ  
ուղեղը, ծածկւած է  
ծալքերով. սա նոյն-  
պէս երկու կիսերից  
է կազմւած. ահա  
զրա տակին է գտն-  
ւում երկարաձիգ ու-  
ղեղը, որը միանում է  
ողնաշարի ուղեղի հետ  
և կազմում նրա շա-  
րունակութիւնը:



Ողնաշա-  
րի ուղեղը

66. Նեարդերի միւս  
կենտրոնը կազմում է  
ողնաշարի ուղեղը, որ  
բռնում է մեր ողնա-  
շարի խողովակի մի-  
ջի տարածութիւնը:

№ 28. Մեծ ուղեղը և նրա ծալքերը:

սա գլխի ուղեղի նման պաշտպանւած է թաղանթով:  
Ողնաշարի ուղեղը նոյնպէս բազկացած է սպիտակ և  
մոխրագոյն զանգւածով. սպիտակը այստեղ միջուկն է,  
իսկ մոխրագոյնը ուղեղի զրսի կեղևը:


67. Նեարդերը սկսում են այդ երկու ուղեղներից. սկըզ-  
բում առանձին առանձին նեարդային հաստ անկւածներ են  
և ապա, զնալով, զբանցից ամեն մէկը ճիւղաւորւում է  
բազմաթիւ մանր և բարակ նեարդային թելերի, որոնք ի-

Նեարդերը

ըննց կողմից նոյնպէս բաժանուում են աւելի մասնը և հազիւ տեսանելի նեարդային թելիկները և, խիտ ցանցի նման, մտնում են մեր մարմնի և զործարանների բոլոր մասերի մէջ:

Նեարդերի բաժանումը

68. Գլխի երկարաձիգ ուղեղից դուրս են գալիս 9 զոյգ նեարդեր, այդտեղ նրանցից բաժանուում են մի քանի ուրիշ անկախ նեարդեր: այնպէս որ գլխի ուղեղից առաջանում են 12 զոյգ նեարդեր, սրանցից 8 զոյգը ճիւղաւորում է հէնց վիւում. այս նեարդերից նշանաւոր են՝



№ 29. Փորքիկ և երկարաձիգ ուղեղ.

հոսառորեան, սեւտղորեան և շտղորեան նեարդերը. միւսները գնում են մարմնի ուրիշ մասերը. զրանցից նշանաւորն է քափառող նեարդը, որը գնում է դէպի թոքերը, սիրտը և ստամոքսը:

Մեջի ուղեղից սկիզբն են առնում 31 զոյգ նեարդեր, որոնք, գնալով զանազան կողմեր, խճճուում են մեր մարմնի մէջ


և կազմում անթիւ ճիւղեր:

Նեարդերի գործունեութիւնը

69. Ինչպէս վերևը ասեցինք. մի շարք նեարդեր ծառայում են որպէս հաղորդիչներ զանազան զգացողութիւնների մեր մարմնի զանազան մասերից դէպի ուղեղը տանելու. միւսները ընդհակառակը ուղեղից են տանում դէպի մարմնի զանազան մասեր և ստիպում են մեր մկաններին այս կամ այն շարժումները կատարել. այնպէս որ գլխի և ողնաշարի նեարդերը կարելի է բաժանել երկու խմբի—զգայնական և շարժողական, կան նաև նեարդեր, որ այդ երկու պաշտօնները կատարում են միաժամանակ՝ համ շարժում են առաջ բերում, համ էլ

զգացողութիւն: Փորձաւած է, որ մեր ուղեղի մոխրագոյն շանգւածը ծառայում է մտաւոր գործունէութեան—մտածելու, համեմատելու, վճռելու համար, իսկ սպիտակ ուղեղը—զրսի տպաւորութիւններն է ընդունում և մկաններին շարժում: Թէ զգայարաններից և թէ շարժումներից շատերը կատարում են նաև ողնաշարի ուղեղի միջոցով, որ նեարդերով կապւած է գլխի ուղեղի հետ:

Եթէ մենք ուշադրութիւն դարձնենք, կտեսնենք, որ մենք կատարում ենք երկու տեսակ շարժումներ—մէկը կանաւոր, միւսը ինքնակալ: Օրինակ. մեր սիրտը, ստամոքսը, աղիքները կատարում են մի շարք շարժումներ առանց մեր գիտակցութեան և կամքի, ընդհակառակը մի շարք շարժումներ ինչպէս՝ քայլելը, ձեռքերը շարժելը, վիզը, լեզուն, աչքը այս կամ այն կողմը ծռելը կախւած է մեզնից. առաջին տեսակի շարժումների մեծ մասը կատարում է ող-




№ 30. Ողնաշարի ուղեղը և նրանից դուրս եկող նեարդերը.

նախապէս ծռելը կախւած է մեզնից. առաջին տեսակի շարժումների մեծ մասը կատարում է ող-

նաշարի ուղեղից գնացող նեարդերի շնորհիւ, միւսները— գլխի ուղեղի:

Նեարդերի հոգնածութիւնը եւ հանգիստը

70. Աչքի առաջ ունենալով որ մեր մարմնի բոլոր մասերը մշտական շարժման մէջ են և միշտ զգում են, պէտք է եզրակացնել, որ մեր նեարդերը միշտ էլ գործում են. նեարդերը գործելով, բնական է, յոգնում են, թուլանում. և ահա, որպէսզի նեարդերը հանգստանան, բնութիւնը մեզ տալ է մի այլ միջոց— դա *խունկ է*. քնի ժամանակ մեր գործարաններից շատերը ինչպէ՛ս՝



տեսողութիւնը, լսողութիւնը, ճաշակելիքը և մկաններից շատերը հանգրտանում են, պարզ է, որ նրանց հետ հանգստանում են և դրանց նեարդերը. իսկ մի քանիսը նոյն իսկ քնած ժամանակ շարունակում են գործել— դրանք են— սրտի, թոքերի և ընդհանրապէս այն գործարանների նեարդերը, որոնք ինքնաբերական շարժումներ են առաջացնում: Գրանով մեր նեարդերը մեր քնած ժամանակ ոչ միայն հանգստանում, այլ և արեան շնորհիւ ստանում են այն սնունդն ու ոյժը, որ նրանք կորցրել էին, երբ արթուն ժամանակ գործում էին:


Հինգ զգայարաններ № 31. Ատամի նեարդերը.

71. Մարդը ունի հինգ զգայարաններ— շոշափեղի՛, հոսոսեղի՛, ճաշակեղի՛, ըտեղի՛ և *սեսսակեղի՛*: Առաջինը՝ շոշափեղիքը չունի առանձին գործարան և նրա գործը կատարում է մեր ամբողջ մորթը. վերջին չորսը ունեն իրենց յատուկ գործարաններ և յատուկ նեարդեր. ահա այդ զգայարանների շնորհիւ է, որ մենք իմանում ենք, թէ ինչ կայ և ինչ է կատարում մեր շուրջը. բոլոր այդ զգայարանները ունեն իրենց նեարդերը, որոնք գնում, միանում են ուղեղի հետ, ուրեմն և ուղեղին հաղորդում են զգացածները:

Շոշափեղի

72. Չօշափեղիքի գործարանը մեր մորթն է, որի տակին գտնւում են նեարդային անկաւանները, սրանք

են, որ հաղորդում են: իրենց զգացածը մեր ուղեղին: Չօշափելով մենք ճանաչում ենք առարկայի ձևը, մեծութիւնը, նրանց ամուր, փափուկ, սառը կամ տաք լինելը: Մեր մարմնի այն մասերը, ուր ամենից շատ նեարդեր կան, ամենից զգայունն են. այդ կողմից մեր




№ 32. Նեարդերի ճիւղաւորումը.

մատների ծայրերը կարելի է համարել ամենից զգայուն շոշափեղիքը, յետոյ գալիս են շրթունքները և ապա, լեզու

ծայրը: Ամենից թույլ զգացողութիւն ունի կրծքի կաշին և ոտները ու ձեռքերի վերին մասերը:

Ճաշակելիք

73. *Ճաշակելիքի* գործարանը լեզուն է. լեզուն կազմուած է մկաններից և շնորհիւ դրա չափազանց շարժուն է և օգնում է թէ կերակուր ընդունելուն և թէ նրան այս ու այն կողմը տանելուն և թէ բառեր արտասանելուն: *Հորձնային քաղակրքը*, որով պատած է լեզւի ամբողջ մակերեսը, լի է բազմաթիւ մանր և ուռուցիկ ծծանկերով, որոնց միջով անցնում են արիւնատար անօթիները և երկու զգայնակաւ նեւրոններ: Շնորհիւ այս նեւրոնների միւս իմանում ենք առարկաների համը: Մենք այն առարկաների համը ենք զգում, որոնք թէ ամուր, բայց լեզւի հեղուկին կպչելով, լուծուած են. իսկ այն առարկաները, որոնք, ինչպէս օրինակ ապակին կամ ածուխը, չեն լուծուած լեզւի վրայ, նրանցից մենք համ չենք ստանում:



№ 33. Լեզուն, նրա նեւրոնները և պտուկները:

Ճաշակելիքի նեւրոնները փուլած են լեզւի արմատի մէջ և կողքերին, այն ինչ լեզւի ծայրը աղքատ է այդ նեւրոններից և նա ունի միայն շօշափելու մեծ ընդունակութիւն:


Ճաշակելիքի եւ մարսողութեան գործարանները

74. *Ճաշակելիքի* միջոց է տալիս մեզ զգալու մեր ընդունած կերակրի համը. այսինքն աղին, անալին, կծուն, թթուն, դառը և այլն լինելը. և այն բոլոր կերակուրները, որոնք դուրեկան են ճաշակելիքի համար, այսինքն համեղ են, նրանք մեծ մասամբ և օգտակար են մեր մարսողութեանը: Շնորհիւ ճաշակելիքի նեւրոնների մենք չենք ընդունում զանազան նիւթեր, որոնք կարող են վնասել մեզ: Կան մարդիկ, որոնց ճաշակելիքը շատ նուրբ է, և ընդհակառակը կան և այնպիսիները, որոնց նեւրոնները բթացած են և նրանք չեն կարողանում շատ

անզամ նիւթերի համը զգալ. այս վերջին բանը նկատուած է մի քանի հիւանդութիւնների ժամանակ, երբ նեւրոններից շատերը, զրանց թոււած և ճաշակելիքինը, թուլանում և բթանում են:

Հոսոստելիքի Բիքր եւ Գրա կազմը

75. *Հոսոստելիք*. Մեր քթի խորշը ծառայում է մեզ, որպէս հոտոտելիքի գործարան. քիթը կազմուած է երեսի մի քանի ոսկրներից, իսկ առաջից ծածկուած է կրճկային այն մասով, որի մէջ գտնուած են մեր քթի ծակերը: Քթի վերին մասը բաղկացած է երկու փոքրիկ և բարակ ոսկրներից, որոնք վերջանում են կրճիկով: Այդ երկու ոսկրների մէջ կայ մէկ ոսկր—



№ 34. Քթի խորշը և նեւրոնները:


գա քթի միջնապատը եւ քթի ծակերը բացուած են կլանի մէջ և այդտեղից գնում է դէպէ որկոր: Քթի անցքի պատերը պատած են յորձնային քաղակրքով, որի մէջ գտնուած են հոսոստելիքի նեւրոնի ճիւղերը: Այս նեւրոնները գլխի ուղեղի նեւրոնների առաջին գոյգն են կազմում: Քթի խորշում կան մի շարք խորթ ու փոքրթուփիւններ, որոնք և մեծ ծառայ են աւալիս հոտոտելիքին:

Հոսոստելիքի գործունեութիւնը

76. Քթի խորշը երկու մեծ գործ է կարարում մեզ համար. մէկ, որ նրա միջով օդը գնում և դուրս է գալիս մեր շնչառութեան գործարանները և երկ-

ըորդ՝ մեր ուղեղին հաղորդում է զանազան առարկաների հոտի զգացմունքը: Միայն այն առարկաներն են հոտ արձակում, որոնցից զանազան մասնիկներ պոկելով, օդի մէջ ցնդում են. ահա այդ մասնիկներն են, որ մտնելով մեր քթի խորշի մէջ, հանդիպում են հոտառութեան նեարդերին և զգալ են տալիս մեզ նրանց հոտը. որքան մի նիւթ շատ մասնիկներ է արձակում իրենից, այնքան նորա հոտը ուժեղ է լինում: Օրինակ քթախոտի փոշին, կամ նաշաղիրի սպիրտը, պղպեղի փոշին և այլն:

Լսելիք—  
ականջ եւ  
նրա կազմը




№ 35. Կոպորտ և ձայնական լարեր:

վերջում գտնուում է ականջի քրքրային քաղակրք. ուստի արտաբերում է արտաքին ականջը միջին ականջից: Թմբկային թաղանթը, որ և միջին ականջն է, մի խորշ է լի օդով և շրջապատուած ոսկրներով. խորշը մի կողմից բացուում է ներքին ականջի մէջ, միւս կողմից մի ուրիշ անց-

77. Լսելիքի գործարանը մեր ականջն է, որ կազմւած է երեք մասից՝ արտաքին ականջ, միջին ականջ և ներքին ականջ. Չայնը առաջանում է շարժումից. շարժումը առաջ է բերում օդի մէջ ալիքներ և այդ ալիքները ձայն են հանում. զրանք, մրտնելով մեր ականջը, մեզ միջոց են տալիս լսելու և զգալու: Ականջի արտաքին մասը կամւած է մի կողմից ականջի արտաքին խխունջից, որ կոընկային կազմ ունի և ապա—ակունջի ակնցից: Որովհետև արտաքին խխունջը ունի մի շարք խորթ ու բորթութիւններ, ուստի և ձայնը կալչելով նրան մտնում է կարճ անցքի մէջ, որի

քով, որ կոչուում է եւսսաՓեան խողովակ, բացում է կլանի մեջ: Թմբկային թաղանթից դէպի ներքին ականջը կան մի շարք մանր ոսկրներ, որոնք կոչուում են՝ մուրճ, սալ և սուպակրակ. այս երկուսի մէջ կայ սուպակրակի մի ուկրիկ: Մուրճը գտնւելով թմբկային թաղանթի մօտ, միւս մասով ծածկում է ներքին ականջի մուտքը:




№ 36. Ականջ և նրա միջի գործարանները:

Ներքին ականջը կամ շաքիտընրուսը բաղկացած է նախադուրնից, խխունջից և երեք կեսարտչոր ակնցերից. առաջին երկուսը և անցքերի առաջին մասերը լի են մի զանգւածով, որի մէջ լողում են ձայնային քարեր: Լարերընթոսի պատերին փուած են լսելիքի նեարդերը, որոնք լսելիքի անցքով մտնում են այստեղ գլխի ուղեղից: Չայնի ալիքները, ականջի խխունջի պատերին գարնւելով, մտնում են ներս և, կալչելով թմբկային թաղանթին, նրան շարժում են. զրանից շարժում են և ականջի միջի լսեշարժում են. զրանից շարժում են և ականջի միջի լսելիքի փոքրիկ ոսկրները. այս վերջինները շարժում են ակունջի միջի յեղուկը, որով և զրգուում են լսելիքի նեարակունջի միջի յեղուկը, որով և զրգուում են լսելիքի նեարդերը: Չայնը, բացի այս ճանապարհից, մտնում է ականջը դերը: Բնական է, որ լսելիքի համար ամենակամեր ուղեղին: Բնական է, որ լսելիքի համար ամենակամեր ուղեղին: Բնական է, որ լսելիքի համար ամենակամեր ուղեղին կամ բթմանան, մեր ականջը այլ ևս ոչինչ չի լսի: Սակայն լսողութիւնը կարող է վտանգւել, եթէ պատու-

ւի թմբկային թաղանթը. սակայն դրանով միայն զժւարանում է լսելը, իսկ նեարդը շարունակում է թէն թոյլ, բայց այնուամենայնիւ գործել:

Տեսանե-  
լիք—աչք,  
եւ նրա  
կազմը

78. Տեսանելիքի: Տեսանելիքի գործարանը այն է, որ կազմւած է աչքի խնձորից և նրան օժանդող մասերից. այս վերջինները ծառայում են աչքի խնձորը շարժելու և նրան պաշտպանելու համար:




№ 37. Ինչպէս են ձայնի ալիքները հասնում մեր ականջին.

Աչքի խնձորը, տեսանելիքի ամենաբնորոշ և գլխաւոր մասն է, ուստի և դրսեից նա պաշտպանւած է կոպերով և արտաակոսկներով, իսկ ներսից գտնւում է գանգի և երեսի ոսկրներից կազմւած փոսի խորքում: Աչքի խնձորը գնտաձև է և դրսի կողմից փոքր ինչ ուռուցիկ. նա կազմւած է երեք թաղանթներից՝ արտաակոսկից, ակոսկալուսակ մասից և ցանցի քաղակրից: Սպիտակուցը դա արտաքին շերտն է—սպիտակ գոյնով, որի ուռուցիկ, դուրս ընկած մասը կազմւած է ամուր եղջրաչիւն ծածկոցից, բաւականին նման ժամացոյցի ապակիին. երկրորդ անօթային թաղանթը անթափանց է և սև գոյն ունի, նրա վրա տարածւած են արիւնատար անօթները, առաջին կողմից սա էլ ուռուցիկ է, բոլորաձև և ունի մի անցք. այդ բոլորաձև մասն է, որ դրսեից մի առանձին մարմնի նման է, իսկ անցքը կազմում է մեր աչքի քիթը: Երրորդ ցանցային քաղակրը կիսաթափանցիկ է և նրա վրա փուլած է տեսանելիքի նեարդի խիտ ցանցը.

այդ նեարդերը կազմում են գլխից դուրս եկող նեարդերի երկրորդ գոյգը:

Աչքի ներսում կան երեք թափանցիկ մասեր՝ ցրունուսն հեղուկ, հաղձապակիև և ապակիալուսակ մարմնի: Առաջինը—ջրային հեղուկը գտնւում է եղջիրային թաղանթի ետևում և աչքին տալիս է ջրային փայլ, յետոյ դալիս է հաղձապակեայ փափուկ մարմինը և ապա ապակիանման թափանցիկ մի գանգւած, որով լցւած է աչքի ներքին օղջ տարածութիւնը:



№ 38. Աչքը և ըրա կազմը.

Լոյսը, անցնելով երեք թաղանթների միջից, թափանցում է բերի մէջ և այդտեղից տարածւում ցանցային մասի վրայ, ուր գտնւում են տեսողութեան նեարդերը: Առարկաները մեր աչքի մէջ երևում են գլխի վայր և ապա, նեարդերը տանելով դրան երկու աչքերի կողմից

մեր ուղեղին տալիս են նրանց իսկական կերպարանքը:

79. Աչքի օգնական մասերն են՝ աչքի մկանները, կոպերը, հոնկերը, արտաակոսկները և արտաուսի գիդները: Աչքերը շարժւում են վեց մկաններով—չորս ուղիղ և երկու կողմնակի: Առաջինները կպած են աչքի խնձորին մէկ մէկ հատ ամեն կողմից, որով և մեր աչքերը շարժւում են վերև, ներքև և կողքերով. իսկ երկրորդները—դէպի ներս և դուրս: Երբ մկաններից մէկն ու մէկը հիւանդ է կամ կարճ, մեր աչքերը շլում են:

80. Աչքի կոպերը փականներ են, որ ծառայում են մեր տեսանելիքի գործարանը պաշտպանելու արտաքին վտանգներից. նրա ներսի մասը միշտ խոնաւ է և դրավտանային. նրա ներսի մասը միշտ խոնաւ է և դրավտանային. նրա ներսի մասը միշտ խոնաւ է և դրավտանային. նրա ներսի մասը միշտ խոնաւ է և դրավտանային.

Աչքի մկանները

Աչքի կոպերը

նրա վրա նստած թէ փոշիի և թէ կողմնակի բաներ. կոպերի վրայ փուած է արիւնստտար անօթների և նեարդերի մը խիտ ցանց:

Կոպերի ծայրերին գտնուում են մի շարք մազեր— *արսեւանոնիֆներ*, իսկ կոպերի անկիւններում գտնուում են արտասուքի գեղձերը, որոնք մեր հոգեկան որոշ բուպէններում զրգուում են և, բացելով աչքի մէջ, առաջ են բերում ազահամ մի հեղուկ—արտասուք:

Ճակատի ոսկրի եզրին—աչքի անցքից վերև, կաշւի վրայ գտնուում են դարձեալ մազեր—գրանք *արսեւանոնիֆներն են*, որոնց տակ մի շարք մկաններ կան:

Արտանոնքները, ինքնաբերաբար շարժելով և ցած իջնելով, մի կողմից պաշտպանում են աչքը, երբ նրան վտանգ է սպառնում, իսկ միւս կողմից նրանց վրայ ժողովում է մեր ճակատի բրտինքը, որով աչքը ազատուում է քրտինքը դէպի աչքը կաթելու վտանգից:



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Բ. ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

81. Մեր աշխարհը լի է անթիւ կենդանիներով, որոնք շարժուում, շնչում, գգում, մի տեղից միւս տեղն են փոխադրում և վերջը մեռնում են, առաջ բերելով իրենց նման կենդանիներ: Այդ կենդանիների մեծ մասը մենք տեսնում ենք մեր աչքերով, նրանցից շատերը վայրենի դրուժիւնից ընտանի են դարձել, ապրում են մեզ հետ և մենք ստանում ենք նրանցից բազմաթիւ օգուտներ. կան, և շատ են, այնպիսի կենդանիներ, որոնք ապրում են վայրենի դրուժեան մէջ՝ անտառներում կամ անապատների մէջ, վնասում են թէ մեզ թէ մէկգմէկու. մեծ է և ջրերի մէջ, նրա խորքերում ապրող կենդանիների թիւը. հազարաւոր գետուններ ապրում են բոյսերի մէջ կամ գետնի խորքերում, և դրանցից շատերը այնքան փոքր են, որ մենք միայն մանրադիտակով կամ խոշորացոյցով կարող ենք տեսնել: Մի խօսքով, կենդանիների թիւը այնքան մեծ է և նրանք, թէ իրենց կազմով և թէ ապրուստի եղանակով, այնքան բազմատեսակ են, որ դրանց բոլորին ուսումնասիրելու համար կայ մի առանձին գիտութիւն, որ անւանում է *կենդանաբանութիւն*:

Բնութիւն  
և կենդան-  
ութիւն

82. Որքան շատ ու բազմատեսակ լինեն կենդանիները, բայց նրանք միմեանց հետ մի բանի բաներով նման են լինում. այդ նմանութիւններով էլ մենք բաժանում ենք կենդանիներին զանազան խմբերի, այնպէս որ, երբ մենք քննում, ուսումնասիրում ենք մի կենդանի—մենք զբանով ուսումնասիրած ենք լինում նրա հետ նմանութիւն ունեցող բազմաթիւ ուրիշ կենդանիներ:

Կենդանի-  
ների նմա-  
նութիւնը

Տեսակ եւ  
ցեղ

83. Կենդանիների միմեանց հետ ունեցած նմանութիւններն էլ տեսակ տեսակ են լինում, օրինակ—եթէ մի քանի առանձին առանձին կենդանիներ միմեանց շատ նման են, ասում ենք, նրանք մի *սեսակի* են. ինչպէս օրինակ բոլոր կատուները, որոնք, չնայելով այն բանին, որ թէ գոյնով, թէ մեծութեամբ, բրդի խտութեամբ տարբեր են, բայց թէ կազմաւածքով և թէ բնաւորութեամբ միմեանց նման են—գրա համար էլ բոլոր կատուները կազմում են մի *սեսակ*. նոյնը կարելի է ասել և շների, ոչխարների, ձիերի, աղանիների և այլ կենդանիների մասին:

Բայց կան կենդանիներ, որոնք թէև կատուներ չեն, բայց թէ ներքին կազմով, թէ ատամներով և ճանկերով, թէ բնաւորութեամբ և կերակրելու ձևով նման են կատուներին, ինչպէս օրինակ վայրենի կատուները, առիւծը, վագրը և այլն—ահա այդ տեսակ կենդանիների համար ասում ենք, որ նրանք պատկանում են կատուների *ցեղին*. և՛ այսպէս շները ունեն իրենց ցեղը, երկամբակային կենդանիները իրենցը և այլն: Ուրեմն տեսակներով իբար նման կենդանիները կազմում են մի ցեղ. օրինակ՝ շունը և գայլը, թէև տարբեր տեսակների, բայց մի ցեղի կենդանիներ են, կովը և գոմէշը նոյնպէս մի *ցեղի* և և պատկանում:

Ղնսանիք

84. Մի քանի նման ցեղեր միասին կազմում են *ընտանիք*. օրինակ կատուացեղերը, շնացեղերը, խլուրդները մի ընտանիք են կազմում, հէնց նրանով, որ այդ ցեղերին պատկանող բոլոր կենդանիների ատամները նման են միմեանց, իսկ իրենց կերակուրով դրանք բոլորն էլ *մասկեր* են և *գիշատիչ*:

Կարգ,  
դաս եւ  
բազաւո-  
րութիւն

85. Միմեանց նման ընտանիքները կազմում են մի *կարգ*. օրինակ կապիկները, որոճողները, գիշատիչները, կրծողները միանալով կազմում են *կարճատունների կարգը*: Մի քանի կարգեր միասին կազմում են մի *դաս*, իսկ բոլոր դասերը միասին վերցրած ներկայացնում են ողջ *կենդանական բազաւորութիւնը*:

Ողնաւա-  
րաւոր եւ  
անողնա-  
ւաւ

86. Կենդանական թագաւորութեան պատկանող բոլոր այդ կենդանիները բաժանւում են երկու շատ մեծ խում-

բերի, այն է՝ *ողնաշարաւոր* և *անողնաշարաւոր կենդանիներ*:

*Ողնաշարաւոր* են կոչւում այն բոլոր կենդանիները, որոնք ունեն կոնախ կամ թէ կմախքի գլխաւոր մասը՝ *ողնաշար*: *Անողնաշարաւորները* ոչ կմախք ունեն և ոչ էլ ի հարկէ ողնաշար:

Ողնաւա-  
րաւորնե-  
ր, ըստ  
նումը

87. Ողնաշարաւոր կենդանիները բաժանւում են հինգ կարգի. այն է՝ *կարճատուններ*, *թռչուններ*, *սողուններ*, *երկկեւցաղներ* և *ձկներ*: X

Կարճա-  
տուններ

88. *Կարճատուններ* անուանւում են այն կենդանիները, որ ունեն ողնաշար, արիւնը տաք է և կարմիր, մարմինը պատած է կաշիով, շնչում են թոքերով, սիրտը ունի չորս բաժանմունքներ, ծնում են ձագեր, որոնց *կերակուրտ* են իրենց կարով:

Թռչուն-  
ներ

89. *Թռչուններ*—ունեն ողնաշար, արիւնը տաք է և կարմիր, մարմինը պատած է փետուրներով, առաջին վերջաւորութիւնները թևերն են, ոտքերի վրայ ունենում են ոչ աւել քան չորս մատներ, իսկ բերնի վրայ—կտուց. սիրտը չորս բաժանմունքից է, շնչում են թոքերով, ձու են ածում և, ձևերի վրայ նստելով, ձագեր են հանում ու թռչում:

Սողուններ

90. *Սողուններ*—ունեն ողնաշար, մարմինը պատած է թեփուկներով և վահաններով, սիրտը կազմւած է երկու նախասրտերից և մի չզարգացած փորիկից, արիւնը կարմիր է, բայց սառը, շնչում են թոքերով, բազմանում են ձւերով և սողում են գետնի վրայ:

Երկկեւց-  
աղներ

91. *Երկկեւցաղներ*—ունեն ողնաշար, մարմինը մերկ է և սառը: Սիրտը ունի երկու նախասիրտ և մէկ փորիկ. ապրում են ջրերում և ցամաքի վրայ, ունեն քիմուխտներ ապա և թոքեր. բազմանում են ձւերով:

Ձկներ

92. *Ձկներ*—Ողնաշարաւոր են, արիւնը կարմիր է, բայց սառը, մարմինը պատած է թեփուկներով և ոսկրային վահանիկներով, շնչում են քիմուխտներով, ունեն լողավահանիկներ և ներսում-լողափամփուշտ, լայն նալու համար լողակներ և ներսում-լողափամփուշտ, լայն պոչ, ձու (ձկնկիթ) են ածում, որից և գոյանում են փոքրիկ ձկները. ապրում են ջրերի մէջ:

Ժանօթանանք ողնաշարաւորների այդ հինգ կարգերի հետ առանձին առանձին, այդ մեզ հեշտ է հէնց նրանով, որ մենք, ծանօթանալով մարդու մարմնի կազմի հետ, կտեսնենք, որ մարդու գործարաններից շատերը ունեն նաև բոլոր ողնաշարաւոր կենդանիները:

Ա. Կ Ա Ռ Ն Ա Ս Ո Ւ Ն Ն Ե Ր

Մարդի եւ կաթնասուններ

93. Բոլոր կենդանիների մէջ կաթնասունները մեզ համար ամենից հետաքրքիր, ամենից ծանօթ և ամենից օգտակարներն են: Բաւական է ասել, որ մեզ հետ ապրող և ընտանի դարձած կենդանիների մեծ մասը կաթնասունների կարգին են պատկանում. օրինակ, մեզ հետ միևնոյն սենեակում ապրող կատուն, մեր տունը, բազը, զառների հօտը պահպանող հաւատարիմ շունը, մեզ կաթ, իւղ, մածոն, միս, կաշի և բուրդ տուող ոչխարը, կովը, լծկան, բեռնակիր և հեծանելի եզր, ձին, էջը և այլն — դրանք բոլորն էլ պատկանում են կաթնասունների կարգին, մենք դրանց ամեն օր տեսնում ենք, հոգս տանում, կերակրում, գործ ածում: Ահա զրա համար էլ ծանօթանանք կաթնասունների մարմնի կազմի հետ, մանաւանդ, ինչպէս արդէն ասեցինք, դրանց գործարանները շատ նման են մի ուրիշ կաթնասունի — մարդու գործարաններին:

Մարդի եւ կաթնասունների նմանութիւնն ու արբերութիւնը

94. Կաթնասունների մարմինը, ինչպէս և մարդու մարմինը, բաղկացած է ոսկրներից և մսից: Եւ ոսկրները կազմում են նրա կմախքը, որի հիմքը ողնաշարն է, միսը բաղկացած է մկաններից, որոնք կպած են ոսկրներին. ողնաշարը կազմւած է ողերից, ողերի միջով անցնում է մէջքի ուղեղը, իսկ գլխի զանգի մէջ գտնուում է գլխի ուղեղը: Ողնաշարի շարունակութիւնը կազմում է պոչը, որը կազմւած է ողերից. այստեղ արդէն կաթնասունները մարդից տարբերւում են նրանով, որ, այն ինչ մարդի պոչը շատ կարճ է, հազիւ նկատելի, կաթնասունների պոչը երկար է և երբեմն հասնում է մինչև 45 ողերի:

95. Մարդը միւս կաթնասուններից տարբերւում է նաև նրանով, որ, այն ինչ մարդը երկու ոտների վրայ է կանգնում, ման գալիս, միւս կաթնասունները ման են գալիս և կանգնում են չորս վերջաւորութիւնների՝ չորս ոտների վրայ. բացառութիւն են կազմում մարդուն շատ նման կապիկները, որոնց մի քանի տեսակները կարողանում են մարդու նման յետևի ոտների վրայ ման գալ և գլուխը պահել ուղղահայեաց:

Մարդի եւ կաթնասունների նմանութիւնը

Վերջաւորութիւններն էլ շատ նման են մարդին ոսկրներին. ունեն ուտակը, բազուկ, դաստակ, ազգը, սրունգ, մատներ: Մատները հինգից աւելի չեն լինում, կան որ երեք մատ ունեն, ինչպէս ռնգեղջիւրը, կան որ երկու մատ (եզ, ոչխար, եղջերու և այլն). կան որ միայն մի մատ ունեն (ձի, էջ, ջորի և այլն). սրանք կոչւում են նաև սմբակներ:

Կաթնասունների գլխի ուղեղը միանման կազմ ունի, նրա մէջ գտնուում են նեարդերը. գլխի ուղեղը միացած է ողնաշարի ուղեղի հետ, որտեղից դէպի մարմնի բոլոր կողմերը տարածւում են նեարդերը, որոնք կենդանիներին այս կամ այն չարժումն են գործել տալիս:

Բոլոր կաթնասունները ունեն հինգ զգայարաններ, զգայարանները ունեն իրենց նեարդերը, որոնք նոյնպէս են գործում, որպէս և մարդի զգայարանները. բայց կենդանիների զանազան զգայարաններ զանազան կերպով են զարգացած — մի քանի կենդանիների մի քանի զգայարաններն աւելի զարգացած են — միւսները թոյլ, ուրիշ կենդանիների մէջ ուրիշ զգայարաններն են զարգացած:

Կաթնասունների գործարաններ

96. Մարսողութեան գործարաններն էլ նման են մարդու գործարաններին և նայելով կենդանու կերած կերակուրին, այս գործարանների մի մասը աւելի երկար և ամուր են, քան մարսողութեան միւս գործարանները: Ատամների կազմը մեծ նշանակութիւն ունի կենդանու թէ բնաւորութեան, թէ ուտելու և թէ կեանքի համար:

Կան կենդանիներ, որոնք միայն խոտ են ուտում, ինչպէս կովը, ոչխարը, այսինքն բուսական կերակուրներ,

կան, որ մտով են կերակրում ինչպէս—կատուն, առիւծը, վագրը, գայլը և այլն և այլն:

Բոլոր կաթնասուններն էլ ունեն սիրտ, որը նոյն պաշտօնն է կատարում կէնդանու արեան շրջանառութեան համար, ինչպէս և մարդի սիրտը, իսկ շնչառութեան համար կան թոքեր—ճիշտ նման մարդու թոքերին:

97. Կաթնասուն կենդանիների բնականաւն էլ մարդու նման է. էգերը բերում են ձագեր, որոնց կերակրում են կրծքի կաթով, և որքան մեծ է կենդանին, այնքան քիչ ձագեր է բերում, որքան փոքր, այնքան շատ: Կան կաթնասուններ, որոնք միանգամից 24 ձագ են բերում և կերակրում:

Կաթնասունների կեանքը շատ երկար չէ տևում, շատ շատ 25—35 տարի, որից յետոյ ծերանում են և մեռնում:

98. Կաթնասուն կենդանիների թէ բնատրուածիւնը և թէ մարմնի կազմը կախւած է այն բանից, թէ նրանք որտեղ են ապրում և ինչ են ուտում: Որքան մի կենդանի միայնակ կամ փոքր խմբերով է ապրում, այնքան նա վայրենի և վտանգաւոր է, իսկ որքան մեծ խմբերով—այնքան նա բարի է լինում:

Այժմ ընտանի դարձրած կաթնասուն կենդանիները սկզբում վայրենի են եղել, ապրել են անտառներում, դաշտերում, բայց մարդիկ զրանց բռնել են, սովորեցրել և գործ են ածում իրենց զանազան պէտքերի համար. հիմա էլ բոլոր ընտանի կաթնասունները ունեն իրենց վայրենի գիշատիչները կամ տեսակները, որոնք ապրում են անտառներում, դաշտերում և անապատներում:

99. Բոլոր կաթնասունները, ունեն ընտանեկան, նոյն իսկ ընկերական կեանք. ապրում են խումբը խումբ իրենց զաւակների, ձագերի հետ, որոնց սիրում են և պաշտպանում, երբ նրանց մի որ և է վտանգ է սպառնում: Բացի այդ, բոլոր կենդանիները, մանաւանդ որձերը, ունեն պաշտպանելու բնական միջոցներ—մէկը իր սուր ատամներով է պաշտպանւում, միւսները—եղջիւրներով, երրորդը ոտներով, քթով, ուժեղ ձայնով և այլն: Բոլորն էլ ամեն

Բնաւորութիւն և բնկերակաց կեանք

հնար գործ են դնում իրենց և իրենց սերունդի կեանքը պահպանելու և դրա համար երբեմն միմեանց դէմ կատաղի կռիւ են մղում: Եւ այսպէս դարերի ընթացքում ապրել են այն կենդանիները, որոնք կուելու, իրենց գոյութիւնը պահպանելու համար ամենից ճարպիկ, ուժեղ և հնարաղէտ են գտնւել: Թոյլ կենդանիների մեծ մասը ոչնչացել է:

100. Ինչպէս ասեցինք, կենդանիները, նայած իրենց ներքին կազմին, միմեանց ունեցած նմանութեան, բաժանւում են զանազան ցեղերի, ընտանիքների, կարգերի և այլն:

Մենք կ'ժանոթանանք կաթնասուն կենդանիներից նրանց հետ, որոնք մեզ մօտիկ են և որոնց նմաններ շատ կան վայրենի դրութեան մէջ:

Այդ կողմից բոլոր կենդանիների մէջ իր կազմով ամենից շատ նմանը մարդուն կապիկն է: +

Ա. Մ Ա. Բ Գ Ա. Ն Մ Ա. Ն Ն Ե Բ

1. Կ ա պ ի կ

101. Կապիկները պատկանում են չորս ձեռանի կենդանիների խմբին: Նրանց ոտների բութ մատը, ձեռքերի բութ մատի նման, ազատ կաշում է արհիւն և զրանով հեշտացնում կապիկներին ամենայն արագութեամբ, ճարպիկութեամբ և ոտներով և ձեռքերով զանազան շարժումներ անել, բարձրանալ ծառեր, թռչկոտել մի ճիւղից միւսը, կախ ընկնել, մագլցել, մի խօսքով ստքերով կատարել այն բոլոր բաները, ինչ որ կատարում է ձեռքերի մատներով:

Կապիկներ



№ 39, Մարդանման կապիկ.

102. Կապիկները տեսակները շատ են: Հասակաւոր կապիկը մարդու շափ է, իսկ նորածինը 5—6 վերջոկ հազիւ լինի:

Կապիկների մարմինը պատած է խիտ մազերով, նոյն իսկ երեսը. և մազից ազատ է լինում միայն քթի մի մասը: Կապիկների գլուխը երկար է, ճակատը նեղ և տափակ, բերանը մեծ, շրթունքները բարակ, ձեռքերը և ոտքերը ուժեղ և երկար. կապիկների ողջ կազմը յարմարեցրած է ծառերի վրայ ապրելու. և այդպէս էլ է—նրանք ապրում են տաք երկրներում, անտառների մէջ, ծառերի վրայ. երկար ագին նրանց համար կատարում է հինգերորդ ձեռքի պաշտօն. նրան ամրացնում են ծառի ճիւղին և ապա մի ճիւղից միւս ճիւղը ցատկում, երբեմն 10—12 արշին տարածութեամբ: Երբ գետին են իջնում, ման են գալիս ձեռքերի վրայ, նրանք կարող են և յիտեի ձեռքերի վրայ կանգնել—այդ դէպքում նրանք առաջին ձեռքերը ետեի կողմից ծառայեցնում են թաթերի վրայ յենելու համար:

103. Կապիկները ունեն նոյն ատամները ինչ և մարդիկ, միայն թէ նրանց ժանիքները շատ զարգացած են, իսկ սեղան ատամները խորթ ու բորթութիւններով լի, զրանցով նրանք հեշտութեամբ ծամում և խժուում են ամեն տեսակ պտուղներ:

Կապիկները խելացի, վրիժառու և կուլասէր կենդանիներ են, սիրում են նմանել ուրիշներին և զրա համար էլ իրենց դէմքի շարժուն մկաններով, ծամածռութիւններ են անում. նրանք արտայայտում են ցաւ, ուրախութիւն, բարկութիւն և նոյն իսկ արտասուել գիտեն:

104. Կապիկները ուտում են ամեն բան. միրք, միջատներ, թռչուններ, ձւեր—մանաւանդ սիրում են բուսեղէն կերակուրներ, զրա համար էլ ընկերովի կմտնեն մօտակայ գիւղերի բանջարահոցներ և կզողանան ամեն տեսակ բանջարներ և մրգեր—կաղամբ, ձմերուկ, սեխ, դդում, սոխ և այլն, որով ահագին վնասներ են հասցնում գիւղացիներին:

Կապիկները ապրում են ընտանիքներով և խմբերով. ծառերի խիտ կատարը նրանց բնակարանն է: Խմբե-

րով ապրելիս ունենում են իրենց առաջնորդները, որոնք խմբի միջի ամենից ուժեղները պէտք է լինեն:

Դրանց առաջնորդութեամբ նրանք գնում են որսի, յարձակում են թշնամիների վրայ և զարմանալի քաջութեամբ կուլում և պաշտպանում են:

105. Կապիկները շուտով ընտանի են դառնում և ամեն բանով աշխատում են նմանել մարդկանց, բայց գերութեան մէջ նրանք տխրում են և շատերը շուտով կարօտից մեռնում:

Կապիկների շատ տեսակներ կան—օրանգուտան, շինպանդէ, գօրիլա և կզակապիկներ: Ամենից ուժեղը և շարը գօրիլան է. նրանց ոյժը և վրիժառութիւնը հասնում է մեծ չափերի: Կապիկները ապրում են Աֆրիկայում, Ամերիկայում և Ասիայում: Ամերիկայի կապիկների մի քանի տեսակները այնքան նման են մարդուն, որ անւանւում են մարդակապիկներ. զրանք չունեն պոչ, մարւանւում են մարդակապիկներ:

Կապիկները երկարակեաց չեն, հազիւ 10—12 տարի են ապրում:

Բ. Գ Ի Շ Ա Տ Ի Չ Ն Ե Ր

106. Գիշատիչ կենդանիները տեսակներով շատ են, մեծ մասամբ գեղեցիկ և իրենց բնաւորութեան ու պաշտպանւելու միջոցների պատճառով վտանգաւոր: Բոլոր կաթնասունների մէջ մարդկանց ամենից քիչ աջողւել է զինատիչներին ընտանի դարձնել. այդ կողմից կատուն միակ զիշատիչն է, որ ընտանի է դարձել:

107. Գիշատիչները զանազան մեծութեան են. սկսած մեր փոքրիկ, նազելի կատուից մինչև կենդանիների թամբ փոքրիկ, նազելի կատուից մինչև պատած է խիտ, գաւոր—առիւծը: Բոլորի մարմինն էլ պատած է խիտ, փափուկ մազերով կամ մորթով. ուտում են միայն միս, ունեն չորս մատներ և զրանց ծայրերին սուր ճանկեր, որոնցով և ծւատում են կերակուրն ու որսը. ճանկերը գործ են ածում, որպէս զէնք և պաշտպանւելու միջոց:

Գիշատիչների արտաքին կազմը

Ատամների մէջ ամենից զարգացածը ժանիքներն են. սրանք երկար են լինում և սուր, զարգացած են սեղան ատամներից մի բանիսը, սրանք նոյնպէս ծառայում են քրքրելու համար. ունեն առաջին թաթերի վրայ 5 և յետին թաթերի-չորս մատներ, սուր ճանկերով. որպէս զի ճանկերը չբժանան, գիշատիչները նրանց թագցնում են փափուկ թաթերի մագերի մէջ:

108. Գիշատիչների մի խումբը, կատուի հետ ունեցած նմանութեան պատճառով, կոչուումէ նաև *կասուացեղեր*: զրանց մէջքի ողնաշարը այնքան ճկուն է, որ եթէ բարձր տեղից վայր են ընկնում, ողնաշարը չէ վնասուում. այդ ճկունութեան պատճառով էլ նրանք կարողանում են ողնաշարը ամեն կերպ ծռել—կամարաձև շինել, ուռցնել կամ փոս գցել և այլն:

109. Կատուացեղերին պատկանում են՝ ընտանի և վայրենի կատուն, առիւծը, վագրը, յովազը, իսկ ընդհանրապէս գիշատիչներին—նաև շունը, գայլը, արջը, աղէսը:

Գիշատիչները ապրում են գրեթէ ամեն տեղ երկրագրնդի վրայ, — անտառներում, անապատների մէջ, լեռներում և հովիտներում-որտեղ իրենց շուրջը գտնում են կերակուր, յարձակելով, յափշտակելով իրենցից թոյլ կենդանիներին վրայ, զրանց նախ տանջում են և ապա ուտում:

110. Գիշատիչները բերում են մէկից մինչև եօթ ձագ, որոնց մեծացնելու հոգսը մօր վրայ է ընկնում, ծնելուս ձագերի կոյր են լինում և յետգհետէ բացում են աչքերը: Աչքերի բիբերը ցերեկը երկարում են և գիշերը լայնանում, ուստի և գիշերները նրանք աւելի լաւ են տեսնում: Զգայարաններից առանձնապէս զարգացած են լինում հոտոտելիքն ու լսելիքը:

Գիշատիչ կատուացեղերից մենք ծանօթանանք մեր ընտանի կատուի և ամենից մեծ գիշատիչի՝ առիւծի հետ:

2. Կ ա ս ու լ

111. Ընտանի կատուն առաջ է եկել վայրենի կատուններից և մարդիկ զրանց տանու կենդանի դարձնելով, օգտուում

Կասուացեղ կենդանիներ

են նրանց մի քանի յատկութիւններից — այն է սուր ճանկերից և ճարպիկութիւնից — տնային մկները ոչնչացնելու համար: Կան կատունների բազմաթիւ տեսակներ, որոնք թէ մեծութեամբ, թէ գոյնով և թէ արտաքին տեսքով զանազանուում են, բայց ներքին կազմուածքով բոլոր կատուները միմեանց նման են: Կատուն ունի կլոր գլուխ, մանր, շարժուն ականջներ, տափակ քիթ, և կոլոր աչքեր. դնչի ըայ կան մի քանի երկար մագեր-բեխերը, որոնք շօշափելիքի տեղ են ծառայում:

112. Կատունների ատամների մէջ ամենից աւել զարգացած են ժանիքները, զրանցով է որ նա քրքրում է ձեռքին ընկած որսը, մանտանդ մկներին: Կատունների պարանոցը կարճ է, մէջքը ճկուն և պոչը երկայն, ոտները կարճ են, հաւասար, ծայրերին, կան փափուկ մատներ, որոնք վերջանում են սուր ճանկերով. ճանկերը, որպէս նրա ամենալաւ զէնք, սովորական ժամանակ ծածկւած են փափուկ թաթերի մէջ, զրա համար էլ չեն մաշուում և դուրս են ցցում, երբ նա ցանկանում է յարձակել որսի վրայ կամ երբ պաշտպանում է ուրիշներից: Շնորհիւ իր ճանկերի կատուն մեծ արագութեամբ մագլցում է ծանկերի վրայ և այնտեղից ցատկում է ցած կամ թռուչում ճիւղից ճիւղ: Կատուի զգայարաններից առանձնապէս զարգացած է հոտառութիւնը, որովնա գտնում է իր որսը նաև մութ ժամանակ և դա շնորհիւ նրա աչքերի, որով նա մթութեան մէջ նոյնիսկ տեսնում է: Կատուն բերում է մօտ 7—8 ձագ, որոնց կերակրում է իր ստիճներով. կատուի ձագերը առաջին մի քանի օրում կոյր են լինում: Կատունները մկների թշնամիներն են, և մեծ ճարպիկութեամբ բռնում են նրանց և, նախ քան ուտելը, սիրում են չարչարել: Կատունները ապրում 8-10 տարի և ծերանալով կորցնում են իրենց բուրբը:


Կենդանիների արտաքին կենսակերպ

2. Ա ո խ ռ ծ:

113. Բոլոր մեզ յայտնի գիշատիչ կենդանիների մէջ առիւծը ամենից ուժեղն է, ամենից մեծը և ամենից գեղեցիկը. նրա երկարութիւնը մի սաժենից աւելի է, իսկ

Առիւծի արտաքին

բարձրութիւնը մօտ երկու արշին. հէնց այս յատկութիւններն է պատճառ, որ նրան անւանում են կենդանիների թագաւոր: Բայց, չնայած իր թէ մեծութեան և թէ ոյժին, առիւծը շատ նման է կատին: Նրա կլոր գլուխը, կարճ վիզը, թաւ, խիտ և գեղեցիկ բաշով հաստ և փափուկ ոտները, փնջով վերջացող պոչը և մանաւանդ վերայի սիրուն մորթը յիշեցնում են մեր կատին-միայն թէ առիւծը նրանից շատ աւելի մեծ է, ուժեղ և գեղեցիկ:



№ 40. Առիւծ.

Առիւծների բնաւորութիւնը

114. Առիւծները ապրում են տաք երկրներում. սիրում են անտառոտ հովիտներ, ուր ապրում են միայնակ—իրենց ընտանիքով և թոյլ չեն տալիս որ իրենց շրջանում ուրիշ առիւծներ լինեն: Վա նրա համար է, որ առիւծներին շատ կերակուր է հարկաւոր, իսկ եթէ իր շուրջը իր նման ուրիշ կենդանիներ լինեն, այն ժամանակ նրա կերակուրը կքշանայ: Առիւծները որպէս գիշատիչներ ուտում են միս և այն էլ կենդանիների միս և որսի գուրս են գնում գիշերները, իսկ ցերեկները պարկած հանգստանում են իրենց որջերի մէջ: Չնորհի իրենց մեծ ոյժի և այն բանի, որ նրանք ահագին ցատկումներ են անում, առիւծները նոյն իսկ բարձր ցանկապատների վրայից թռչում են ներս և այդտեղ յարձակում են ոչխարի հօտի կամ տաւարի նախրի վրայ և ջարդելով տանում են մի քանի

աջարներ, ճիշտ այնպէս, ինչպէս կատուն մկանը, առնում են 5-6 փութ կշռող աշառին բերնի մէջ և նորից ցանկապատից թռչելով տանում են իրենց որջը ուտելու:

Երբ առիւծը վայրենի կենդանիներ է բռնում դառնում է աւելի խորամանկ և զգոյշ. նա թագնւում է առուների, գետերի մօտ և երբ վայրենի կենդանիները գալիս են ջուր խմելու, նա միանգամից յարձակւում է իր որսի վրայ, թաթի ուժեղ հարածով ջարդում է կենդանու ողնաշարը և ապա, առնելով բերան, տանում է իր որջը:

115. Առիւծները երբ կուշտ են, ոչ ոքի, մանաւանդ մարդի վրայ, չեն յարձակւում, բայց նոյն բարի առիւծը սարսափելի է. երբ սոված է. այդ ժամանակ նա սկսում է մոնչալ, նրա ձայնը լսում է մի քանի վերստի վրայ և բոլոր կենդանիներին ահ ու սարսափի մէջ է գցում: Իր սոված ժամանակ նա յարձակւում է ամեն տեսակ որսի վրայ, եթէ նոյն իսկ նրանք հարիւրաւորներ լինեն և ուժեղ:

116. Առիւծի հասցրած վնասները մեծ են. բաւական է մի որևէ գիւղի մօտ առիւծը բուն դնէ և ահա նա կսկսի որ որի վրայ յափշտակել ողջ տաւարը, դրա համար է որ տեղացիները ամեն կերպ աշխատում են ազատւել այդպիսի վտանգաւոր հարեանից, սպանելով նրան:

Վիրաւոր առիւծը

Երբ առիւծին վիրաւորում են նա ուղղակի սոսկալի է դառնում. մի կողմից լիզում է իր վերքերը, միւս կողմից սկսում է մի քանի սաժենանոց թռիչքներ անել և մի քանի գնդակներ նրան վերջապէս գետին են գլորում:

117. Առիւծի միակ օգուտը նրա հրաշալի մորթն է, որ ծախւում է մի քանի հարիւր ըուբլիով և ծառայում է որպէս զարդ պատերի վրայ, ոտների տակ փռելու և մուշտակներ կարելու:

Առիւծները ապրում են երկար—մօտ 20—25 տարի: Առիւծին նման է վագրը, իսկ կատին շատ նման է վայրենի կատուն, որը ընտանի կատուից զանազանւում է միայն իր մեծութեամբ:

Գ. Չ Ն Ա Յ Ե Ղ

Շնացեղերի տեսակները

118. Չնացեղ բոլոր կենդանիները էլ գիշատիչներ են և կերակրում են մսով և բուսեղէնով: Դրանց մէջ է գտնուում մարդու ամենասիրելի և ամենահաւատարիմ կենդանին՝ շունը որպէս և մարդու համար վտանգաւոր զայլը, խորամանկ աղւէսը, նենգ բորենին և համբաքայլ, ուժէղ արջը և ուրիշ կենդանիներ:

Փանօթանանք մեր ամենահաւատարիմ և սիրելի կենդանու շան հետ:

Յ. Շ Ո Ւ Ն Ր

Շան կազմը

119. Չների մարմինը նիհար է, գլուխը համեմատաբար փոքր, ոտքերը բարակ և վերջանում են ճանկերով, աչքերը մեծ են և շարժուն, ախանջները մեծ և սուր—գրա համար էլ շները շատ սուր լսողութիւն ունին: Շները ունեն 36—48 ատամներ, որոնցից 12-ը կտրիչ ատամներ: Նրանք լաւ վազեղ են, արագ շարժուող և լաւ լողալ գիտեն:

Շների յատկութիւնները

120. Չների զգայարաններից ամենից զարգացած են լսողութիւնը և հոտոտելիքը, մանաւանդ վերջինը, որով նրանք շատ անգամ նոյն իսկ առանց տեսնելու և լսելու գտնում են որսի կամ և մի այլ առարկայի հետքը: Մարդիկ օգտուել են շան այս յատկութիւնից և նրանց գործ են անում ոչ միայն իրենց տունը, ոչխարների և տաւարի հօտը գայլերից և այլ գաղաններից պաշտպանելու, այլ և զանազան կենդանիներ և մանասանդ թռչուններ որսալու համար: Շները բացի այդ շատ խելացի և հաւատարիմ են. նրանց մարդիկ հաւատում են իրենց տունը, բազը, ընտանի կենդանիներին, որովհետեւ գիտեն, որ նրանք օտար մարդի և անասունի թոյլ չեն տալ տուն, բազ կամ հօտի մէջ մտնելու և գողանալու կամ տանելու այն բոլորը, ինչ որ շան խնամքին է յանձնուած:

121. Չների խելքը հնարաւորութիւն է տւել մարդին նրանց ամեն տեսակ բանի ծառայեցնելու. կան լժուղ, բառցուղ շներ, նամակատար շներ, փրկարար շներ և այլն:

122. Չների շատ տեսակներ կան. սկսած փոքրիկ հազիւ չորս վերջոյ մեծութեան շներից—մինչև արջին ու կէս բարձրութիւն և երկու արջին երկարութիւն ունեցող շները: Կան բարակներ, նիհար շներ, կան հաստ և չաղ ու բրթոտ շներ, և, նայելով շների մեծութեանը, տեսակներին, յատկութեանը, մարդիկ օգտուում են նրանցից զանազան կերպով:

Շների տեսակներ

Չները բերում են 6—12 ձագ, կերակրում են ձագերին իրենց կաթով և շատ խնամքով պահպանում են նրանց: Բացի ընտանի շներից կան վայրենի շներ, որոնք շատ վտանգաւոր են և յիշեցնում են գայլերին և նրանցից ոչ մի բանով չեն զանազանում:

Գ. ԿՐԾՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ

123. Կրծողներ—այսպէս են անւանում այն բոլոր կաթնասունները, որոնք կրծելով կամ խժռելով են իրենց կեանքի համար սնունդ գտնում. և որովհետեւ այդ բանը կատարում են իրենց աստիճանով, ուստի բնական է, որ նրանց ատամներն էլ պէտք է ուրիշ կազմութիւն ունենան:

Ինչպէս են կոչուող

124. Եւ իսկապէս. կրծողները, որոնց ընտանիքին պատկանում են՝ մուկը, սկիւռը, ճագարը, նապաստակը, իրենց բոլոր տեսակներով, ժանիքներ չունեն և գրա համար էլ սեղան և կտրիչ ատամների միջի տարածութիւնը դատարկ է, իսկ կտրիչ ատամները, որոնք չորս հատ են, արմատներ չունեն և գրա համար էլ ընկնում են և դրանց տեղը դուրս են գալիս նոր կտրիչներ, որոնք միշտ իրար վրայ քսւելով, համ մաշում են, համ էլ սրուում և կարծր առարկաներ կրծելու և խժռելու համար դառնում են ամենից լաւ գործիք: Կրծողների օտաների մատները հինգ հատ են. դրանց ծայրերին կան սուր եզրուկներ, որոնք օգնում են նրանց թէ պաշտպանելու և թէ մագլցելու:

Կրծողների աստիճանները

125. Կրծողների սիրելի կերակուրը բուսեղէնն է, մանաւանդ արմատներ ունեցող բոյսեր. նրանք սիրում են

Կրծողների վնասը

նոյնպէս կարծր կեղև ունեցող բոյսեր, հացահատիկներ, շաքար, ծառերի կեղևներ, կաղամբ և այլն:

4. Մ ու կ

Հէնց այդ առամներին են պատճառ, որ կոծողների մեծ մասը մարդու համար դարձել է մի պատիժ. նրանք կրծելով և մանրելով ոչնչացնում են ոչ միայն տան պահարաններում գտնւած գանազան պաշարեղէնները, հագուստները և այլն, այլ ցորենով և այլ հատիկներով լի շտամարանների հունդերը մի քանի ամսւայ մէջ մկների շնորհիւ մանրանում, ձաւար են դառնում: Նոյն աւերմունքը գործում են նապաստակները բանջարանոցներում, տնկարաններում և պարտէզներում, ուր նրանք կրծելով կաղամբի արմատները կամ մատաղ տունկերի բունները, նրանց չորանալու պատճառ են դառնում:

Իսպախիկ մկներ

126. Բայց բոլոր կրծողների մէջ մարդուն ամենից մեծ մնաս տուողը դաշտային մկներն են, որոնք հազարաւորներով մտնում են արտերի մէջ և, մի կողմից կրծում են ցորէնի գարու, աճարի ցողունները, միւս կողմից քանդելով գետինը, փորում և արմատահան են անում բոլոր հացատունկները:

Կոծողների բազմանալը

127. Մեզ բոլորիս ծանօթ ընտանի մուկը տարին 5—6 անգամ ձագեր է բերում և ամեն անգամ 6—8 հատ, որոնք նոյն տարւայ մէջ մի քանի անգամ ձագակալում են. դրա շնորհիւ մի արու և մէկ էգ մուկը մի տարւայ ընթացքում ճուտեր բերելով, դրանց թիւը հասցնում են մօտ հազարի:

128. Հէնց այդ բազմանալն է պատճառ այն բանի որ, շնայած մարդիկ մկների դէմ ամեն միջոցներով կռոււում են, բայց դժբախտաբար, ոչ մի միջոց չի կարողանում արմատապէս ոչնչացնել մկներին. միակ կատուն է, որ մեր տներում մկների դէմ կռւում է և հալածում ու հարիւրներով նրանց սպանում, ուտում է:

Ե. Ս Մ Ա. Կ Ա. Ի Ո Ր Ն Ե Ր

129. Սերակաւոր կոչւում են այն կաթնասունները, որոնք ոտների վրայ՝ մատների տեղ ունեն եղջիւրային սմբակներ. մատները լինում են կամ գոյգ-գոյգ, այսինքն երկու, չորս հատ կամ՝ մէկ, երեք, հինգ-հատ: Սմբակները նոյն մատներն են, միայն ժամանակի ընթացքում նրանք փոխել են իրենց ձևը և դարձել այն սմբակները, որ մենք տեսնում ենք ձիերի, եղների, ոչխարների եղջերուների կամ ուրնգեղջիրների ոտներին:


Իճէ ԵԳ սմբակներ

130. Սմբակաւորների տեսակները բազմաթիւ են: Նրանք, որպէս և գիշատիչներ, բոլոր կաթնասունների մէջ ամենից խոշոր կենդանիներն են: Սրանք կերակրւում են բուսեղէնով, արածում են բազմաթիւ հօտերով և անտառներում, ճահիճների մէջ կամ թէ ապրում են լեռների վրայ, մագլցելով ժայռերի կատարները: Որովհետեւ բոլոր սմբակաւորները համեզ միս ունեն, դրա համար էլ գիշատիչ զագանները շատ են սիրում դրանց որսալ և ուտել, իսկ սմբակաւորները աշխատում են պաշտպանել զրանցից՝ փախչելով. հէնց այդ է պատճառը, որ սմբակաւոր կենդանիների մեծ մասը նաև շատ լաւ փախչողներ են և իրենց վերջաւորութիւններն էլ յարմարեցրել են լաւ փախչելու:

Սմբակաւորների կեանքը

131. Սմբակաւորների ոտկերների մէջ մի աչքի ընկնող պակաս կայ—դա նա է, որ նրանք ակրակներ չունեն. կայ տարբերութիւն նաև սննդառութեան գործարանների մի քանիսի մէջ. օրինակ, սմբակաւորների մի քանի տեսակները, ինչպէս կովը, եզը և ընդհանրապէս այն կենդանիները, որոնք կոչւում են որոճողներ, փոխանակ մի ստամոքսի ունեն չորս ստամոքսի

Որոճողների ստամոքս



№ 41. Որոճողների ստամոքսի կազմը.

մոխս կամ, ճիշտն ասած, ստամոքսը կողմաժ է յորս քաժանուններհց:

132. Երբ կենդանին խոտ է ուտում ատամներով, խոժոռ կտրատած խոտը սկզբում գնում է ստամոքսի առաջին մասը, այդտեղից փափկած կերակուրը մտնում է երկրորդ մասը. յետոյ միայն կերածը երկրորդ ստամոքսից յետ է բերում բերան և սկսում է ծամել, տրորել, մանրացնել կամ, ինչպէս ասում ենք, կենդանին սկսում է որոճայ: Որոճած կերակուրը այժմ բերնից գնում է ստամոքսի երրորդ մասը և այստեղից անցնում է չորրորդ և ապա մտնում աղիքների մէջ:

Ասամներ  
եւ եղջիւր-  
ներ

133. Որոճողների ատամներն էլ ուրիշ կերպ են. այն ինչ ներքին ծնոտի վրայ կան 6—8 կտրիշ ատամներ, վերին ծնոտի վրայ կտրիչներ չկան. իսկ սեղանատամները, ինչպէս և բոլոր սմբակաւորներինը, զարգացած են և ալիքաւոր: Բացի այդ, որոճողները ունեն և մի ուրիշ տարբերութիւն—սրանք բոլորն էլ ունեն եղջիւրներ, որոնք կամ մշտապէս կպած են գլխին, ինչպէս եզներինն ու գոմէշներինն է կամ թէ տարին մի անգամ ընկնում են և դրանց տեղը նոր եղջիւրներ են գուրս գալիս. այս վերջին տեսակ եղջիւրներ ունեն բոլոր եղջերունները:

134. Մեզ յայտնի սմբակաւորներից ծանօթանանք երկամբակ ոչխարի և միասամբակ ձիու կազմի և կեանքի հետ:

Ո չ խ ա ր

135. Մեզ շրջապատող և մեզ հետ ապրող կենդանիների մէջ հազիւ թէ լինի մի ուրիշ կենդանի, որ մարդկանց այնքան օգուտներ տայ, որքան ոչխարը:

Ոչխարներին մի քանի հազար տարի է ինչ մարդիկ ընտանի են դարձել և նրանցից զանազան նոր տեսակներ առաջացրել:


Ոչխարի  
տեսակները

136. Ոչխարները մեծ չեն, հազիւ 1—2 արշին երկարութիւն ունենան և 1—1½ արշին բարձրութիւն: Նրանց կազմը նոյնն է, ինչ և բոլոր որոճողներինը, այն առաւելութեամբ, որ սրանց մի քանի տեսակները ունեն

պոչի տեղ ճարպային մի գունճ-դմակ, որը երբեմն մի քանի փութ է քաշում և առանց այն էլ դժւարացնում ոչխարի ծանր շարժումը և նրան անպաշտպան թողնում:

137. Չնորհիւ մի կողմից իր օգտակարութեան, իսկ միւս կողմից իր մեղմ, խաղաղ բնաւորութեան, յիմարութեան, վախկոտութեան և պաշտպանելու միջոցներից զուրկ լինելուն, ոչխարը մարդի կողմից առանձին խնամքի է արժանացել. տասնեակ զամբռ շներ, հովիւներ և այժեր պաշտպանում են ոչխարների հօտերը այս կամ այն վտանգից: Որպէս և այժերը, ոչխարները երկսրմբակային երկկնդականի կենդանիներ են և ապրում են 15 տարուց ոչ աւելի. բերում են 1-3 զաւներ և ծերանալուս փոքր առ փոքր թափւում են նրանց բոլոր ատամները:

Բնաւորու-  
թիւնը



№ 42. Գովի կմախքը.

138. Ոչխարը ասեցինք, ամենօգտաւէտ կենդանին է բոլոր ընտանի կենդանիների մէջ. և ճիշտ որ, ոչխարներին կթում, նրանց կաթից պանիր, իւղ, մածուն են պատրաստում, միսը ուտում են, բուրդը տարին մի քանի անգամ խուզում և զանազան գործւածքներ են շինում, դմակը և ճարպային այլ մասերը գործ է ածում որպէս իւղ. նոյն իսկ ոչխարի աղբը մեծ օգուտներ է տալիս մարդկանց, նրանով պարարտացնում են դաշտերը, բանջարանոցները, իսկ չորացնելուց յետոյ գործ են ածում, որպէս վառելիք:

Օգտակարութիւնը

139. Ոչխարները ապրում են աչխարհիս զրեթէ ամեն երկրներում և մեծ մասով արածում են դաշ-

տերու՛մ, անտառների բաց տեղերում, իսկ ձմեռը նրանց կերակրելու համար յատկապէս խոտ են ամբարում: Ոչխարների բազմաթիւ ցեղերից յայտնի են *վերիկոսի* ոչխարները, որոնք ունեն շատ խիտ, քնքոյշ և զանգուր մազեր. դրանց բրդից, գործում են ամենանուրբ շալեր, կան յատկապէս մսացու անգլիական ոչխարներ, որոնք 6-7 փութ են կշռում և արժէն 30-50 բուբլի: Մեր երկրի ոչխարները դմակաւոր են, ունեն կոպիտ միս, բուրդն էլ քնքոյշ է, բայց շատ դիմացկուն են և տալիս են 15-30 ֆունտ դմակ:

140. Ոչխարները պահպանւում են մեծ հօտերով, որոնց մէջ լինում են երբեմն 50 հազար ոչխար. և եթէ չլինէին դրանց պահպան շները և հովիւները, ոչխարները, շնորհիւ իրենց վախկոտութեան և յիմարութեան, կամ գազանների գոհ կզնային կամ քարափներից ձոր և ջուր կ'ըթափէին: X

2 ի

141. Միսամբակաւորների մէջ մենք ճանաչում ենք երեք տեսակ ընտանի կենդանիներ—ձի, էջ և ջորի:

Ձիև ոչ միայն սմբակաւորների, այլ և բոլոր կենդանիների մէջ, շնից յետոյ, մարդին ամենից հաւատարիմ, ամենից սիրելի և օգտաւէտ կենդանին է: Հէնց այդ է պատճառը, որ մարդ ուր էլ որ ապրի, եթէ միայ հնարաւոր է, իսկոյն ձեռք է բերում ձի, նրան պահում, մեծացնում և բազմացնում է: Գրա շնորհիւ է, որ այսօր կան ձիերի բազմաթիւ տեսակներ, սկսած բելգիական ահագին, ուժեղ մինչև 150 փութ քաշող ձիերից, մինչև փոքրիկ մանրաձիերը *պօնի* անունով. որոնք հազիւ մի արշին բարձրութիւն ունեն:


Ձին, ասեցինք, հաւատարիմ, խելացի կենդանի է. մարդիկ ձիւն այդ յատկութիւնից օգտւել են և նրանց գործ են ածում հեծնելու, ծանրութիւններ տեղափոխելու, մեքենաներ, գործիքներ շարժելու և այլ պէտքերի համար: Ձին օրական կարող է հանգիստ անցնել 40-50 վերստ, լաւ ճանապարհով նա կքաշի 50-60 փութ ծանրութիւն

Ձիերի տեսակները

Նրանց յատկութիւնը

և բացի այդ, շնորհիւ մկանային իր ոյժի, կարող է պտտել զանազան մեքենաներ օրական 10-12 ժամ շարունակ: Բացի այդ ձիերը լաւ փաղչողներ են. ձիարշաւների ժամանակ ձիերը մի րոպէում 1-1½ վերստ տարածութիւն են կտրում, իսկ սովորական քայլով մի ժամում 7—8 վերստ անցնում, ունենալով իրենց մէջքի վրայ նաև ձիաւորին:

142. Բացի այս յատկութիւններից ձիերը նաև ամենաուրիշ գեղեցիկ կենդանիներն են. մանաւանդ սիրուն են բիւնը նրանց մեծ, խելացի աչքերը, որոնց մէջ և՛ սէր կայ և՛



№ 43. Ռընգեղջիւր.

ուրախութիւն և՛ տխրութիւն—գրա համար է, որ ձին դառնել է մարդիս ամենալաւ ընկերը. կան ազգեր, ինչպէս արաբացիք, որոնք իրենց ձիերին իրենց կանանցից և երեխաներից աւելի են սիրում:

143. Ձիերը խոտակեր են և սիրում են ազատ արածել խոտալի մարգագետիններում, նրանք նաև լաւ լողալ գիտեն, ոտներով պաշտպանւել, պոչի և գլխի վրայի երկար մազերով բշտում են ճանճերին, միջատներին. ձիերը ունեն շատ սուր լսողութիւն և հիանալի յիշողութիւն. ամենափոքրիկ շարժումը կամ ձայնը զբաւում է նրանց ուշադրութիւնը և նրանք ականջները շարժում են ձայնի կողմը և կամ խրխնջում կամ ոտներով տոփում գետինը.

Զգայալ բաները

իսկ սուր յիշողութեան օգնութեամբ նրանք ճանաչում են իրենց տիրոջը, բարեկամին, թշնամուն, անցած ճանապարհը, կացարանը, մանաւանդ այն տունը, ուր ապրել են: Զիան հաւատարմութեան և խելօքութեան մասին կան բազմաթիւ հետաքրքիր պատմութիւններ:

Յեղեբ

144. Զիերը բերում են մի ձագ-քուռակ, որի մարմինը պատած է մագերով և ծնւում են թէ՛ չէ իսկոյն ման են գալիս ու մինչև 5—6 ամիս ծծում իրենց մօր կաթը և մինչև մի տարեկան հասակը գնում են մօր կողքից: Զիերի ամենալաւ տեսակները արաբական են: Նրանք չափազանց գեղեցիկ են և լաւ վազել գիտեն. փախչելու կողմից արաբական ձիերին գերազանցում են անգլիական արշաւի ձիերը, իսկ քաշելու կողմից յայտնի են բելգիական ծանրաքարշները: Մեր երկրում ամենալաւ ձիերը Ղարաբաղի ձիերն են, որոնք, թէ՛ և փորրիկ, բայց շատ գիմացկուն, լաւ վազող և սակաւազետ են:

Գ. Թ Ռ Զ Ո Ի Ն Ն Ե Ր

145. Ողնաշարաւոր կենդանիների մի ուրիշ շատ մեծ խումբ կազմում են *ռոյունները*, որոնք տարածւած են ողջ երկրագնդի վրայ, մանաւանդ չափաւոր և տաք գոտիներում. թռչունների թէ՛ տեսակները և թէ՛ ցեղերը բազմաթիւ են. բաւական է ասել, որ մինչև այժմ յայտնի են մօտ 12 հազար տեսակ թռչուններ:

Թռչունների արիւնը կարմիր է և աւելի տաք քան միւս ողնաշարաւոր կենդանիների արիւնը: Նրանց մարմինը պատած է զանազան մեծութիւն, գոյն և փափկութիւն ունեցող փետուրներով: Վերջաւորութիւններից առաջին գոյգը փոփոխւած են թևերի, զրանց օգնութեամբ նրանք թռչում են և կտրում ահագին տարածութիւններ: Ոտների վրայ ունեն չորսից ոչ աւելի մատներ. մատների ծայրերին կան սուր ճանկեր, որոնք նոյն եղունգներն են և յարմարեցրած են առարկաներ բռնելու, երբեմն նաև պաշտպանելու համար: Թռչունների ծնօտները երկարացած են և զարձած *կտուց*. զրանց վրայ առամներ չկան և զրա համար էլ թռչունները իրենց կե-

Տեսակները և սարածումը

Մարմնի կազմը և գործարաններ

րակուրը առանց ծամելու, մանրացնելու ուղղակի կուլ են տալիս: Սրանց սիրտը նոյն կազմը ունի ինչ և կաթնասուններինը. այն է—բաղկացած չորս բաժանմունքներից. շնչում են թոքերով, որոնց շարունակութիւնը կազմում են օդային փուչիկներ. օդը սրանց միջով գնում է թոքեր, սրանք ուռչում են և հնարաւորութիւն են տալիս թռչուններին հեշտութեամբ թռչելու: Թռչունները բազմանում են ձևերից, որոնց վրայ 28—25 օր թուլսս են նստում և իրենց մարմնի ջերմութեամբ ձևերի ջերմութիւնը հասցնում են 38 և աւելի աստիճանի, որից յետոյ ձևերից դուրս են գալիս ձագերը:

146. Թռչունները շինում են իրենց համար բներ—մի քանիսը ծառերի վրայ, միւսները խոտերի մէջ, ծառերի միջուկներում. կան թռչուններ, որոնք ձու են ածում ուղղակի գետնի վրայ—աւազի մէջ: Թռչունները ապրում են գոյգ-գոյգ, գործում են խմբերով, իսկ չոււմ հազարներով միասին: Մանաւանդ կանոնաւոր և խելացի է կարգադրւած նրանց շուն, երբ աշնանը նրանք գնում են հարաւ-տաք երկիրներ: Այդ շուն, կատարում է մեծ կարգապահութեամբ. նրանք ունենում են իրենց առաջնորդներ, գլխաւորներ, պահապաններ, ուղեցոյցներ և այլն, և բոլորն էլ հնազանդւում են զրանց այնքան, ինչքան որ սրանք իրենց պաշտօնը լաւ են կատարում, հէնց որ մէկն ու մէկը ծոյլ կամ անուշազիր գտնւի, թռչունները այդպիսին դուրս են անում և նրա տեղը ընտրում մի ուրիշին:

Թռչունները միմեանց հետ ունեցած նմանութեամբ բաժանւում են *ռք գլխաւոր քաժիկների*, ընտանիքների: Ծանօթանանք այդ խմբերին պատկանող մի քանի տեսակների հետ:

Ս ա գ

147. Սագերը, որպէս և բոլոր թռչունները, երկօտանի կենդանիներ են. սրանց ոտները այնպէս են կազմւած, որ համ կարող են ման գալ, համ էլ ջրում լողալ—այս վերջին յատկութեամբ սագերը պարտական են իրենց լայն թաղանթաւոր թաթերին, որոնք նրանց հա-

Բնաւորութիւն և սեղափոխւաքիւն

Թաքերի կազմը

մար թիբրի դեր են կատարում և լողալիս նրանք փուռում են և ջրին հրում—զրանով նրանք առաջ են լողում, ապա թաղանթները ծալում են և նորից նոր հարւածի համար ձգում:

148. Սագի ոտները ուրիշ թռչունների նման մարմնի մէջտեղումը չէ, այլ դէպի յետ—այդ պատճառով էլ ման զալուս նրանք օրօրում են:

Սագի գլուխը փոքր է, կտուցը բութ և ծայրը փափուկ. այս ծայրին միացած են գլխից դուրս եկող մի քանի նեարդեր, զրանց օգնութեամբ սաղը կարողանում է իր կտուցով շօշափել և ջոկել թէ ջրի և թէ ցեխի մէջ գտնւած կերակուրը. կտուցի միջին մասում, երկու կողմից ունի քթի ծակեր, իսկ գլխի վրայ ա կանջի, որ ուղղակի գլխի մէջ է գնում:



№ 44. Սագի կմախքը.

Փետուրներ  
և նրա  
կազմը

ուղիղ գնացողը անւանւում է առանցի, որին երկու կողմից կպած են աւելի բարակ և քնքոյշ եղջրային—մասերը հոպիւարը: Առանցքի ցածի մասը ամրացած է կաշւի մէջ: Թևերի, որպէս և պոչի վրայի փետուրները աւելի մեծ են լինում և հաստ, այն ինչ՝ միւս մասերինը և մանաւանդ կրծքի վրայի փետուրները շատ քնքոյշ են և մանր:

150. Թռչունների համար փետուրները ահագին գործ են կատարում. սրանց օգնութեամբ է, որ նրանք թռչում են, պահպանում են մարմնի տաքութիւնը, պաշտպանում են ցրտից, խոնաւութիւնից, քաւուց և այլն:

Սագի մորթու մէջ կայ մի տեսակ իռոպանաւն նիւթ, որով նա օծում է իր մարմինը և այդ է պատճառը, որ սագը ջրից դուրս գալիս նոյնպէս չոր է, ինչպէս մինչև ջուր ընկնելը: Այդ նիւթը նրանք կտուցներով հանում են պոչի վերին մասի գեղձերից և հերթով օծում են իրենց փետուրները:

151. Սագերի կմախքը ամեն բանով նման է միւս ողնաշարաւոր կենդանիների կմախքին, և եթէ կայ զանազանութիւն—դա յարմարեցրած է թռչունի թռչելուն օգնելու: Այդ բանում թռչուններին մեծ ծառայութիւն են անում ոսկրները. սրանցից մի քանիսնների միջի մասը լի է օդով. այն ինչ միւս կենդանիներին լի է ոսկրի ուղեղով: Օդը, որպէս թեթև բան, հեշտացնում է թռչունների թռիչքը:

Ոսկրներ  
և նրանց  
դերը

Սագի ոսկրները նոյնն են ինչ և միւս կենդանիների. նա ունի գլխի, երեսի ոսկրներ, ողնաշար, վզի ողեր, անրակ, կողեր, կրծոսկր. վերջաւորութիւնները նոյնպէս մարդու վերջաւորութիւններին նման են, միայն թէ պատած են սրբախաւան փետուրներով: Թռչունների, ուրեմն և սագերի, ոսկրներից ամենաուժեղը՝ կրծքի լայն, ամուր և փոքր ինչ դուրս ընկած ոսկրն է, սրան կպած են բարակ կողերը, որոնք և կազմում են թռչունի կրծքի վանդակը:

152. Հետաքրքիր են սագի մարսողութեան գործարանները: Որովհետև թռչունները ստամոքի չունեն—զրա համար էլ կերակուրը բերնից առանց մանրանալու գնում է ուղղակի որկոր. այստեղից անցնում է ստամոքս. բայց թռչունները մի ստամոքսի տեղ ունեն երեք ստամոքս. և այսպէս, կերակուրը նախ գնում է առաջին ստամոքս, որը կոչւում է նաև կսաման. այստեղ նա մի առժամանակ մնում է, փափկում ու ուռչում, յետոյ միայն այստեղից նա անցնում է երկրորդ ստամոքս—գրմուռն. զրմուռնից նոր մտնում է երրորդ ստամոքսի՝ ֆարնիգի մէջ: Այս վերջին ստամոքսի մէջ, որը շատ ամուր մկաններ ունի, նրանք տրորում և մանրանում են, այդտեղ են ժողովւում բոլոր ծանրամարս բաները—պինդ քարեր, կարծր

Մարսողութեան գործարաններ

հունդեր. այդ քարերից սազը պատրաստում է ձուի կեղևի համար հարկաւոր կրային մասերը:

Կեանք եւ բազմա-նալը

153. Սագերը լինում են ընտանի և վայրենի. դրանք ապրում են ամեն կլիմաներում և մանաւանդ այնտեղ, ուր շատ ջուր կայ: Տարւայ ընթացքում ածում են 60—80 ձու և թուխս են նստում 8—10 ձւերի վրայ:

Սագերը սիրում են ապրել խմբովին, երամներով, ունեն իրենց առաջնորդները, հրամանատարները, որ պաշտպանում են իրենց խնամքի տակ գտնւած հարիւրաւոր սագերին:

Սագերը ապրում են 10—12 տարի. լաւ սազը կըշտում է 6—8 փունտ և, բացի համեղ մսից, տալիս է լաւ փետուրներ և մանաւանդ ընթոյշ աղւամազ:

Գ Ի Չ Ա Տ Ի Չ Ն Ե Ր

154. Գիշատիչ թռչունները ունեն սուր, երկար և ուժեղ կտուցներ. դրանցից վերինը աւելի երկար է և խիստ կռացած դէպի ներքև. կտուցի հիմքում կան երկու ծակեր—դրանք շնչածակերն են: Գիշատիչների ոտները հաստ են, ուժեղ և ծայրերին կան սուր եղունգներ կամ մազիլներ: Գիշատիչների ձագերը, երբ ձւից դուրս են գալիս, մարմնի վրայ փետուրներ չեն ունենում և մայրերը խնամում են ձագերին այնքան, մինչև որ սրանց թևերը զարգանում են և սովորում թռչել և իրենք իրենց համար կերակուր գտնել:

Ցասկու-րիւններ



№ 45. Տայլամ.

Գիշատիչ թռչունների մէջ ամենից յայտնին, ուժեղը և լաւ թռչողը թռչունների թագաւոր—արծիւն է:

Արծիւն ունի փոքրիկ գլուխ, սուր, մեծ աչքեր և ուժեղ, կռացած, ամուր կտուց. կուրծքը մեծ է, դուրս ընկած և փոքր ինչ սուր, որով և թռչելուս հեշտութեամբ օդ է կտրում և շարժումներ անում: Ոտները հաստ են բարձր, թաւոտ և չափազանց ուժեղ. իսկ շանկերը երկար ու սուր. կտուցն ու մազիլները գիշատիչների, ուրեմն և արժւի, ամենազխաւոր գէնքեւն են. սրանցով է որ նա կարողանում է յարձակել իր որսի վրայ և նրանց մի ակնթարթում ճանկերի մէջ առնելով վերև է բարձրացնում:

Արծիւն ունի փոքրիկ գլուխ, սուր, մեծ աչքեր և ուժեղ, կռացած, ամուր կտուց. կուրծքը մեծ է, դուրս ընկած և փոքր ինչ սուր, որով և թռչելուս հեշտութեամբ օդ է կտրում և շարժումներ անում: Ոտները հաստ են բարձր, թաւոտ և չափազանց ուժեղ. իսկ շանկերը երկար ու սուր. կտուցն ու մազիլները գիշատիչների, ուրեմն և արժւի, ամենազխաւոր գէնքեւն են. սրանցով է որ նա կարողանում է յարձակել իր որսի վրայ և նրանց մի ակնթարթում ճանկերի մէջ առնելով վերև է բարձրացնում:

156. Արծիւները ապրում են բարձր լեռներում, ուր շինում են իրենց համար բուն, կան արծիւներ որոնք ապրում են անտառներում, անապատներում:

Արծիւները մեծ մասամբ ապրում են դոյզ գոյզ և փախչում են խրմբական կեանքից. դա գուցէ և նրանից է, որ արծիւները, որպէս ամենից ուժեղ թռչուններ, կարիք չեն զգում ընկերների կողմից ոչ մի օգնութեան:



№ 46. Հիւսիսային արծիւ.

157. Արծիւները շնորհիւ իրենց ուժեղ թևերի, երկար, ամուր և լայն փուռոց փետուրների ու առողջ թորերի ամենից բարձր և ամենից արագ թռչող թռչուններն են: Չնայելով որ արծիւը ապրում է լեռների կատարներին և թռչում է օդի մէջ բարձր և հեռու, սակայն նա ունի շատ սուր տեսողութիւն. նրա աչքերից ամենամանր ճնճողակն անգամ չէ թաղչում, եթէ արծիւը նոյն իսկ մի վերստ հեռաւորութեան վրայ գտնւի նրանից: Լաւ տեսողութիւնը, ոյժը, սուր կտուցն ու ճանկերը արժւին դարձրել են թռչունների թագաւոր:

Արծիւները բերում են 1—3 ձագ և ապրում են շատ երկար—մինչև 60 տարի:

Աչք, կտուց, մազիլ

Արծւի ցեղին են պատկանում ցինը, բազէն և սրանց ստորացեղերը:


Ճ Ն Ճ Ղ Ա Յ Ե Ղ

Յասկու-  
թիւնները



№ 47. Դեղձանիկ.

արտուտը, ծիծեռնակը, լորը—սրանք բոլորն էլ ճնճղացեղ թռչուններ են: Սրանք իրենց ներքին կազմով միև-



№ 48. Փոթորկաբեր: Ջրային թռչուն.

նոյն են, ինչ և վերև տեսած թռչունները, այն տարբերութեամբ, որ սիրում են ապրել մարդկային բնակարան-

ների, ցանքերի մօտ, որովհետև այստեղ է, որ նրանք ամենից հեշտ կերպով կարողանում են իրենց կերակուր գտնել: Ճնճղացեղերին պատկանող բոլոր թռչունները չտղ են—այսինքն տարւայ ցուրտ եղանակին գնում, հեռանում են անելի տաք երկիրներ և մեզ մօտ դառնում են միայն գարնանը, երբ եղանակները տաքանում են:

159. Ճնճղացեղների մի ուրիշ յատկութիւնն էլ նրանց սիրուն ձայնն է, որով լցնում են անտառ, դաշտ, պարտեզ. ճնճղուկների ձայնը դա նրանց լեզուն է, որ բոլոր իրենց նմանները հասկանում են



Բնաւարու-  
րիւնը եւ  
ապրուսի  
եղանակը:

№ 49. Արազիւ.

և կատարում ընտանիքի մեծերի պատէրները: Սրանք միևնոյն ժամանակ ամենից աշխատասէր թռչուններն են. առաւօտից մինչև երեկոյ աշխատում են — կամ բոյն են շինում և նիւթեր ժողովում կամ այս ու այն կողմը ընկած կերակուրի հոգս են քաշում. ուտում են ամեն տեսակ բաներ — լինի բուսեղէն թէ մսեղէն. հունդեր, կանաչ, որդեր, ճիճուներ. այդ կողմից ճնճղացեղ թռչուն-



№ 50. Փառիան.

ները մարդու և մանաւանդ բոյսերի իսկական բարեկամներն և պաշտպաններն են:

Օգտակարութիւնը

160. Հազարաւոր բզէզներ, ճիճուներ, որդեր, որոնք նստած բոյսերի վրայ, պտուղների կամ տերեւերի մէջ նրանց ուտում և փշացնում են—այդ բոլոր վնասակար բզէզների համար մեր թռչունները մի պատիժ են, որովհետեւ իրենց սուր կտուցներով սրանք յարձակում են բզէզների, ճիճուների վրայ և կտուցներով ոչնչացնում:

Գ. Ս Ո Ղ Ո Ի Ն Ն Ե Ր

161. Ողնաշարաւոր կենդանիների երրորդ կարգին պատկանում են սողունները:

Գործարանների կազմը

Սողունների մարմինը պատած է եղջիւրային թեփերով և փահաւանդով, արիւնը սաւն է և կարմիր, սիրտը փոխանակ չորսի, միայն երեւ բաժիններից է կազմւած—այն է՝ փորիկից և երկու նախասրտերից, ունին երկու թորեր, բազմանում են ձւերից և ապրում են թէ ցամաքի և թէ ջրերի մէջ:

Այս դասին պատկանում են կրեաները, մողէսները, կոկորդիլոսները և օձերը:

Մեզից շատ առաջ սողունների թէ տեսակները և թէ թիւը մեծ է եղել—նրանք ունեցել են ահազին մարմին, ոյժ, բայց ժամանակի ընթացքում, ինչպէս կարծում են գիտնականները, սողունները կամաց կամաց կերպարանափոխել են և դրանց մի քանի տեսակները դարձել են թռչուններ, ուրիշ տեսակները—կաթնասուններ:

Սողունների կարգից ծանօթանանք երկուսի՝ օձերի և կրեաների հետ:

Օ Ձ Ե Ր


Մարմնի կազմը

162. Օձերը, որոնք թէ տեսակներով, թէ գոյնով և մեծութեամբ բազմաթիւ են, ունեն մարմնի վրայ թեփուկներ, որոնք, շապիկի նման, տարւայ գանազան եղանակներին փոխւում են նոր շապիկով:

Օձերը վերջաւորութիւններ չունեն, այլ սողում են փորի վրայ գալարելով. իսկ վերջաւորութիւնների տեղ մարմնի յետին մասում կան փոքրիկ ոսկրիկներ:

163. Օձերի շարժումը առաջ է գալիս մօտ 400 ողներից բաղկացած ողնաշարի շարժումից. նրա ողներից կոպած են լինում բարակ կողերը, որոնց վրայ սողալիս նրանք յենւում են:


Օձերի ոսկրային և մկանային կազմի մէջ աչքի են ընկնում ծնօտները, ուր նրանք տեղաւորւում են իրենցից շատ աւելի հաստ գորտերին: Դա աւազանում է



Ինչով եւ ինչպէս են սողում

Ծնօտները

№ 51. Զառաչող օձ.



նրանից, որ օձի ներքին ծնօտը միանում է դանգի հետ մի ոսկրիկի միջոցաւ. այդ ոսկրը բաւականին երկար է և այդ երկար ոսկրիկը միջոց է տալիս ցածի ծնօտին շատ լայն բացւել. բացի դա ներքին ծնօտը ոչ թէ մի, այլ երկու հատ իրար հետ մկաններով միացած ոսկրներից է կազմւած. և այդ է պատճառը, որ, ներքին ծնօտը լայն բացւելուց, նա նաև ձգւում է:

Ծնօտների վրայ կան բարակ, սուր և դէպի ներս կռացած մի շարք ատամներ, որ ծառայում են որսը բռնելուն:

№ 52. Օձի կմախքը.

164. Այդպէս են բոլոր ոչ թռչնաւոր օձերի ատամները. այն ինչ թռչնաւոր օձերը բոլոր ատամներն էլ չունեն, այլ միայն վերին և ներքին ծնօտների վրայ կան մի մի հատ սուր, թռչնաւոր ատամ. այդ ատամի մէջ մի անցք կայ. անցքի մէջ թոյն, որի սկիզբը ականջի մօտ գտնւած մի գեղձի մէջ է. երբ օձը

Թոյն եւ բուժաւորում

խայթում է, այդ ատամի անցքով նա խայթած տեղը թափում է թոյնը, որից շատ անգամ առաջանում է արեան վարակում և ապա—նաև մահ:

Ո՞րտեղ եմ  
ապրում

165. Օձերից ամենից մեծ տեսակները թունաւոր չեն, բայց վտանգաւոր են հէնց նրանով, որ ողնաշարի մէջ առնելով իրենց որսը, մկաններով ամուր գալարում, սեղմում են և դրանով սպանում կամ ոչնչացնում որսը:

Կան օձեր, որոնք 12 արշին երկարութիւն ունեն, կարողանում են թռչել, ամրանալով պոչի վրայ. կան նաև ակնոցաւոր, շառաչող օձեր: Սրանց հայրենիքը շատ տաք, խոնաւ երկիրներ են, մտնաւանդ Հնդկաստանն ու Ամերիկան. կան և ջրային օձեր—սրանք անվտանգ են:

Օձերի կե-  
րակուրը

166. Օձերը կերակրւում են կենդանիների մսով. ուտում են մի անգամ կուշտ և ապա մի քանի օրերով ոչ մի կերակուր չեն ընդունում:

Օձերը բազմանում են ձուերով, երբեմն օձը բերում է կենդանի ձագեր, որոնց իսկոյն թողնում է: Օձերը ապրում են հողի մէջ—գետնի խորքում, աւերակների, պատերի, հիմքերի տակ. ցուրտի չեն դիմանում և սիրում են արևի տակ տաքանալ:

Կտողու-  
րիւն

167. Օձերը վտանգաւոր են ոչ միայն մարդկանց, այլ և կենդանիներին, որոնց խայթում և թունաւորում են: Հնդկաստանում օձերը տարեկան մի քանի հազար մարդկային զոհեր են տանում:

Օձերը ունեն լաւ լսողութիւն և շատ սիրում են երաժշտութիւն: Դրանից օգտւում են դերուիշները, թովչիները և, սրինգ կամ շւի ածելով, օձերին բներից դուրս են կանչում և բռնում: Իսկ որպէս զի օձերին անվտանգ դարձնեն, նրանք դուրս են քաշում թունաւոր ատամները և ապա տանում ման են ածում: Այդ զրութեան մէջ օձերից այլ ևս ոչ մի վտանգ չկայ:


Օձի ոչ թունաւոր տեսակիցն են մեր այգիներում և պարտէզներում յաճախ պատահող զեղնագոյն յորդուները:

Կ Ր Ի Ա Ն Ե Ր

168. Սողունների մէջ կրիաները ամենից դանդաղաշարժ և անվնաս կենդանիներն են. նրանց մարմինը թէ վերից և թէ ցածից պատած է վահանով—վերինը մեծ է և շատ կարծր. ցածինը աւելի բարակ—ահա այդ արկղիկի մէջ է գտնւում կրիայի մարմինը իր օձանման գլխով, չորս ոտներով, որոնց թաթերի վրայ կան հինգական մատներ, իսկ մատների ծայրերին՝ եղունգներ կամ ճանկեր:

Մարմնի  
կազմը

169. Կրիայի մի քանի ոսկրները կրճուկներով միացած են վահաններին—դրա համար էլ վահանը մարմնից անբաժան է և կրեան կարողանում թէ իր գլուխը և թէ պոչն ու ոտները ծածկել վահանի մէջ: Բերնում ատամներ չունի, այլ ծնոտների վրայ կայ ամուր կաշի, որով նա և՛ կռծում և՛ բռնում է իր ուզած որսը:



№ 53. Ծովային կրիաներ.

170. Կրիաները ապրում են ջրերում—գետերի, ծովերի մէջ, կան և ցամաքի վրայ ապրող կրիաներ. կերակրւում են բուսեղենով, որդերով, միջատներով և մանաւանդ-ջրերի մէջ գտնւած անողնաշար կենդանիներով:

Նրանց  
կեանքը


Կրիաները բազմանում են ձուերով, որոնք կոլոր և փափուկ են լինում. կրիան իր ձուն ածում է աւազի մէջ և նրան ծածկում է, ապա դրանցից դուրս են գալիս ձագեր: Կրիաները 200-ի շափ ձու են ածում:

171. Ահագին մեծութիւն ունեն ծովային կրիաները, որոնց երկարութիւնը հասնում է մէկ սաժէնի և կշռում են մօտ 25 փութ. այդպիսի կրիաների վահանների վրայ եթէ դնես 30 փութ ծանրութիւն, նրանք հեշտութեամբ կտանեն: Դրանց միսը մարդիկ գործ են ածում ուտելու.

բացի մսից, դրանց մի տեսակի վահաններից պատրաստում են զանազան գեղեցիկ և ամուր իրեր—ամաններ, մոխրամաններ, տուփեր և այլն:

Դ. Ե Ր Կ Կ Ե Ն Ց Ա Վ Ն Ե Ր

172. Այսպէս են անւանում այն կենդանիները, որոնք սկզբում-մատաղ հասակում ապրում են ջրերի մէջ, իսկ հորը մեծանում են՝ նաև ցամաքի վրայ: Եւ դրա համար էլ նրանց գործարաններից մը քանիսը—մանաւանդ թորքերը ուրիշ կազմ ունեն: Սրանց արիւնը կարմիր է, բայց սառը, բազմանում են ձւերով:



№ 54. Գորտ.

Երկկենցաղներից ամենից տալամւած գորտերն են, ուստի և ծանօթանանք դրանց կազմի և կեանքի հետ:

173. Գարնան սկզբին գորտը ձու է ածում ջրի մէջ. այդ ձւերը պատած են լինում լորձնոտ մի հիւթով. ապա այդ ձւերից դուրս են գալիս գոյտի սաղմը—առանց բերնի և վերջաւորութիւնների. թորքերի տեղ ունենում է շնչելու համար *ֆիմուխսներ*. աչքերը փոքր են և դեռ ես չզարգացած, թւերի տեղ ունի երկու *րեփուկներ*, որոնցով կաշում է ջրի միջի առարկաներին. շուտով սկսում է գորտի երկրորդ շրջանը. առաջանում է բերանը և աչքերը, գլուխ և պոչ—այժմ էլ սա քիմուղտներով է շնչում. անցնում է մի քանի օր և գորտը մտնում է կեանքի երրորդ շրջանը. դրսի քիմուղտները անյետանում են և նա այս անգամ շնչում է ներքին քիմուղտներով, ինչպէս ձկ-

Չեւակեր-  
պուրիւն-  
ներ

ները: Այս հասակում գորտը կազմւած է կարծես միայն գլխից և պոչից. մի քանի ժամանակից դուրս են գալիս յետին ոտները, իսկ պոչը գնալով կարճանում և ապա բոլորովին կորչում է. միաժամանակ սկսում են զարգանալ նրա թորքերը և ոչնչանում են քիմուղտները. գորտը այժմ հնարաւորութիւն ունի ջրից դուրս—ցամաքի վրայ ապրել, շնչել. ահա այժմ է որ նա դառնում է իսկական գորտ—դուրս են գալիս նաև առջևի ոտները և նա սկսում է թռչկոտալ, կռկռալ և իրեն համար զանազան կենդանիներ որսալ:

174. Այժմ արդէն գորտի մարմինը մերկ է, լորձնոտ, փափուկ և խոնաւ, ոչ մազ ունի, ոչ վահաններ կամ թեփուկներ. կաշւի տակ նրա մկաններն են, որոնց մէջ վերջաւորութիւններինը առանձնապէս լաւ զարգացած են: Ողնաշարը բազկացած է ողերից, կողեր չունի. ողնաշարի մէջ ողնաշարի ուղեղն է գտնուում:

175. Բերնում—վերին ծնօտի վրայ ունի մի շարք սուր ատամներ, ներքին ծնօտի վրայ ատամ չունի, բըւնած որսը իսկոյն լեզուով տանում է որկոր և այնտեղից դնում է ստամոքս և աղիքներ:

Գորտը ունի երկու թորքեր. սիրտը երեք բաժանմունքներից է կազմւած—երկու—նախասրտերից և մի փորիկից:

176. Երկկենցաղների մի քանի խմբեր կան—պոչաւորներ, անպոչներ և անուտներ: Պոչաւորներից յայտնի է *աւրաւսկերրան*, որի ձագերը կենդանի դուրս են գալիս մօր ձւերից արզանդի մէջէ, *պրօսէյր* և այլն: Անուտներից յայտնի է որթնուկը. այդ որդը ապրում է ցամաքի վրայ և վերջաւորութիւնից, այսինքն ոտներից, զուրկ է:

Երկկեն-  
ցաղների  
սեսակ-  
ները

Ե. Չ Կ Ն Ե Ր


177. Չկները, որ կազմում են ողնաշարաւոր կենդանիների հինգերորդ մեծ խումբը, թէ իրենց կազմով թէ գործարաններով և թէ կեանքի ձևով տարբերում են բոլոր ողնաշարաւորներից:

Հէնց այն հանգամանքը, որ ձկները ապրում են ոչ թէ ցամաքի վրայ, այլ ջրերի մէջ, փոխում է նրանցում ամեն բան:

Լողակներ  
էւ նրանց  
պատճենը

178. Ջրի մէջ ապրելու, շարժելու, ուրեմն և նրանում շնչելու համար նրանք ունեն յատուկ գործարաններ. այդ գործարանների մէջ ամենից գլխաւորը ձկների մարմնին կապած թևերը կամ յողակներն են:

179. Լողակները գա ձկների կաշւի լայնացումն է. սրանք թաղանթներ են բազմաթիւ կրճկային բարակ ճառագայթների վրայ ձգւած. այդ ճառագայթները մի քանի ձկների վրայ լինում են ամուր, ոսկրանման, իսկ միւսների վրայ փափուկ և քնքոյշ:



№ 55. Չկի կմախքը և ներքին գործարանները

Լողակները, համապատասխանում են մինչև այժմ մեր սովորած կենդանիների—վերջաւորութիւններին—այսինքն ոտներին, ձեռքերին, պոչին և, եթէ չլինէին այդ լողակները, ձկները ոչ կարող էին լողալ և ոչ էլ իրենց կեանքի համար հարկաւոր այս կամ այն շարժումը գործել. ուրեմն և ձկները կկորչէին:

Լողակները լինում են կամ գուգաւոր կամ կենտ. այսինքն երկու, երեք գոյգ, կամ հինգ, եօթ հատ:


Գործարանները

180. Չկների մարմինը պատած է կաշիով, որի վրայ կան թէփուկներ կամ ոսկրային կարծր վահաններ. արիւնը կարմիր է, բայց սառը: Սիրտը երկու բաժիններ ունի—մէկ նախասիրտ և մէկ հատ էլ փորիկ, նրանք բազմանում են ձւերով—անկկիրներով:

181. Չկի մի այլ կարևոր գործարանը—շնչառութեան գործարանն է, որ գտնւում է վզի երկու կողմերի բացւածքների մէջ. դրանք ծալ-ծալ, շերտաւոր, մոյգ կարմրագոյն երկու հատ աղեղնաձև, փափուկ մարմիններ են, որ ծածկւած են դրսից երկու հատ խուփերով: Չկի շնչառութեան այդ գործարանը կոչւում է *branchies*:

Շնչառութիւն է նրա գործարանը

182. Ջուրը, որը ծծում և շնչում են ձկները, բերնից մտնում է այդ բիմուխտների մէջ. այդտեղ օդը գտնւում է և ձկան մարմնին տալիս է թթւածին և ապա փշացած օդը դուրս է գալիս նոյն քիմուխտների միջով. ահա այդ է պատճառը, որ ձկների վզի վրայ գտնւած քիմուխտների փականները անդադար բաց ու խուփ են լինում:



№ 56. Լօբօ.

183. Չկի անդառութեան գործարանները աւելի պարզ կազմութիւն ունեն—այն է՝ բերան, ուր կան բազմաթիւ մանր, սուր գրեթէ միմեանց կպած ատամներ, որոնք ծառայում են կերակուր կամ որս բռնելու, ապա որկոր, որտեղից կերակուր մտնում է լայն ստամոքս, իսկ այստեղից անցնում է դէպի աղիքներ:

Սննդառութեան գործարաններ

184. Բայց մի գործարան, որ ունեն միմիայն ձկները—գա յողափառներն է. սա երկու մասից բաղկացած մի փուշիկ է, որ գտնւում է գլխի յետեի կողմում, ողնաշարի տակ. լողափամփուշտը լի է գազերով, որ հնարաւորութիւն է տալիս ձկներին ջրի վրայ մնալ, սկսել ջրի խորքերը, վեր բարձրանալ և այլն:

Լողափամփուշտ

Եւ այդ բոլոր շարժումները ձուկը անում է լողափամփուշտը սեղմելով կամ ընդհակառակը ուռցնելով:

185. Ձկները իրենց ձևով, այնէ սուր գլխով, սուր և տափակ պոչով և ուռած միջին մասով, ջուրը ճղելու և լողալու մեծ յարմարութիւն ունեն. բայց բոլոր ձկներն էլ միանման արագաշարժ չեն. կան շատ ճարպիկ լողող ձկներ. կան և ծանրաշարժներ. դա կախուած է մի կողմից ձկների լողակների շատութիւնից ու լայնութիւնից, միւս կողմից պոչի ճկունութիւնից:

186. Ձկները մի ուրիշ պակասութիւն էլ ունեն—այդ այն է, որ նրանք ձայնական գործարան չունեն, ուստի և մունջ են. միւս կողմից նրանց աչքերը ոչ կոպեր և ոչ արտեանունքներ ունեն—դրա համար էլ նրանց աչքերը դուրս են ընկած և միշտ բաց են:

187. Ձկները, ասեցինք, բազմանում են ձւերով. որով հետև շատ ձու են ածում, դրա համար էլ մեծ թւով են բազմանում, երբեմն մի քանի հազարներով. ձուերը դնում են ջրերի մօտ, քարերի տակ, կամ այնպիսի տեղեր. ուր ջուրը ձւերը չէ քշում:

Ձկների կերակուրները մեծ մասամբ ձկներ է լինում, թէև կան ձկներ, որոնք կերակրում են ծովի և գետի բոյսերով, միջատներով, որդերով. այդ է պատճառ, որ ձկների մէջ խիստ զարգացած է յափշտակող, յարձակող բնաւորութիւնը—այնպէս որ ջրերի մէջ, նրանց խորքերում կեանքի մի մեծ կռիւ է, ուր ուժեղն ու ճարպիկը ուտւում, ոչնչացնում է թոյլին ու աւելի քիչ պաշտպանւած իր նմաններին:

188. Ձկներից ստացած օգուտը շատ մեծ է. աշխարհիս վրայ կան ազգեր, երկրներ. որոնք ապրում են բացառապէս ձկնորսութեամբ. հարիւր հազարներով ձկներ են բռնում, ազում զանազան երկիրներ ուղարկում կամ իրենք գործ ածում. ձկնկիթը թանգ արժի, մանաւանդ մի քանի ձկների ձւերը, որ մեծ առևտուրի առարկայ է:

Մեզնում ձկնավաճառութեան կողմից յայտնի են Կասպից ծովի ծովափնեայ քաղաքները՝ Բազուն, Սալեանը, Պետ-

Կազմի պակասները

Բազմա-նալու միջոցներ եւ կերակուր

Ձկների օգուտը. ձկնակա-նառու-թիւն

ըովակ, Գերբենդ, իսկ մեր երկրի մէջ՝ Սեանայ լիճը, որտեղից դուրս է դալիս յայտնի համեղ Գեղարքունի կամ Իշխան ձուկը:

189. Ձկները իրենց տեսակներով էլ շատ են. սկսած մի քանի սաժեն երկարութիւն և մի քանի հարիւր փութ ծանրութիւն ունեցող կէտ ձկնից, մինչև հազիւ աչքով տեսանելի մանր ձկներ. կայ կարծր վահաններ ունեցող *փահաւնաճուկը*, կամ կամիր, խայտըղէտ, գնդաձև և այլն ձկներ: Մինչև այժմ յայտնի են մօտ 9000 տեսակի զանազան ձկներ, որոնց մեծ մասը ապրում է դառը և ազի համ ունեցող ծովերի և ովկեանոսների ջրերի մէջ:

Ձկների խմբով վերջանում են մեզ մինչև այժմ յայտնի բոլոր ողնաշարաւոր կենդանիների ցեղերը—ապա գալիս է կենդանիների մի շատ մեծ և բազմատեսակ խումբ—դրանք անողնաշարային կենդանիներն են:

Բ. Ա. Ն. ՈՂ. Ն. Ա. Շ. Ա. Ր. Ա. Յ. Ի. Ն. Կ. Ն. Դ. Ա. Ն. Ի. Ն. Ե. Ր

190. Անողնաշարաւոր կոչւում են այն բոլոր կենդանիները, որոնց մարմնի մէջ ոչ ողնաշար կայ և ոչ էլ ոսկրներ: Այդպիսի կենդանիների թիւը մի քանի անգամ աւելի է, քան բոլոր ողնաշարները միասին: Բացի այդ, ողնաշարաւորների արիւնը համ կարմիր չէ, համ էլ տարբէ:

191. Սրանց գործարաններից մի քանիսը, ինչպէս օրինակ շնչաւութեան գործարանները, տարօրինակ են. փոխանակ թոքերով շնչելու, նրանք շնչում են մարմնի վրայ դտնւած մի շարք անցքերով, որոնք կոչւում են *շնչիւսկներ*:

Նեարդերը սկիզբ են առնում գլխի ուղեղում և փորի վրայով գնացող շղթաների մէջ. մեծ մասամբ ձևափոխւում են և մի մասը սողալու, միւսը թռչելու յատկութիւն ունեն. այս կարգի կենդանիները ապրում են և ցամաքի վրայ և՛ ջրերի մէջ:

Անողնաշարաւոր կենդանիները, ողնաշարաւորների նման, բաժանւում են մի քանի դասերի—գլխաւորապէս երեք դասի. առաջին դաս—*յօդատրներն* ևն, երկրորդը—*փափկամարմնիները* և վերջապէս երրորդ դասին պատկանում են *մաւերէները*:

Տեսակները

Մարմնի կազմը եւ գործարաններ

Յ Օ Դ Ա Ի Ո Ր Ն Ե Ր


Խմբեր

192. Յօղաւորները բաժանուում են մի քանի խմբերի. առաջին միջասներ, երկրորդ—սարդակներ, երրորդ—քաղնասներ, չորրորդ խումբ կազմում են խեցգետնակներ և վերջին խումբը որդերը:

Մ ի ջ ա ս ն ե Ր

Միջասների կազմը

193. Յօղաւորների ամենամեծ խումբը միջատներն են, այսինքն կենդանիներ, որոնց մարմինը բաղկացած է երեք մասերից—գլուխ, լանջ և փոր. բացի դա



№ 57. Թիթեռ.

միջատները ունեն մի գոյգ բեխեր, երեք մասից կազմւած ծնօտներ, երեք գոյգ ոտներ, իսկ թևեր կամ լինում են երկու գոյգ, ինչպէս օրինակ թիթեռները, կամ մի գոյգ, ինչպէս ճանճերը. կամ թէ թևեր բոլորովին չեն ունենում,

ինչպէս-լները—բայց դրանք բոլորն էլ միջատներ են:

Միջասների ձեւափոխութիւնը

194. Միջատները ունեն և մի ուրիշ յատկութիւն—այդ այն է, որ նրանք կերպարանափոխուում են. սկզբում ածում են ձևեր, դրանցից դուրս են գալիս որթեր. նրանք մի քանի շարթից հիւսում են կոկոմներ և նրենց մէջը քնում. մի քանի օրից զարթնում են, ծակում կոկոմը և նրա միջից դուրս են գալիս թեւաւորւած-ինչպէս թիթեռներ. միջատներից մի քանիսը ինչպէս ճանճերը, մեղուներ, լուն և այլն կոկոմներ չեն՛հիւսում, այլ դառնում են կիսուկ և նրանից նոր ընդունում իրենց իսկական կազմը:

Որպէսզի ծանօթանանք միջատների կազմի հետ,


վերցնենք մի որևէ միջատ, օրինակ ճպուռը և քնենք նրան մօտիկից:

Մարմնի կազմը

195 Նախև առաջ նրա առաջի մասում տեսնում ենք շարժուն, տափակ մի մաս—դա գլուխն է. գլխի երկու կողմերում փոքրիկ սև ծակեր կան, դրանք աչքերն են և ապա բերանը կամ շրթունքները: Բացի դա մենք կ'նկատենք, որ ճպուռի աչքերի առաջին կողմում կան երկայն բարակ թելիկներ—դրանք պսիալներն են, որոնք ճպուռի և ընդհանրապէս բոլոր միջատների համար ծառայում են որպէս շօշափելու գործարաններ:—Նրանցով է որ միջատը կաշում է աւարկային, նրա փափուկ, պինդ, ջրալի կամ տաք լինելը իմանում:

Բերան եւ շօշափուկներ

196. Ճպուռի ստորին ծնօտների վրայ մենք կտեսնենք դարձեալ մի գոյգ երկար, յօղաւորւած թելիկներ—սրանք ճպուռի շոշափուկներն են, ճիշտն ասած, նրա ձեռքերը, որովհետև սրանցով նա բռնում է աւարկան, կերակուրը տանում է բերանը: Բացի այդ, շրթունքների ներսում կան երկու հատ շարժուն ծնօտներ. դրանցով նա ծամում, մանրացնում է իր կերակուրը, որտեղից նա գնում է որկոր և ապա՝ լայն ստամոքս և յետոյ, անցնելով աղիքների մէջ, մարսւում է, իսկ շմարուածը յետքից դուրս է գալիս:



№ 58. Միջատների կերպանափոխութիւնը.

197. Ճպուռի գլխի վրայ ալանջներ չկան, բայց նա ունի յատուկ նեարդեր, որոնք ձայնը ընդունում են և ուղեղին հաղորդում—այդ է պատճառը, որ ճպուռը ամեն մի շշուկ լսում է և իսկոյն ցատկում:

Վերջաւորութիւնները

Գլխից յետոյ գալիս է մարմնի երկրորդ մասը՝ լունը:—Սա բաղկացած է երեք յօդերից, որոնք պատած են մի պինդ վահանով. լանջի ամեն մի գոյգին կպած են մի մի գոյգ

երկար, թափանցիկ, թաղանթաւոր անկաճներ—կտրատւած թևեր: Ճպուռի յետևի ոտքերը առաջինից երեք անգամ երկար են և շնորհիւ զրա նա ահագին թռիչքներ է կատարում:

Ձւատար

198. Մարմնի երրորդ մասը—որովայնը հաստ է, մտալի և պատած է շերտ շերտ կաշիով. որովայնը նոյնպէս բաղկացած է մի շարք (9) միմիանց հետ միացած յօդերից, որոնցից վերջինի ծայրին կան երկու սուր յաւելւածներ. այդ յաւելւածների մէջը անցը կայ—ուր ժողովում են ճպուռի ածած ձևերը և նա, այդ անցքը գետնի մէջ կոխելով, նրա միջով ցած է դնում նաև ձևերը, որից պէտք է դուրս գան նրա ձագերը:




№ 59. Ինչպէս են որդերը պտուղների վնասում.

Շնչառութիւն

մանր խողովակներով ներս է մտնում և թթւածինը մաքրում է նրա արիւնը, իսկ սա, շրջելով անօթների միջով, թարմանում է:

Ինչպէս ասեցինք, ճպուռի արիւնը կարմիր չէ և ոչ էլ տաք է, այլ թանձր է և պղտոր գոյն ունի:

Ճպուռի ոտները բաղկացած են չորս մասերից, որոնք յօդաւորւած են և ազատ շարժւում են, իսկ ոտների ծայրերին ունի երկու հատ սուր շանկեր:



№ 60. Թռչուռը և նրա ձևափոխութիւնը.

200. Երկու գոյգ թևերը կաշւի լայնացած ծայրերն են, բարակ, քիչոյշ թափանցիկ թաղանթով պատած, իսկ թաղանթի միջով գանազան ուղղութեամբ դնում են ճիւղաւորւած, ցանցանման ջղերը. ջղերի մէջը լցւած է օդով. և այդ է պատճառը, որ բոլոր գեռուները կարողանում են հեշտութեամբ թռչել և ոստոստալ:


Օդաթաղանթներ

ձպուռները որպէս և միջատները կերակրւում են բոյսերով, բոյսերի ծաղիկների վրայի փոշիով. նրանք ուտում են նաև միս, որդեր, ճիճուներ, ձևեր և այլն:

Այդ միջատների թւին են պատկանում մեղրակ, կրեքը, մրմնախնկերը, բոլոր տեսակի քիթուները, ճակնճիւղ և այլն:

201. Մարդանմաններ: Սրանց գլուխները ամուր միացած են լանջի հետ, այնպէս որ կազմւած են երկու մասից մէկը՝ գլուխն ու լանջը, միւսը— որովայնը: Ունին չորս գոյգ ստներ, երկու գոյգ ծնօտներ և կերպարանափոխւում չեն:

Մարդերի կազմը եւ ոստայն



№ 61. Մարդ և իր ոստայնը.


Սրանց մէջն են սարդը, կարիձը, սիգը, իրենց տեսակներով:

202. Մարդերը ունեն ութ աչք, սրանցում լաւ զարգացած են շօշափելիքները և տեսողութիւնը. ունեն ամուր ծնօտներ, որոնց օգնութեամբ նա կծում է իր որսը. այս տեսակները, բացի որովայնի վրայի ծակոտիներից, շրնչում են նաև րոխային պարկերով, ուր օդը մտնում է նոյն ծակոտիներից: Որովայնի ետևի մասում ունեն երեք գոյգ ուռուցիկներ, ուր պատրաստւում է այն նիւթը, որով սրանք բարակ թելերից ոստայն են գործում և նրանց մէջ բռնում գանազան միջատներ ու զրանց ուտում: Ոս-

տայնի ցած իջնող թելերի վրայով նրանք արագութեամբ իջնում և բարձրանում են:

Թոյնի գործարան

203. Կարիճները մարմնի կազմով նման են սարդերին, թէև մարմնի ձևը ուրիշ է. սրանց որովայնը ունի յօղաւորութիւն, որի վերջում կայ մի սուր ասեղ. այստեղ ժողովում է թունաւոր մի հիւթ, որով կարիճները որսում և սպանում են իրենց զոհերին: Մարմնի առաջին մասում կան մի զոյգ երկար շանկեր, որով նրանք բռնում են իրենց որսերը:



№ 62. Կարիճ.

Կաղւր եւ կեանք

Բ Ա Ջ Մ Ա Ո Տ Ն Ա Ն Ի Ն Ե Ր

204. Այս խմբի ոտնամարմինները ունեն երկու մաս— գլուխ և իրան: Թևեր չեն ունենում, ամեն մի յօդի վրայ ունեն մէկ կամ երկու զոյգ ոտներ և որովհետև յօդերի թիւը շատ է լինում և իրենք երկար, դրա համար էլ ունենում են բազմաթիւ ոտներ. աչքեր չունին: Բազմաոտ-

նանինները գիշերային կենդանիներ են, ցերեկը նրանք պահում են մութ և խոնաւ տեղերում. օրինակ— քառասնոտնանիններն և նրանց նման ճիճւանմանները:

Խ Ե Գ Ե Տ Ի Ա Ն Ա Ն Ե Ր :

Մարմնի կազմը

205 Այս կարգի կենդանիների մարմինը պատած է կարծր, թաղանթային վահանով. ունենում են 5 զոյգ ոտներ, գլխի կողմից ունենում են մի զոյգ ամուր և ուժեղ ճանկեր, պոչի վերայ լինում են լողակներ, որոնց օգնութեամբ և լողում են ջրերի մէջ: Արիւնը սառն է և անզոյն, աչքերը հասարակ, բազմանում են ձւերով. կեանքի ընթացքում փոխարկւում են, սկզբում ունեն միայն գլուխ և բարակ իրան և ապա փոքր առ փոքր իրանը լայնանում է և ստները զօրեղանում:

Այդ տեսակի կենդանիների մէջ յայտնի են խեցգետնիկները իր տեսակներով, ցրարուն, ցիկլոպը և այլն:

Մարմնի կազմը

206. Վերջին խումբը կազմում են որդերը և ընդհանրապէս փափկամարմինները: Սրանք ոչ ոտներ, ոչ էլ շանկեր ունեն. այլ շարժւում են մարմնի մկանների փոփոխակի կծկւելով և բացւելով. կան օդաձև, բոլորաձև և տափակ որդեր:

Որդերի կազմը եւ գործարանները

207. Իրանց մարմինը պատած է լինում փայլուն, խոնաւ կաշիով և կազմւած է բազմաթիւ օղակներից կամ յօդերից. առաջին մասում գլուխն է. շնչում են ողջ մարմնի մակերևոյթով, զգում են մարմնով և սրա վրայ եղած քրնքոյշ մազերով: Ապրում են ջրերում և հողի մէջ. սիրում են ընդհանրապէս խոնաւութիւն: Այդ որդերից յայտնի են՝ սովորական գետնի որդը, ճիճուն և սիւրուկը, որը արիւն ծծելու յատկութիւն ունի:

Մ Ա Ն Բ Է Ն Ե Ր Կ Ա Մ Բ Ա Կ Տ Ե Ր Ի Ա Ն Ե Ր

208. Բացի մինչև այժմ յիշած կենդանիներից, իրենց տեսակներով, ցեղերով և ընտանիքներով կան նաև բազմաթիւ ուրիշ կենդանիներ, որոնք այնքան փոքր են, որ դրանց տեսնելու համար անհրաժեշտ է խոշորացոյց կամ մանրադիտակ:

Մեծութիւնը

209. Այդ կենդանիները շատ պարզ կազմ ունեն, երբեմն բազկացած են մի քանի բճիճներից և ողբերից. դրանք անւանւում են մակրէներ կամ բակտերիաներ:

Տեսակներ եւ կեանք

Այդ մանրէներն են այն բորբոսները կամ մանր որդերը, որ գոյանում են խոնաւ տեղերում, իւրալի նիւթերի մէջ և նրանց փշացնում, լուծում են: Բոլոր բորբոսները, այս կամ այն հիւանդութիւնների ժամանակ առաջացած մանր որդերը, ինչպէս՝ ծառերի, պտուղների մէջ նստած աննկատելի որթիկները, մեր խաղողի վագերի արմատների, տերևների վրայ նստած գլխաւոր փշացողները— Փիլոստերան, օդիոստը, միլդիոսը կամ թէ արեան մէջ ապրող դիֆտերիսի, սիֆի, սկարլասիւնայի և բոլոր վարակում առաջացնող հիւանդութիւնների էակները:

210. Դրանք բոլորն էլ մանր, կետանման կենդանիներ են, որոնք միլիոնավորներով մտնում են մեր արեան, թորերի մէջ, նստում են մեր կերակուրների վրայ և նրանց վարակում:

Այդ մանրէիներից շատերը այնքան պարզ կազմ ունեն, որ չի լինում ճանաչել թէ՛ իսկապէս դրանք կենդանական, թէ՛ բուսական ծագում ունին:

Գիտնականները քսան տարիներից սկսած զբաղւած են այդ կենդանիների ուսումնասիրութեամբ և ամեն օր նորանոր, մինչև այժմ անյայտ կենդանի—մանրէ են զտնում մեր շուրջը:

Վնասներ  
և միջոցներ

211. Եւ այսպէս մեր ողջ բնութիւնը լի է միլիոնավոր կենդանիներով—որոնցից շատերին մենք հասարակ աչքով, առանց խոշորացոյցի ոչ տեսնել ենք կարողանում, ոչ էլ ուսումնասիրել:

212. Այդ կենդանիները լցւած են օդի, ջրի մէջ, նստած են մեզ շրջապատող բոլոր առարկաների վրայ. գտնւած է, որ սարերի գագաթներում, ուր ձիւնն ու սառուցն է, մինչև անգամ այդ տեղերը ազատ չեն այդ մանր կենդանիներից:

Փորձւած է, որ այդ կենդանիները ոչնչանում են եփած ջրի մէջ, ուստի և դրանց ոչնչացնելու համար մարդիկ եփ են տալիս ջուրը, կերակուրները, կաթ թէ՛ գանազան թթւումներով ախտահանում են:



ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Գ. ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

213. Երբ ծանօթանում էինք բնութեան մէջ ապրող կենդանիների հետ, մենք տեսանք թէ որքան շատ և տեսակ տեսակ են այդ թագաւորութեանը պատկանող անասունների թիւը—սկսած վիթխարի փիղից, առիւծից, մինչև մթեղներն ու հազիւ հասարակ աչքով տեսնող միջատներն:

Չնայելով որ այդքան բազմաթիւ են կենդանիները, բայց նրանք թէ իրենց տեսակներով և թէ ձևով ու մեծութեամբ համեմատաբար աւելի քիչ են, քան բնութեան մի ուրիշ մեծ խմբին պատկանող մարմիններ—բոյսերը:

214. Բոյսերը բուսնում են ոչ միայն այն բոլոր երկիրներում, ուր կենդանիներ կան, այլ և այնտեղ, ուր ոչ մի կենդանի ապրել չի կարող. այնպէս որ մեծ մասամբ բոյսերն են, որ հնարաւոր են դարձնում այս կամ այն կենդանու առաջ գալը, ապրելը, բազմանալը: Եւ եթէ մի օր, նոյն իսկ մի հրաշքով, ոչնչանային մեր երկրագնդի վրայ եղած բոյսերը, այդ օրը մահւան օր կլինէր կենդանիների մեծ մասի համար, որովհետև դրանով կենդանիներից շատերը ոչ միայն կզրկւէին իրենց միակ կերակուրից, այլ, որ զխաւորն է, մեր օդը այնպէս կփչանար և կեղտոտւէր, որ անլարելի կլինէր նրան շնչել, ուրեմն և բոլոր կենդանիները կմեռնէին:

Բոյսերի  
սարածումը  
և նշանակու-  
թիւնը

215 չէնց այդ պատճառով էլ գիտնականները գտել են, որ բնութեան մէջ, առաջ քան կենդանիներ լինելը, եղել են բոյսեր և բոյսերից յետոյ է, որ փոքր առ

փոքր առաջացել են կենդանիները և լցրել մեր երկիրը. յետոյ առաջացել է ինքը մարդը, որը և իր կեանքի համար գործադրել է թէ բոյսերը և թէ կենդանիներին:

Չնայելով բոյսերի շատութեանը և նրանց զանազան տեսակներն պատկանելուն, դրանց մէջ էլ կան բազմաթիւ բոյսեր, որոնք մի կամ մի քանի բանով միմեանց նման են: Դրանով էլ հեշտանում է բոյսեր ճանաչելն, ուսումնասիրելը:

Ա. ԲՈՅՍԻ ԿԱԶՄԸ

216. Բոյսի որ մասն էլ որ խոշորացոյցի տակ քնենք, կտեսնենք, որ նա կազմւած է բարձրաթիւ, զանազան ձև ունեցող մանր բճիճներից—այդ բճիճներից ամեն մէկը անւանւում են վանդակ:

Վանդակը դրսից պատած է նուրբ, թափանցիկ թաղանթով, իսկ նրա մէջ գտնւում է մածուցիկ, կիսահեղուկ, կորիզաւոր մի նիւթ, որ կոչւում է պրօթօպլազմա կամ նախանիւթ:


217. Պրօթօպլազմայի մէջ կայ մի աւելի պինդ և առանձնացած մարմին—դա պրօթօպլազմայի կորիզն է:

Վանդակը մեծանալու յատկութիւն ունի, մեծանալուս նրա մէջ դատարկ տարածութիւն է առաջանում, ուր մտնում է զանազան նիւթերով լուծւած ջուրը. սա անւանւում է վանդակի հիւր:

218. Բացի այդ, երբ մենք խոշորացոյցի տակ քննում ենք

բոյսի կանաչ մասերը—տերեւի կամ ցողունի մի կտոր, այն ժամանակ պրօթօպլազմայի մէջ նկատելի են բազմաթիւ մանր, բոլորաձև, կանաչագոյն հատիկներ—դա խլորոփիլն է—կամ խլորոփիլի հասիկները. այսինքն այն նիւթը, որը և բոյսին տալիս է կանաչ գոյն: Ուրեմն վանդակը կազմւած է—թաղանթից, պրօթօպլազմայից,

Կորիզ եւ վանդակի նիւթ




№ 63. Վանդակ, կորիզ և վանդակի բաժանուր:

խլորոփիլ

դրա կորիզից, խլորոփիլից և վանդակի հիւթից: Բայց կան վանդակներ, որոնք ոչ թաղանթ ունեն և ոչ էլ կորիզ, սակայն բոլոր վանդակները անպատճառ ունեն պրօթօպլազմա և կորիզ—առանց դրանց վանդակը ապրել չի կարող:

219. Պրօթօպլազման շարունակ շարժւում է վանդակի մէջ—նա երկարում, լայնանում է և իբ շարժւումով ստիպում է վանդակին կիսել, բաժանել. կիսւած, բաժանւած վանդակը այդպիսով դառնում է երկու, երեք և աւելի վանդակ. և այսպէս անդադար վանդակները բաժան բաժան են լինում և բազմանում. վանդակների բազմանալը, քոյսի աճումը, նրա մեծանալն է:

Վանդակների բազմանալը



№ 64. Միացած վանդակների զանազան ձևերը:

220. Կան բոյսեր, որոնց վանդակները կարելի է տեսնել հասարակ աչքով—օրինակ ապելսինի միջուկը.— երբ ճզում ենք, մենք նրա մէջ նկատում ենք բարակ թաղանթ և ապա թաղանթի մէջ երևում են զանազան ձևի վանդակներ:

221. Մի շարք վանդակներ միասին կոչւում են աւելւած կամ հիւսւածք: Հիւսւածք, նայելով վանդակների ձևին, ինքը ևս զանազան ձևեր է ունենում:

Անկւած եւ անցքեր

Չնայելով վանդակների միմեանց հետ սեղմւած լինելուն, այնուամենայնիւ նրանց եզրներում մտնում են խողովականման ազատ տարածութիւններ—այդ տարածութիւնները լցւած են լինում օդով—այդ խողովակները կոչւում են միջջվանդակային անցքեր:

Վանդակ-  
ների ձևեր

222. Վանդակը զանազան ձևի է լինում—բայց վանդակների մեծ մասը ունենում է բազմականթ—անկիւններ—կան շրջանաձև, երկար, լայնացած վանդակներ. ցողունի վանդակների մեծ մասը երկարաձև են:

Երբեմն վանդակները այնպէս երկարում են, որ խողովակների ձև են ընդունում—այդպիսի վանդակները անւանւում են նաև *աւոթքներ*—դրանք մեծ մասամբ ցողունի կամ կեղևի մէջ են գոյանում և նրա մարմնի *փայտակիրքը* կազմում:

Բ Ո Յ Ս Ի Է Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Ջրային  
մասերը

223. Մենք գիտենք, որ կենդանի և թարմ բոյսը թաց է. այդ թացութիւնը առաջանում է ջրից, որ բոյսը անդադար ծծում է արմատներով և լցնում վանդակները. այնպէս որ բոյսերի քաշի  $\frac{3}{4}$ -ը ջրից է կազմւած և միայն  $\frac{1}{4}$  մասը ուրիշ աւելի ամուր մասերից:

Գազեր եւ  
ջրեր

224 Եթէ մենք բոյսի մի կտորը չորացնենք—այն ժամանակ նրա միջից գոլորշիանում է ողջ ջուրը և մնում է չոր մասը. երբ այրենք այս չոր մասը—սրանից դուրս կգայ բոց, որը շուտով կհանդչի և տակը կմնայ մի նիւթ—գա *ածուխն է*: Ածուխի այդ կտորը կար բոյսի մէջ, միայն մենք նրան չէինք տեսնում, որովհետև ջրի մէջ լուծւած էր և այժմ միայն, երբ ջուրը գոլորշիացաւ, մնաց նա: Բոյսի ամեն մի մասի մէջ պարունակւում է ածուխ. միջին հաշուով նա կազմում է մոխիրի համարեայ կէս քաշը. բացի ածուխից—կամ ածխածնից, բոյսի մէջ կան մի քանի գազեր—*ջրածին*, որը այրելուս դառնում է գոլորշի, *բոսակածին* և *թրածին*:

225. Ահա այս երեք գազերը կազմում են բոյսի մարմնի գլխաւոր մասը և նիւթը. ապա մնում է բոյսի այն մասը, որ մենք *մոխիր* անւանեցինք. սա պարունակում է իր մէջ բազմաթիւ աղեր, մետաղներ. ինչպէս՝ երկաթ, կալի, ծծումբ և այլն:

Ահա սրանք այն աղերն են, որ բոյսը ջրի հետ միասին արմատներով ծծել է հողից և տարել, իր բոլոր մասերը լցրել:

Սրանք թէև բոյսի քաշի աննշան մասն են կազմում, բայց առանց այս աղերի կամ հանքերի բոյսը ապրել չի կարող:

226. Բոյսը ողջ կեանքում այս գազերից և հանքերից շինում է իր մարմինը, նրան կերակրում, նրանցով նորոգւում: Այս բոլորը, միանալով միմեանց հետ, կազմում են երեք խումբ նիւթեր, առաջինը՝ *սպիտակուցներ*, երկրորդ՝ *ածխաքարտակներ* և երրորդ՝ *խղեր*:


Բոյսի ներ-  
քին կազմը

227. Առաջինից գոյանում են ձևի սպիտակուցին նման նիւթեր—որ անւանում են նաև *սուսնձային նիւթեր*—սրանցով լի են ցորենի, գարու, եգիպտացորենի և այլ հատիկների սերմերը. սրանք են, որ ծամելիս ձգւում են և յետոյ խմոր դառնում: Սրանից է կազմւած և պրօտօպլազման ու նրա կորիզը. հետևապէս սրանք են և բոյսի գլխաւոր մասը.

Սպիտակուցներ

228. Երկրորդից՝ ածխաթուլթային մասից է վանդակաթաղանթը: Սա է, որ կազմում է վանդակի թաղանթը և զանազան թելեր—ինչպէս բամբակի, կանէփի, վուշի և այլն: Ապա գալիս են *սուսնձային նիւթերը*, ինչպէս օրինակ՝ գետնախնձորի, կարտոֆիլի միջի մասը՝ *օսլան*, սա երբեմն քաղցրանում է և դառնում է շաքար, որով լի են մեր բոյսերից շատերը և մանաւանդ պտուղները: Շաքարը և սոսինձը պրօտօպլազմայի մէջ երբեմն պինդ կորիզների կամ բիւրեղների նման ցրւած են լինում: Ամենից շատ շաքար պարունակում են իրենց մէջ մի քանի բոյսեր, ինչպէս շաքարի եղեգը, ճակնդեղը և այլն:

Սոսինձ



№ 65. Վանդակների միջի բիւրեղները.

229. Երրորդ խումբ նիւթերը *խղերն* են: Սրանք իրենց կազմով շատ նման են ածխաթուլթային նիւթերին, սակայն մի քանի բոյսերի մէջ սրանք գտնւում են մեծ քանակու-

Եւզային  
մասեր

թեամբ և, մանր կաթիլների նման, ժողոված են պրօտօպլազմայի մէջ—օրինակ. վուշի, արևածաղիկի, կանէփի և բազմաթիւ այլ իւղապտուղների և իւղաբոյսերի մէջ:

Ա. ԲՈՅՍԵՐԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

230. Այժմ ծանօթանանք բոյսի զարգացման և կեանքի հետ: Բոլորիս յայտնի է, որ բոյսը կերակրում է, աճում, բազմանում և մեռնում է—ճիշտ այնպէս, ինչպէս և կենդանիները. միայն բոյսերի տարբերութիւնը կենդանիներից այն է, որ այն ինչ կենդանիները ունեն զգայաբաններ—այսինքն տեսնում, հոտ են առնում, լսում, ճաշակում և շօշափում են, բոյսերը այդ զգայարանները չունեն. երկրորդ—այն ինչ կենդանիները իրենք իրենց կամքով և ցանկութեամբ կարող են շարժւել, մի տեղից մի ուրիշ տեղ փոխւել, բոյսերը ինքնակամ տեղափոխուել չեն կարող:

231. Միւս բոլոր բաներով կենդանիներն ու բոյսերը իրար շատ նման են—ունեն մի և նոյն գործարանները—ինչպէս՝ շնչառութեան, սննդառութեան, բազմանալու և ուրիշ շատ գործարաններ:

Մենք ասեցինք, որ սերմնաւոր բոյսերը առաջանում և բազմանում են սերմերից:

Ծանօթանանք նախ սերմի կազմի և կեանքի հետ:

Բ. Ս Ե Ր Մ

232. Ամեն մի սերմ կազմւած է երկու մասից—մէկը արտաքին կաշին կամ կճեպն է, միւսը այդ կճեպի տակի միջուկը: Որպէսզի կճեպը բաժանենք միջուկից, դրա համար պէտք է միայն թրջել սերմը ջրի մէջ, կամ նրան դնել մի խոնաւ տեղ: Մի կամ մի քանի օրից կճեպը փափկում է և հեշտութեամբ բաժանում միջուկից:

233. Վերցնենք, օրինակ, մի հատ լոբու սերմ. հանենք նրա վրայի կճեպը և կտեսնենք, որ նրա տակին կայ մի սպիտակ զանգւած—դա լոբու միջուկն է. այդ միջուկը մի ուրիշ յատկութիւնն էլ ունի. այդ այն, որ նա բաժան-

ւում է երկու հաւասար կէտերի. ամեն մի կէտը անւանւում է շափիչ կամ բլբլակ. և դրա համար էլ ասում ենք, որ շոքիւն երկշափիչաւոր բոյս է:

Բացի այդ, կտեսնենք մի ուրիշ բան էլ—լոբու փոսը ընկած կողմի վրայ կայ մի փոքրիկ ուռուցիկ կէտ, և երբ շաքիլները գգուշութեամբ բաժանում ենք, տեսնում, որ այդ կէտը ձողիկի նման շարունակւում է լոբու մէջ և շաքիլներից մէկի վրայ ունենում է երկու փոքրիկ գլուխ:


234. Ահա այդ փոքրիկ ձողիկն է, որ կազմում է լոբու ապագայ բոյսը—ուրիշ խօսքով լոբու սաղմը, որը կազմւած է երկու մասերից—գոթի ուռուցիկ մասը արմատիկն է, երկար ձողիկը՝ ցողունը. իսկ միջուկի երկու մասերը—կամ շաքիլները, լազմի սկզբնական կերակուրն է:

Ճիշտ այդ կազմը ունեն բոլոր այն սերմերը, որոնք երկու շաքիլներ ունեն—կաղինը, սիսեռը, ոսպը, բազան, նուշը, ծիրանը և այլն, այսինք բոլոր երկշաքիլ բոյսերը:

235. Որպէսզի կարողանանք քայլ առ քայլ հետեւել, թէ ինչպէս է մեծանում բոյսը—դնենք լոբին մի քանի օր հողի մէջ, ի հարկէ նախապէս ջրելով այդ հողը, ինչպէս այդ սովորաբար անում են: Եւ մի շորս հինգ օրից ահա թէ ինչ կտեսնենք:

236. Լոբին նախ կփափկի, իսկ կճեպը կճարճաքւի. ապա հողը, որի մէջ թաղւած է, կբացւի և նրա միջից կտեսնենք մի երկար սպիտակ և դէպի ցած կռացած բան—դա արմատիկն է և ցողնիկը: Կռացած մասը մի քանի օրից կմտնի նորից գետնի մէջ և հողից կբարձրանայ այն բլթակների կճեպը, որ ամրացած կլինի ցողնուկին. մի երկու օրից բլթակների կճեպի միջից կերևան երկու բաց կանաչ, փոքրիկ տերևներ, որոնք կամաց կամաց գլուխները կբարձրացնեն և կսկսեն երկարել:

237. Եւ այսպէս այժմ մենք ունենք գրեթէ մի ամբողջ բոյս, որը ունի երեք գլխաւոր մասեր—արմատ, որ



№ 65. Բակլայի սերմը, սպին և արմատիկը.

Յայնիկ

Արմատիկ

Տերեւեր, ձաղիկ և սերմ


Բոյսերի գանազանութիւնը կենդանիներից

Կճեպ և միջուկ

Լոբու զարգացման աստիճանները

գետնի մէջն է, ցողուն, որ արմատից ձգուած է դէպի վերև, վերջապէս ցողունի ծայրին—երկու տերևներ:

Այնուհետև սկսուած է բոյսի զարգացման երկրորդ շրջանը—այսինքն արմատիկի կողքերից դուրս են գալիս մանր, բարակ քելիկներ, դրանցից առաջանում են նոր, աւելի բարակ թելեր, որով արմատը մանր թելիկների մի փունջ է դառնում, ցողունը աւելի երկարում է, իսկ



№ 67. Երկու, երկշաքիլ բոյսի արմատիկը, ցողնիկը և տերևներ:

երկու տերևների արանքից դուրս կգան մի նոր գոյգ տերևներ. յետոյ սրանից առաջանում են ուրիշ գոյգ և այլն, մինչև որ այսպէս բոյսը կամաց կամաց մեծանում է և մի քանի ամսից արդէն տերևների մօտ երևում են սպիտակ ծաղիկներ, այդ ծաղիկները թափուած են և դրանց տեղ երևում է բարակ, երկար, կանաչ մի բան, որը մի քանի օրից յետոյ, մեծանալով, դառնում է մեր գործածած կանաչ լոբին, իսկ մի քանի շաբթից նա սպիտակում է. կանաչ մասը ամրանում, յետոյ բաժանում է երկու մասերի, որոնց մէջ մենք տեսնում ենք շարւած մի քանի հատ կարմիր լոբի, ճիշտ և ճիշտ այն լոբուց, որ մենք ցանել էինք. սա արդէն լոբու սերուն է:

238. Ուրիշ խօսքով, ցանելով մի լոբի, մենք երեք ամսից ստանում ենք մի մեծ բոյս, որի ճիւղերին կպած են տասնեակ կանաչ, երկար լոբիներ, իսկ դրանցից իւրաքանչիւրի միջին 5—6 հատ լոբիներ. ուրեմն մի հատ լոբին դառնում է յիսուն, եօթանասուն և աւելի լոբի: Դա լոբու քաղնակաւոր եղանակն է:

239. Արմատը, ցողունը, տերևները, ծաղիկը և սերմը բոյսի գլխաւոր գործարաններն են—այնպէս որ դրանցից մէկն ու մէկը եթէ չլինէր, բոյսը կամ չէր աճի, իսկ եթէ աճէր էլ, նա կլինէր անկատար բոյս:


Գ. ԲՈՅՍԻ ԱՃՄԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Այժմ մի առ մի ծանօթանանք բոյսի մեծանալու պայմանների որպէս նաև բոյսի առանձին առանձին գործարանների հետ:

240. Երբ մենք ուզում էինք որ բոյսը (լոբին) աճի, նախ և առաջ մենք նրան հողով ծածկեցինք և ապա ջրեցինք. դրանից յետոյ անցաւ մի քանի օր, մինչև որ բոյսը ծիլ արձակեց—այսինքն նա շաբթիներ փափկեցին և ապա թէ բոյսը հանեց իր արմատը:

Սրանից երևում է, որ բոյսի սկզբնական զարգացման համար նախ և առաջ անհրաժեշտ է ջուր:

241. Ջուրը ծծելով սերմի մէջ փափկացնում է միջուկը, իսկ սա, ընդունելով ջուր, ուռչում, լայնանում է. այդ ժամանակ քնած սաղմը, ջրի և տաքութեան ազդեցութեան տակ, զարթնում է կամ ուրիշ խօսքով սկսում է աճել: Ուռած միջուկը, մեծանալով, սեղմում է կճէպին և սա տրաքում է. ահա այդ ժամանակ է, որ սաղմը, ազատւելով կճէպի պատերի ճնշումից, սկսում է, նրա միջից դուրս գալով, մեծանալ:



№ 68. Միաշաքիլ բոյսի ծիլը տերևներով և խրճանման արմատիկներով:

242. Սաղմը այս շրջանում իր անհրաժեշտ կերակուրը գտնում է միջուկի շաբթիների մէջ, որը ոչ ալլ ինչ է, եթէ ոչ սպիտակուցային նիւթեր: Այս նիւթերը, ջրի ազդեցութեամբ փափկելով, և նրա մէջ լուծւելով, մտնում են սաղմի մէջ և նրա մարմնի մասն են կազմում. այնպէս որ սաղմը իր աճեցման սկզբնական շրջանում ուրիշ սնունդի կարիք չունի, որովհետև հարկաւոր կերակուրը նա գտնում է շաբթիների մէջ:

Յետոյ, երբ շաբթիների միջի բոլոր նիւթը ծծւում և

լուծուում է սաղմի մէջ, ուրեմն երբ բոյսը ծլեր է գցում, ահա այդ ժամանակ է, որ մատաղը բոյսը կարիք է զգում գրսից կերակուրի: Եւ այդ կերակուրը նա փնտռում է իր շուրջը: Եթէ բոյսը հողի մէջ է գտնուում, արմատը ձգւում է դէպի հողի ներսը և մի կողմից ամրանում է հողի մէջ, միւս կողմից հողից կերակուր է ծծում:

243. Ի՞նչ կերակուր կարող է տալ հողը բոյսին:

Հողը, այսինքն երկրի վերևի այն շերտը, որի մէջ ամրացած են բոյսերը, իր մէջ պարունակում է գանազան աղեր՝ չլուծւած գրութեան մէջ. երբ ջուրը մտնում է հողի մէջ, այդ աղերը լուծուում են և բոյսը իր արմատներով ծծելով ջուր, ծծում է և նրա մէջ լուծւած, իրեն հարկաւոր աղերը:

244. Որ բոյսը ճիշտ որ ծծում է հողի միջի այդ աղերը, այդ հեշտ է իմանալ. հարկաւոր է միայն այրել մի որևէ բոյս կամ բուսական մարմին—ծառ, փայտ, պտուղ և մենք կտեսնենք, որ այդ մարմնի այրելուց յետոյ, տակին մնում է մի մոխրագոյն, սպիտակ բան կամ ուրիշ խօսքով *մոխիր*. ահա այդ մոխիրը այն աղերն են, որ ջրի մէջ լուծւած, ծծւել են բոյսի մէջ և այժմ, եբ բոյսի այրելով, ջրային մասերը գոչորոշի դարձան, մնաց մոխիրը կամ բոյսի մարմնի *հանքային մասերը*:

245. Ուրեմն բոյսերը բացի ջրից, առանց որի նրանք ապրել չեն կարող, կարիք ունեն հանքային մասերի կամ զանազան աղերի. այդ աղերը գտնուում են հողի մէջ, հետևապէս բոյսը իր զարգացման համար պէտք է լինի հողի շերտերի:

246. Կան բոյսեր, որոնք կարող են զարգանալ և ջրի մէջ—դրանք ջրային բոյսերն են. բայց այդ դէպքում բոյսին անհրաժեշտ աղերը լինում են լուծւած ջրի մէջ, որ միևնոյն է:

247. Այժմ մեզ համար պարզ է, թէ ինչու բուսական թագաւորութեան մեծ մասը բուսնում է երկրի վրայ— հողի մէջ: Բայց հողի պաշտօնը մէնակ դա չէ. նա բոյսի համար երկու մեծ պաշտօն էլ է կատարում—նախ այն, որ, շնորհիւ հողի, բոյսերը կանգնելու, ամրանալու և հաս-

Հողը որպէս բոյսի յենարան

տատելու տեղ ունեն—ապա թէ ոչ, բոյսերը ոչ միայն չէին զարգանալ, այլ անկարող կլինէին կանգնել, ճիւղեր, տերևներ արձակել և թեթև քամուց իսկոյն վայր կզորւէին. այն ինչ երբ հող կայ, բոյսի արմատները մտնում են նրա մէջ և, կամաց կամաց ճիւղաւորւելով ու տարածւելով հողի խորքում, ամուր բռնում են բոյսին, որով բոյսը կարողանում է դիմանալ մեծ քամիների, փոթորիկների կամ իրեն հասած հարւածների:

248 Հողը բոյսի համար մի ուրիշ գործ էլ է կատարում: Այդ այն է, որ բոյսի արմատները ամրանալով հողի մէջ, բոյսի համար հողի միջից ծծում են այն ջուրը, առանց որի բոյսը ապրել չի կարող:

Հողը եւ ջուրը

249. Ինչպէս յայտնի է, թէ վերևից թափած անձրևը, թէ կարկուտը, թէ ձիւնը, ընկնելով հողի վրայ, կամաց կամաց ձուլւում են հողի մէջ և գնում են նրա խորքերը և այդտեղ, ծծւելով հողի մէջ, մնում են: Բոյսի արմատները ահա այդ ջուրն է, որ փնտռում են և ծծելով նրան, բունի, ցողունի միջով տանում, բաժանում են ճիւղերին և մանաւանդ տերևներին:

250. Եւ այսպէս բոյսի արմատը երեք գործ է կատարում. առաջին—նա ամրացնում է բոյսը հողի մէջ, երկրորդ՝ հողի խորքերից ջուր է տալիս բոյսին և երրորդ՝ ջրի հետ միասին ծծում է ջրի մէջ լուծւած հանքային մասերը և բոյսին իբրև կերակուր զանազան աղեր մատակարարում:

Բացի ջրից և զանազան աղերից բոյսին անհրաժեշտ է որոշ *ջերմութիւն*:

251. Մենք տեսնում ենք, թէ ինչպէս աշնանը, երբ եղանակները կամ դրսի օդը ցրտում է, բոյսերը թափում են իրենց տերևները, թառամում կամ շոբանում, իսկ ձմեռը արդեն ծառերի մեծ մասը մերկ են, դաշտ, սար, արտ չորացած—և հէնց որ գալիս է զարունը, այսինքն հէնց որ օդը սկսում է տաքանալ, կամաց կամաց մեր օդը հրկիրը կանաչում և ծածկւում է նորանոր բոյսերով, խոտերով. դա ապացոյց է այն բանի, որ բոյսերի աճման համար հարկաւոր է որոշ տաքութիւն, առանց որի բոյսը ապրել չի կարող:

Հող եւ ջերմութիւն

Ի՞նչ ջերմութեան մէջ են աճում և ո՞րքան ատիւններ

252 Ձանազան սերմեր, զանազան տաքութեան մէջ են աճում. կան բոյսեր, որոնց սերմերը ծխելու համար բաւական է, եթէ օդը ունենայ չորս-հինգ աստիճան տաքութիւն, կան որ պահանջում են 15—20 աստիճան, ինչպէս բամբակը, ծխախոտը և ընդհանրապէս տաք երկրներին սովորած բոյսերը. բայց ընդհանրապէս մեր երկրում ապրող բոյսերի մեծ մասը աճում է, երբ օդի տաքութիւնը հասնում է 10—15 աստիճան—իսկ դա լինում է մեզնում մարտ ամսի միջին:

Ինչպէս ցուրտին բոյսերը չեն աճում, այլ մնում են քնած, նոյնպէս և նրանք չեն աճում, նոյն իսկ սերմերը ոչնչանում են, երբ տաքութիւնը շատ բարձր է—օրինակ 40—45 աստիճան. այդ դէպքում, սերմի միջի քնքոյշ սաղմը խաշում է և ծլելու անպէտք դառնում:

Ձերմութեան և բոյսը

Թէ ինչ աստիճան բոյսերը կախած են օդի տաքութեանից, դա հեշտ է փորձել—միևնոյն բոյսը զանազան ամաններում մեծացնելու: Եթէ մենք նոր ժող մի բոյս դնենք մի սառը տեղ—կտեսնենք, որ նրա աճումը դանդաղեց, այն ինչ նոյն բոյսը դրսում կամ աւելի տաք տեղ մի քանի օրում այնքան շուտ է մեծանում, որ եթէ նա դրսում լինէր, սովորական օդի մէջ—այդքան աճելու համար նրան հարկաւոր կլինէր երկու անգամ աւելի ժամանակ:

Ձերմոցներ

254. Բոյսի այդ յատկութեանից օգտւում են բանջարանոցներ և ծաղկանոցներ պահողները. նրանք շինում են յատուկ տներ, դնում են այդտեղ վառարաններ և այդ տներում, որ անւանում են ջերմոցներ, ցանում են զանազան բոյսեր, ծաղիկներ, որով և այդ բոյսերը դրսւում, բաց օդի միջում բուսնող բոյսերից մի քանի շաբաթ առաջ են մեծանում, ծաղիկ և ստուղ տալիս:

Բոյսը և օդը

255. Բացի ջրից և տաքութեանից, բոյսին անհրաժէշտ է նաև օդը:

Օդը բոյսի համար նոյն գործն է կատարում ինչ և բոլոր կենդանիների, այսինքն նա տալիս է գործարանական մարմիններին անհրաժեշտ սնունդ, իսկ սերմին՝ թթւածին: Եթէ մի օրև է սերմ շատ խորը հողի մէջ

թաղենք և հողը վերեից ամուր հուպ տանք, սերմը չի ծլի. դա նրանիցն է, որ մենք հողի միջից դուրս հանեցինք օդը. նոյնպէս բոյսը չի ծլի, եթէ դնենք մի ամանի մէջ, ամանից հեռացնենք օդը: Ուրեմն սերմի ծլելու համար օդը անհրաժեշտ է: Հէնց այդ է պատճառը, որ երբ մենք ցանում ենք մի օրև է սերմ, լինի նա ցորէն, գարի, ծաղիկ, լոբի միևնոյն է, մենք հողը փորփորում ենք, փափկացնում կամ վարում և ապա սերմը դնում կամ ցանում նրա մէջ, աշխատելով, որ նա շատ խոր շանկէ: Գրանով մենք միջոց ենք տալիս օդին մտնել հողի մէջ և օգնել սերմին դուրս գալու կամ սերմին օդի թթւածինը տալու:

Արքան սերմը մեծ է, այնքան նրան կարելի է խորը ցանել, որքան փոքր է, այնքան սաղը:

256. Մեր բոլոր հացահատիկները—ինչպէս ցորեն, գարի, հաճար—ցանում ենք 1—1 1/2 վերջով խորութեամբ, իսկ աւելի մանր սերմերը, ծխախոտ, կորէկ, մանանեխ, բոխկ և այլն ցանում ենք շատ երեսից. դա նրա համար, որ նախ՝ փոքր սերմը խորը ընկնելով կարող է օդից զրկւել և ապա՝ փոքր սերմերի ծիլը, երբ խոր են ընկած, չեն կարողանում հուշի վերի շերտը ճեղքել և դուրս գալ, ուստի և խոր ընկած սերմերը, եթէ ծլում էլ են, երբեմն հէնց այնտեղ ոչնչանում են, այն ինչ մեծ սերմերի ուժեղ ծլերը հեշտութեամբ ճղում են իրենց վրայի հողը և միջից դուրս գալիս:

Ինչ Խորեան եւ ցանում սերմերը

257. Սերմի որպէս և բոյսի զարգացման երրորդ պայմանն էլ յոյսն է: Բոյսերը դէպի լոյսը ձգւելու յատկութիւն ունեն: Հէնց որ ծիլը սերմից դուրս է գալիս, նրա ցողունը վերև՝ դէպ օդ և լոյսն է ուղղում իր զլուխը, իսկ եթէ սենեակը, ուր բոյսն աճում է, ամեն կողմից մութ է և միայն մի լուսամուտն է բաց, այն ժամանակ բոյսը իր ցողունն ու տերևները ծուռ է դէպի լուսամուտի կամ ուրիշ խօսքով լոյսի կողմը:

Բոյսը և լոյսը

Բոյսի այն մասը, որ զրկւած է լինում լոյսից, մնում է սպիտակ և դժգոյն—այն ինչ այն մասը, որ լոյս է տեսնում, ունենում է կանաչ գոյն: Այդ հեշտ է նկատել բոլոր բոյսերի վրայ:

նրանց այն մասը, որ հողի մէջն է—արամատը երբէք կանաչ գոյն չի ունենում. ցողունը սկզբում, երբ դեռ ևս շատ քիչ լոյս է տեսել, դարձեալ սպիտակ է կամ բաց կանաչ գոյն է ունենում. որքան բոյսը մեծանում, շատ լոյս է տեսնում, այնքան աւելի կանաչ գոյն են ստանում թէ ցողունը և թէ մանաւանդ տերևները: Լոյսի պակասութիւնն է պատճառ, որ ստերների մէջ, անտառի խորքերում կամ մեծ ծառերի տակ աճող բոյսերը բաց կանաչ գոյնով են լինում:

Սերմը եւ լոյսը

258. Եթէ բոյսը լոյս է պահանջում, ընդհակառակը սերմը իր աճման առաջին շրջանում լոյսից փախչում է. լոյս տեղում եղած, նոյն իսկ խոնաւ սերմը չի աճում, այն ինչ ընդհակառակը սերմեր աճեցնելու համար մենք նրան հողի մթութեան մէջ ենք պահում ինչպէս ասում ենք հողի մէջ ենք ցանում: Ուրեմն սերմը իր մեծանալու առաջին շրջանում կարիք է զգում մթութեան, իսկ յետոյ, երբ արդէն ծիլ է գցել, այսինքն երբ սերմը սազմից դուրս է եկել, նրան անհրաժեշտ է լոյս:

Գ. Ա. ր մ ա ս

Բոյսի գործարանները

259. Մենք ասեցինք, որ շաքիչները բոյսի զարգացման սկզբի շրջանում ծառայում են ծիլի համար որպէ՛ս նրա կերակուր. բոյսը այդ կերակուրը ձօնելով նախ և առաջ պատրաստում է իր յետագայ կեանքի համար շատ կարեւոր գործարաններ: Այդ գործարանները հետեւեալներն են—արմաս, ցողուն և առաջին զոյգ տերևներ:

Հէնց որ բոյսը այնքան աճում է, որ ունենում է այդ գործարանները, այժմ նա արդէն կարողանում է դրանց օգնութեամբ ինքը իր համար կերակուր գտնել—այն է հողից—իր արմատներով և լոյսը—իր տերևներով:

Եւ այսպէս արմատներն ու տերևները բոյսի համար սննդառութեան և շնչառութեան գործարանների պաշտօն են կատարում:

Արմասի ձեւն ու կազմը

260. Երբ մենք ուշադրութեամբ քննում ենք բոյսերի արմատները, տեսնում ենք, որ բոյսը բոյսերն էլ միևնոյն

տեսակ և միևնոյն ձևի արմատներ չունեն. կան բոյսեր—որոնք ցողունի շարունակութեամբ դէպի հողի մէջ արձակում են մի գլխաւոր արմաս. սա սկզբում հաստ է լինում և գնալով դէպի ցած՝ հողի մէջ աստիճանաբար բարակում է:

261. Այդ գլխաւոր արմատից դուրս են գալիս բազմաթիւ մանր, բարակ, թելանման արմատներ—դրանք կոչւում են երկրորդական արմասներ. երկրորդականներից դուրս են գալիս աւելի բարակ արմատներ—դրանք երրորդական արմասներն են:


Արմասների տեսակները

Այն բոլոր բոյսերը, որոնց սերմերը երկու շաքիչներից են կազմւած, ունենում են մի գլխաւոր արմատ և ռպա երկրորդական և երրորդական արմատներ:

Բայց կան բոյսեր, որոնք գլխաւոր արմատ չեն ունենում, այլ ուղղակի ցողունից դէպի ցած գնում են մի քանի փնջաձեւ արմասներ, իսկ դրանցից դուրս են գալիս ուրիշ աւելի բարակ արմատներ:

Այդպէս են բոլոր մի շաքիչ ունեցող բոյսերի արմատները:

262. Բոլոր արմատները իրենց ծայրերում պատած են լինում մի բարակ, քնքոյշ պատեւնով, այդ պատեանի տակ գտնւում են, մի շարք քնքոյշ վանդակներ, որոնք անւանւում են արմատի բուսակէտ: Վանդակները անդադար բաժանւում են և այդ բաժանումից առաջանում է արմատի աճումը, որը, ինչպէս ասեցինք, կատարւում է արմատի ծայրերում, որով արմատը երկարւմ է ծայրերից: Երբ արմատի բուսակէտը զարգանում է, նրա հետ շարունակ փոփոխւում և նորոգւում է նաև արմատի պատեանը:




№ 69. Արմատի բուսակէտը.

Արմասի զարգացումը

Արմատի ամենակարևոր մասը իսկապէս այն բարակ մանր թելերն են, որ դուրս են գալիս նրանից. սրանք են, որ հողից ջուր և զանազան լուծուած աղեր են ծծում և այդ բոլորը նրանց միջով ծծում է և գնում բոյսի ցողունի մէջ, իսկ այդտեղից բարձրանում է դէպի ճիւղերն ու տերևները:

Սնունդ պահող բոյսեր կամ արմատիք



№ 70. Արմատի թելիկները.

263. Կան բոյսեր, որոնց արմատները հողից ծծած հիւթերն ու կերակուրը բոլորն էլ բոյսին չեն տալիս— այլ պահում են իրենց մէջ և դրանով պատրաստում են բոյսի համար յաջորդ ձմռան սնունդ: Այդպիսի բոյսերի արմատները ուռչում են և զանազան ձևեր են ստանում, ինչպէս օրինակ գետնախնձորը, կարտոֆիլը, բոդկը, գազարը և այլն:

Իրանք բոլորն էլ երկամեայ բոյսեր են. հաստ, իլիկաձև, կլոր, երկար արմատներով: Այդ արմատների վրայ լինում են մանր, մազանման արմատիկներ, որոնք և հողի միջից ժողովում են սնունդ և դրանց ամբարում իրենց մէջ, զրանով ստացւում է այն ուռուցիկ գանգլաժը, որ մենք գործ ենք ածում: Այդպիսի արմատներ

ունեցող բոյսերը անւանւում են արմատիք:


Օդային արմատներ

264. Չնայելով որ բոյսերի արմատները մեծ մասամբ զարգանում և ճիւղաւորւում են գետնի տակ, հողի մէջ, բայց կան բոյսեր, որոնց արմատները սկսում են գետնից այնքան բարձր, որ նրանք երևում են դրսից.— այդպիսի արմատները կոչւում են օդային. այդպէս են եգիպտացորենի արմատները: Ընտանների խորքերում, խոնաւ և տաք տեղերում ծառերի և թուփերի մէջ շատ են պատահում օդային արմատներ ունեցող բոյսեր:

Արմատների պատճեններ

265. Բոլոր արմատները, մանաւանդ երկրորդական և երրորդական արմատները զարմանալի յատկութիւն ունեն:

Եթէ բոյսին հարկաւոր կերակուրն ու սնունդը գետնի տակ, նրա վերին շերտերումն են գտնւում, այն ժամանակ նրանք այնտեղ էլ մնում են և այստեղ բազմանում և փնջաւոր դառնում, իսկ եթէ մօտիկ տեղում նրանք սնունդ չեն գտնում, այդ դէպքում արմատները սկսում են երկարել և զանազան կողմեր ուղղել, այնքան, մինչև որ մի տեղ նրանք հանդիպեն ջուր կամ խոնաւութիւն:



№ 71. Արմատները զանազան խորութեան մէջ.

266. Երբեմն բոյսերը իրենց արմատները ձգում են մի քանի սաժէն խորութեամբ և երկարութեամբ, հէնց որ նրանք սնունդը գտան, իսկոյն այդ մասում զարգացնում են մանր, թելանման արմատիկները, որոնք ազահութեամբ ծծում են ջուրն ու սնունդը և ուղարկում բոյսի միւս մասերը: Այդ դէպքում միւս արմատները այլ ևս չեն երկարում, այլ սնունդի պակասութիւնից նւազում և կարճանում են. կամ թէ՛ ուղղւում են այն կողմը, ուր նրանցից մէկն սրղէն սնունդ էր գտել:

Ի՞նչպէս են արմատները սնունդ փնջում

267. Արմատների սնունդ փնտռելու այս յատկութիւնը երբեմն զարմանալի շափեր է ընդունում. արմատը մտնում է հողի մէջ, գնում է առաջ և, եթէ ճանապարհին հանդիպում է քարեր կամ ուրիշ արմատներ, նա բոլորում է, քարի շուրջը անցնում, երբեմն մտնում է

Արմատներ, ոյժը

քարի մի ճեղքաձորի մէջ և այդ քարը, ժայռը իր ոյժով ճաքեցնում է, մինչև որ գտնում է իրեն հարկաւոր սնունդը:

Պոյու-  
թեան  
կոխը

268. Գոյութեան հաւատ մղած կոխը միանման է թէ կենդանական և թէ բուսական թագաւորութեան մէջ: Մեծ, ուժեղ բոյսը խեղտում, ոչնչացնում է թոյլ, նիհար բոյսին. մի շարք թոյլ բոյսեր միանալով խեղտում և ուժասպառ են անում մեծ և ուժեղ բոյսին. այսինքն ճիշտ նոյնը, ինչ և կենդանիների մէջ է: Բոլորն էլ ուզում են ապրել, կեանք ունենալ, բոլորն էլ կուտում են արգելքների դէմ այնքան, մինչև որ կամ յաղթում են արգելքներին կամ իրենք, ուժասպառ եղած, կորչում են այդ կուլի մէջ:

Դ. ՅՈՂՈՆԵՐ ԵՒ ԲՈՒՆԸ

269. Բոյսերը իրենց անեցման ժամանակ երկու ուղ-  
ղութեամբ են զարգանում. մէկ՝ վերեւից դէպի ցած, հողի  
մէջ—զրանք *արմասներն են*, միւսը ցածից դէպի վեր—  
զրանք բոյսի *ցողունը*, *բունը* և զրանց վերայ գտնւած  
մասերն են:

Երկու  
ուղղու-  
թեամբ ա-  
նում

Միամեայ բոյսերի և թփերի դեռնից վերև գտնուող  
զրանաձև ուղղահայեաց մասը կոչւում է *ցողուն*. Իսկ  
բազմամեայ ծառերի վրայի նոյն մասը՝ *բուն*:

270. Յողունը և բունը ծառայում են բոյսին կերա-  
կուր և սնունդ տալու՝ մի կողմից արմատներից դէպի  
տերևները, միւս կողմից՝ տերևներից դէպի արմատները:  
Բացի դա, նրանք են, որ իրենց վրայ պահում են բոյսի  
տերևները, ճիւղերը և այն բոլոր ծանրութիւնը, որ կան  
զրանց վրայ:

Յողունի  
և բունի  
դերը

Որովհետև ցողունի և բունի միջով է անցնում բոյսի  
ծծած ողջ կերակուրը, զրա համար էլ նրա միջի մասը  
կազմւած է մի շարք զանազան ձև և մեծութիւն ունե-  
ցող անկւածներից կամ վանդակներից: Այդ վանդակները  
միմեանց կապելով առաջացնում են մի քանի տեսակ խո-  
ղովակներ, երակներ—որոնց միջով արմատից, զանազան

հիւթեր բարձրանում են դէպի տերևները և տերևներից  
գալիս, իջնում են դէպի արմատ:

271. Յողունները միատեսակ չեն. կան բոյսեր, որոնց  
ցողունները ապրում են միայն մի տարի, կան, որ երկու  
տարի են ապրում. երկար կեանք ունեցող բոյսերի  
ցողունները գնալով հաստանում են և ամեն տարի  
նորանոր շերտեր են շինում, ամրանում, կարծրա-  
նում և վերջապէս դառնում են ծառերի հաստ *բու-  
նիւն*, որոնք զրսից պաշտպանւած են լինում *կեղեւով*:  
Ծառերից շատերի տարիքը կարելի է իմանալ բունների  
միջի շրջանաձև շերտերից. որքան այդ շերտերը զրսից  
դէպի ներս են գնում, այնքան նրանք աւելի կարծրա-  
նում և նեղանում են, մինչև որ վերջապէս մենք տեսնում  
ենք բունի կենտրոնում մի կարծր մաս—դա ծառի կամ  
բոյսի *սիրտն* է:

Յողունի  
տեսակ-  
ները

272. Կան բոյսեր, որոնց սիրտը ընդհակառակը փա-  
փուկ և մինչև անգամ դատարկ է լինում. այդպէս է  
օրինակ խաղողի վազի բունը կամ ցողունը, գրեթէ դա-  
տարկ է եղեգնի և մի քանի լայնատերև բոյսերի ցո-  
ղունների սիրտը:

Սրտ կամ  
միջուկ

273. Յողունների վրայ զանազան տեղերում և դա-  
նազան շարքով դասաւորւած են լինում ուռուցիկ մասեր.  
այդ մասերը անւանւում են *կապեր*—մի կապից մինչև  
միւս կապի մէջ եղած տարածութիւնը կոչւում է *կա-  
պաւեջ*: Կապերի վրայ կան ուռուցիկներ. այդ ուռու-  
ցիկներից զուրս են գալիս տերևները, այդ ուռուցիկ  
տեղերը կոչւում են տերևի *բողբոջներ*:

Կապ, կա-  
պաւեջ եւ  
բողբոջ

274. Ինչպէս արմատները իրենց ծայրերին ունեն  
բուսակէտեր, այնպէս էլ ցողունները իրենց ծայրերին  
ունեն *փակդակներ*, որոնք աճում են և զրանով երկա-  
րում և աճում է նաև ինքը ցողունը ուրեմն և բոյսը:

Յողունի  
բուսա-  
կէտը

Այդ կէտերն էլ *ցողունի բուսակէտերն են*: Բոլոր  
բոյսերի ցողուններն էլ դէպի վեր չեն գնում, կան որ  
հողի վերևի մասից ծառում են հորիզոնական ուղղու-  
թեամբ. ցողուններ կան, որ սիրում են ծառուել, կան և  
այնպիսիները, որոնք գիտեն փաթաթել իրենց մօտ

գտնւած ուրիշ բոյսերին կամ ծառերին—զրանք *պասու-  
սակներն* են:

Սոխա-  
նան բոյ-  
սերի ցո-  
լունը

275. Մի քանի բոյսերի ցողուններ իրենց մէջ, ինչ-  
պէս առաջ տեսանք մի քանի բոյսերի արմատների վե-  
րաբերմամբ, ժողովում են բոյսի յետագայ տարիների հա-  
մար սննդանիւթեր և այդ սննդանիւթերից առաջանում  
են տերևները և բոյսի վերին մասերը—այդպէս են *սոխա-  
նան* բոյսը *բոյսերը*, որոնց ուռուցիկ մասերը ոչ այլ  
ինչ են, եթէ ոչ ցողուններ, որոնցից առաջանալու են յա-  
ջորդ տարում բոյսի տերևները:

Յողունե-  
րի ձևերը  
և պաշտ-  
պանելու  
միջոցները



№ 72. Արմատնու բունը հաւասար հաս-  
տութեամբ է և ծայրին տալիս է մեծ  
տերևներ:

276. Տար երկրներում  
ապրող մի քանի բոյսերի ցո-  
ղուններ շատ հաստ և մաս-  
լից են լինում և իրենց մէջ  
պահում են ջրի մեծ պաշար-  
ներ: Որպէս զի ուրիշ կեն-  
դանիներ չծծեն այդ ջուրը,  
ցողունը ողջ պատում է իրեն  
բազմաթիւ սուր փշերով—  
այդպէս են *կակտուսները*:  
Մի քանի տեսակ բոյսերի  
ցողուններ բարձրանում են  
գետնից վեր և ուղղահայեաց  
կերպով, միահաւասար հաս-  
տութեամբ բուսնում են  
բարձր և հասնում երբեմն մի  
քանի սաժէնների և ապա  
զրանց ծայրերում դուրս են

գալիս մեծ, ճիւղաւոր, ահազին տերևներ. այդպէս են  
բոյսը *արմատնիները*:

Տակուներ  
և նրանց  
զարգաց-  
ման եղա-  
նակը

277. Բոյսերի մի ուրիշ տեսակը իր ցողունները  
զարգացնում է ոչ թէ գետնից վերև, այլ գետնի տակ.  
և այստեղ նրանց վրայ գոյանում են բազմաթիւ կապեր  
իրենց բողբոջներով. այդպիսի բոյսերը, որ կոչւում են  
տակուներ, ճիւղաւորելու և տարածելու յատկութիւն  
ունեն. զրանք են, որ դժւարացնում են հողի մշակութիւնը

և խեղտում միւս բոյսերին—ինչպէս օրինակ չիմը, ելակը  
և այլն:

Այդ բոյսերը բողբոջներից արձակում են եր-  
կար մասեր—*բեխեր*, և եթէ զրանց կտրենք և գետնի  
մէջ դնենք—զրանք տալիս են արմատներ և զառնում  
նոր, ինքնուրոյն բոյս: Այդ ճանապարհով էլ բազմացնում  
են պարտիզպանները ելակներ և մի քանի ուրիշ բոյսեր:

278. Յողունի բողբոջները նոր բոյս, ուրեմն և նոր  
արմատներ տալու յատկութիւն ունեն. ինչպէս, օրինակ  
խաղողի վազի կամ ուռնու մի ցողուն կամ ճիւղ, որ,  
եթէ հողի մէջ ես տնկում, տալիս է և՛ արմատներ և՛ նոր  
տերևներ ու բոյս: Այն բոյսերը, որոնց ցողունները զար-  
գանում են և ապրում հողի մէջ, անւանում են *խոշա-  
կեաց ցողուններ*. հողակեաց ցողուններից մի քանիսը  
ունենում են աչքեր և բողբոջներ—այդպէս է օրինակ գետ-  
նախնձորը, որի աչքերից դուրս են գալիս ցողուն և տե-  
րևներ:

Յողունի  
արմատներ  
սպու յաս-  
կութիւնը

Ե. Տ Ե Ր Ե Ի

Բոյսերի երրորդ զլխաւոր մասը կազմում են տերևները:

279. Տերևները մեծ մասամբ բարակ, տափակ և  
ողորկ մակերևոյթ, զանազան մեծութիւն ու ձև ունեցող  
կանաչ մարմիններ են նրանք կպած են լինում կամ ուղ-  
ղակի բոյսի ցողունին կամ թէ նրա ճիւղերին:

Տերևի  
ձևը

280 Տերևը բաղկացած է երկու մասից. մէկ—բա-  
րակ թելանման ցածի մասը, որ կոչւում է *կանր* և ապա  
տափակ մասը—*թիթեղը*. երբեմն կանթի երկու կողմե-  
րում լինում են փոքրիկ յաւելածներ—զրանք տերևի  
*խոզաններն* են:

Կանր, թի-  
թեղ, խո-  
զան եւ  
նետղ


Տերևները դուրս են գալիս բոյսի կապերից, իսկ  
կանթի շարունակութեամբ դէպի թիթեղ գնում են մի  
շարք բարակ *նետղեր*.

281. Նետղերը լինում են զանազան տեսակի—կան  
նետղեր, որոնք տերևի կանթի շարունակութեամբ գնում  
են տերևի զազաթ և աջ ու ձախ կողմերից դուրս են  
գալիս ճիւղեր, որոնք ուղղում են տերևի ծայրերը—զրանք

Միաշափի  
երկաթի  
բոյսերի  
նետղերը

այն տերևներն են, որոնք առաջ են եկել երկշաքիլ սերմերից. իսկ կան նեարդեր, որոնք կանթեց բաժանուում են աջ և ձախ և միանում տերևի գագաթի մօտ—զրանք միաշաքիլանի սերմերից առաջացած բոյսերի տերևներն են: Եւ այսպէս, տերևների նեարդերից կարելի է իմանալ՝ պատկանում է արդեօք բոյսը միաշաքիլ թէ՛ երկշաքիլ բոյսերին:

Տերևի կազմը



№ 73. Տերևների միջի անօթներն ու վանդակները.

րով, որով տերևներին տալիս են կանաչ գոյն: Տերևի թաղանթը, մանաւանդ նրա ցածի երեսը լի է մանր ծակոսիկներով, որոնց միջով շնչում է բոյսը:

Օդասար խողովակներ

283. Նեարդերը բաժանուում են և ճիւղաւորում աւելի բարակ և մանր ճիւղերի, սրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի մի խողովակներ, որոնց միջով անցնում է բոյսի ծծած ջուրը և գնում տերևի ամենամանր վանդակների մէջ մտնում:

Տերևների ձեւերը

284. Տերևները զանազան ձև և մեծութիւն ունեն կան—բոլորաձև, սրտաձև, սլաքաձև, ձևաձև, ատամնաւոր կտրատած, թաթանման տերևներ, իսկ դասաւորութեամբ տերևները լինում են՝ փետրանման, գոյգաւոր, կենտաւոր և այլն: Կան բոյսեր, որոնց տերևները այնքան մանր են, որ հազիւ երևում են, կան և մի քանի արշին մեծութեան տերևներ ունեցող բոյսեր: Ընդհանրապէս խոճաւ և տաք երկրներում բուսնող բոյսերի տերևները լինում մեծ, մսալի և ջրալի:

285. Մենք ասեցինք, որ տերևները բոյսի շնչառութեան և սննդառութեան գործարաններն են: Եւ ճիշտ որ, բոյսը իր սնունդը ստանում է ոչ միայն հողից՝ արմատների օգնութեամբ, այլ և օդից՝ տերևների շնորհիւ: Օդը իր մէջ պարունակում է բոյսի վանդակների, խլօրօֆիլի և օսլայի համար անհրաժեշտ ածխածնային նիւթեր. իսկ մենք գիտենք, որ բոյսը արմատներով ածխածին չէ տալիս բոյսին, այլ ածխածինը բոյսը ստանում է օդից որը կազմւած է ածխածնից, թթւածնից և բորակածնից: Օդի մէջ ածխածինը միացած է թթւածնի հետ և կազմում է ածխաթթւուտ. ահա այդ ածխաթթւուտն է, որ ծծում են տերևները և, պահելով իրենց մէջ ածխածինը, թթւածինը նորից բաց են թողնում:

Ածխածին և բրաւ-ծին

286. Եւ այդպէս բոյսերի օգնութեամբ բնութեան մէջ կատարում է նիւթերի փոխանակութիւն. կենդանիները ծծում են և պահում իրենց մէջ թթւածինը իսկ ածխաթթւումը արտաշնչում, իսկ բոյսերը, ընդհակառակը, ծծում են ածխաթթւուտ, ածխածինը պահում են իրենց մէջ և արտաշնչում են թթւածին, որը կենդանական աշխարհին անհրաժեշտ է:

Նիւթերի փոխանակութիւն

287. Բացի դրանից, բոյսերը իրենց տերևների օգնութեամբ գոլորշիացնում են արմատներով գետնից ծծած ջուրը, որով թարմանում են իրենք արևի տաքութիւնից, քամուց և այլն: Հաշւած է, որ եզիպտացորենի մի բոյս ամառայ ընթացքում գոլորշիացնում է մօտ 25 ֆունտ ջուր:

Օդի բարեխառնումը

Տերևները երբեմն կերպարանափոխուում են—դառնալով մի քանի բոյսերի վրայ՝ փշեր, ուրիշների՝ երկար թելիկներ, որոնցով և փաթաթուում են, կան որ ունենում են այս կամ այն կողմի վրայ ծածկոցներ, ինչպէս այդ սոխանման բոյսերի վրայ է երևում.

2. Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր

288. Բոյսերի չորրորդ նշանաւոր գործարանը մասը կազմում են ծաղիկները, որոնց մէջ գոյանում է սերմը: Եւ որովհետև բոյսերի մեծ մասը բազմանում են սերմերի

Տերևների մասերը

օգնութեամբ— դրա համար էլ ծաղիկները նաև բոյսի բազմա- նալու գործարաններն են:

Ծաղիկները, չնայած իրենց բազմատեսակութեան, բաղկացած են մի քանի մասերից. այն մասը, որից սկսւում է ծաղիկը կոչւում է ծաղիկակեր, ապա զալիս են մի քանի շրջաններ, այն է՝ բաժակ, պսակ, առէջքներ և վարսակ:

289. Բաժակը, ծաղիկի առաջին շրջանը, այն կա- նաչագոյն տերևներն են, որոնք շրջապատում են նրան և տակից պահպանում են ծաղիկի գունաւոր մասին:

Բաժակը կազմւած է առանձին տերևներից—բաժա- կաքերերից, որոնք կամ բաժան բաժան են լինում կամ միացած և երբեմն էլ առամնաւոր:

290. Երկրորդ շրջանը և ծաղիկի ամենից սիրուն և գու- նաւոր մասը պսակն է—սա նոյնպէս կամ առանձնացած կամ միացած թերթերից—պսակաքերերից է կազմւած:

291. Երրորդ շրջանը այն ցից-ցից, երկար քորոցա- նման ձողիկներն են, որ երևում են ծաղիկներից շատե- րի մէջ և կոչւում են առէջքներ: Առէջքների գլուխները քորոցի նման ուռուցիկ են և ծածկւած են լինում նուրբ փոշիով—բեղմնաորոշ փոշիով, առէջքների այդ գլուխները կոչւում են փոշակօրներ, իսկ քորոցի ձողիկ- ները՝ շաղանաք. երբեմն առէջքները շաղամաթ չեն ու- նենում, բայց առանց փոշանօթի լինել չեն կարող—այդ դէպքում փոշանօթը ցածր է գտնւում:

292. Ծաղիկի չորրորդ մասը՝ վարսանդը նրա կէտա- րոնումն է և զանազան ձևեր է ունենում: Սա բաղկացած է երեք մասերից՝ բողբոջ, ձողիկ և սպի: Սպին վարսան- դի վերին անհարթ մասն է, որի շարունակութիւնը կազ- մում է ձողիկը. սրա մէջ մի անցք կայ—որ տանում է դէպի մի ուռուցիկ տեղ—բողբոջ:

293. Կան ծաղիկներ, որոնք ունեն բոլոր այդ չորս մասերն էլ, սրանք յիշ ծաղիկներն են, բայց կան և այնպիսիները, որոնք չեն ունենում կամ բաժակ կամ պսակ: Սակայն ծաղիկը առանց վարսանդի և առէջքների չի կարող լինել:

Բաժակ եւ բաժակա- քերքեր

Պսակ եւ պսակա- քերքեր

առէջ- քներ, շա- ղամաք եւ փոշի

Վարսանդ

Կիւ եւ պակասա- ւոր ծա- ղիկներ

Առէջքների բեղմնաւորիչ փոշին ընկնում է սպիի վրայ և ապա սպիից մտնում ձողիկի խողովակի մէջ և գնալով բողբոջը բեղմնաւորում է և կամաց կամաց դառնում սերմ կամ սրուղ:

Նոյնանման բոյսերի վրայ միաժամանակ լինում են երբեմն երկու տեսակ ծաղիկներ—մի խումբ ծաղիկներ ունենում են վարսանդ, միւսները առէջքներ:

294. Ամենից լաւ բեղմնաւորումը առաջանում է այն ծաղիկներից, որոնք առանձին առանձին են բեղ- մնաւորում: Այն ծաղիկները, որ ունենում են բոլոր չորս մասերը—այն է բաժակ, պսակ, առէջքներ և վարսանդ— անւանւում են յիշ ծաղիկներ—իսկ եթէ սրանցից մէկն ու մէկը պակասում է, կոչւում են պակասաւոր ծաղիկ- ներ: Երբ ծաղիկի պսակն ու բաժակը միեւնոյնն է լինում, կոչւում են հասարակ ծաղիկներ. պատահում են ծաղիկ- ներ, որոնք կամ առէջք չեն ունենում, կամ պսակ, կամ վարսանդ: Երբեմն առէջքները ձևափոխելով դառնում են պսակաթերթեր և ընդհակառակը—պսակաթերթերը դառնում առէջքներ:

Ծաղիկ- ների կազ- մի զանա- զան տե- սակներ

Է. ՍԵՐՄԻ ԱՌԱՋԱՆՍԱԼԸ

295. Բոյսերի ծաղիկները նրա համար են, որ նրան- ցից առաջանան սերմեր, իսկ սերմերից՝ նոր բոյսեր:

Բեղմնա- ւորում

Սերմը գոյանում է բողբոջի մէջ, երբ առէջքներից այնտեղ ընկնում է բեղմնաւորիչ փոշին:

Մենք պիտենք, որ բեղմնաւորիչ փոշին գտնւում է առէջքների ծայրերի ուռուցիկ պարկերի մէջ: Երբ ծա- ղիկը որոշ հասունութիւն է ունենում, այդ պարկերը տրաքում են և փոշին տարածւում է ծաղիկի մէջ:

Վարսանդը, որ գտնւում է ծաղիկի կենտրոնում, ունի խոնաւ գլուխ կամ թէ պատած է լինում մանր փնջանման մազերով. այդ մազերը և խոնաւ գլուխը պա- հում են իրենց մէջ առէջքների փոշին:

296. Փոշին մանր, կոլոր մի հատիկ է, որի մէջ գտնւում է պրօթօպլազման իր կորիզով, կամ ուրիշ խօս- քով, փոշու ամեն մի հատիկը մի մի վանդակ է:

Բեղմնա- ւորիչ փո- շի

Վարսանդի մէջը, ինչպէս ասեցինք դատարկ է և խողովականման. իսկ նրա ցածի ուռուցիկ մասում գտնուում է բողբոջը: Հէնց որ փոշու մի կամ մի քանի հատիկներ կաշում են վարսանդի գլխին, այդտեղից դրանք մտնում են նրա խողովակի մէջ և գալիս են դէպի բողբոջ. բողբոջի մէջ գտնուում են ծաղկի *ճւսնօրը* և *ճւտըրը*, ուր և մտնում է բեղմնաւորիչ փոշին. այստեղ փոշին կաշում է ծաղկի ձևին և լուծուում է մէկ վանդակը միւսի մէջ: Դա ծաղկի բեղմնաւորումն է: Դրանից յետոյ վանդակը սկսում է բաժանուել, բազմանալ, ուրեմն և աճել. իսկոյն այստեղ սկսում է սպիտակուցային մարմնի առաջ գալը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ինքը սերմը:

**ԲԵՂՄՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅՆԵՐԸ**

Բեղմնաւորումն

297. Մենք ասացինք, որ շատ բոյսերի բեղմնաւորութիւնը կատարուում է հէնց նոյն ծաղկի մէջ, ուր կան և՛ ուռուցքներ և՛ վարսանդ: Բայց փորձած է, որ բեղմնաւորութիւնը աւելի յաջող է լինում, եթէ այդ բանը կատարուում է միանման, բայց ուրիշ ծաղկից: Այդ դէպքում թէ պտուղն է աւելի առողջ լինում և թէ նրա սերմը աւելի լիքը և մեծ:

Էւ իսկապէս, բնութեան մէջ բոյսերի այս վերջին տեսակ բեղմնաւորութիւնը աւելի տարածւած է:

Մի հարց. ինչպէս են բեղմնաւորում միմիանցից հեռու գտնւած ծաղիկները:

Դրա համար կան երկու օգնողներ—մէկը—*խամիւն* միւսը—*կեղդանիկները*:


Բեղմնաւորման միջոցներ քամի եւ միջասներ

298. Այն բոլոր բոյսերը, որ ունեն ոչ գունաւոր ծաղիկներ, որոնց ոչ ծաղիկներն են քաղցր և ոչ առէչքները գրաւիչ, ինչպէս օրինակ բոլոր հացաբոյսերի և ծառերից մի քանիսի ծաղիկները—դրանք բեղմնաւորում են քամու օգնութեամբ:


Երբ առէչքների տոպրակները տրաքւում են և փոշին դուրս է գալիս, քամին գալիս և տանում, ցրում է դրանց օդի մէջ—օդից դրանք նստում են նման ծաղիկների վրայ և այստեղ արդէն բեղմնաւորում են:

299. Բոլոր գեղեցիկ, գունաւոր, հոտաւէտ և քաղցր առէչքներ ունեցող ծաղիկները բեղմնաւորում են զանազան միջատների, թիթեռների, բզէզների և ճանճների օգնութեամբ: Սրանք, զրաւելով ծաղիկի գեղեցկութիւնից, իրենց կերակուր փնտռելու ժամանակ, գալիս, նստում են այդ սիրուն ծաղիկների վրայ և իրենց քիթն ու ռաները կոխում են ծաղիկի մէջ. ահա այդ միջոցին բեղմնաւորիչ փոշին կաշում է նրանց թաւոտ գնչին, ոտներին, թևերին. և երբ սրանք այս ծաղկից թռչում են միւս ծաղիկի վրայ, մարմնին կպած փոշին էլ տանում են իրենց հետ և, նստելով միւս նոյնանման

Միջասներն ու ծաղիկը



№ 74. Ծաղկի բեղմնաւորումը.



№ 75. Հացաբոյսերի բեղմնաւորումը քամու շնորհիւ.

ծաղկի վրայ, թողնում են նրա վարսանդի սպիտ գլխին իրենց վերայի փոշին. սա, մտնելով վարսանդի խողովակի կամ ձողիկի մէջ, բեղմնաւորում է այդ ծաղիկը և դրանից սերմ առաջանում:

Եւ այսպէս բնութեան մէջ գտնւած հազարաւոր միջատներն ու թիթեռները օգնում են ծաղիկների բեղմնաւորութեանը, բոյսերի բազմանալուն և հազար տեսակ պտուղներ առաջանալուն:

Ը. Պ Տ Ո Ի Ղ

Ծաղիկը սերմ առաջանալուց յետոյ

300. Ծաղիկների բեղմնաւորութիւնից յետոյ ծաղիկները արդէն իրենց գլխաւոր պաշտօնը վերջացած են համարում, ուստի իսկոյն սկսում է ծաղկի մահը:

Ամենից առաջ թառամում են ծաղիկի թիթեղները, ապա տուէքներն են իրենց գլուխները ցածայնում, յետոյ ինքը վարսանդն է թուլանում, թառամում և, մի քանի օրից յետոյ, ծաղկի բոլոր մասերը թափւում են:

Սերմի գոյանալը



№ 76. Երեքնուկի ծաղիկը, արմատն ու տերևները.

Սերմի եւ պսուղի սեսակները


301. Մնում է ծաղկի միւս մասը—բողբոջը, որից կազմւում է սերմը կամ պտուղը: Երբ թառամում և թափւում են ծաղկի միւս մասերը, բողբոջը, ընդհակառակ, սկսում է ուռչել, մեծանալ. շատ անգամ բողբոջի հետ մնում է ծաղկի մի այլ մասը՝ բաժակը—բաժակաթերթերով:

302. Ծաղկի սերմ դառնալը կատարւում է զանազան ձևով—նաեւ ծաղիկի կամ, ճիշտն ասած, բոյսի տեսակին. կան ծաղիկներ, որոնք տալիս մի սերմ և այդ սերմը նրա

պտուղն է. այսպէս են բոլոր կորիզաւոր պտուղները՝ ծիրանը, դեղձը, նուշը, սալորը, բալը, կեռասը և այլն: Սրանք բաղկացած են լինում չորս մասից—ա) վերին բարակ կաշւից, կճէպից, - բ) դրա տակի մսա ի, քաղցր կամ թթու մասից—որը այն պտուղն է, որ մենք ուտում ենք, - գ) մասը կարծր կորիզն է և վերջապէս չորորդը—ինքը միջուկը: Սա էլ պատած է լինում մի բարակ շապիկով:

Կարծրակորիզ բոլոր սերմերը իրենց մէջ ունենում են խղեր:

303. Կան պտուղների ուրիշ տեսակներ—դրանց սերմը մի պարկի նման է, իսկ այդ պարկի մէջ գտնւում են բաժանմունքներ, սրանց մէջ լինում են բազմաթիւ մանր հունտեր կամ սերմեր ինչպէս օրինակ՝ զանազան ծաղիկների սերմերն են՝ խաշխաշի, պուտի և այլն: Կան բոյսեր, որոնց պտուղները կարծր կորիզ չունեն, այլ նրանց փափուկ մսի մէջ կան բաժանմունքներ, իսկ սրանց մէջ՝ սերմերն են—ինչպէս օրինակ՝ խնձորը, տանձը, սերկեիլը, դեղձը և այլն: Կան նաև



№ 77. Վայրենի սայրի ծաղիկը, պտուղն ու փշերը.


ուրիշ տեսակ բոյսեր—կամ հունդեր դրանք բաղկացած են երկու փափուկ կեղևներից իրենք երկաշուկ են և կեղևների մէջ գտնւում են մի շարք սերմեր, այդպէս են—լոբին, սիսեռը, բակլան, ծառերից՝ աղացիան և այլն: Կան և ուրիշ տեսակ պտուղներ. սրանք կաշի չունեն, միսը փափուկ է և նրա մէջ լինն են մանր կորիզներ, այդպէս են մորը, մաշը, ելակը, թուլթ և այլն:

304. Երբ պտուղներն ու սերմերը հասունանում են, այդ ժամանակ նրանց կանթը սկսում է թառամել և նրանք ցած են ընկնում գետին կամ նախապէս պատուում են և միջից դուրս են թափւում սերմերը, սրանք ընկնում են գետնի վրայ և այստեղ դրանց մսալի մասը փտում է, իսկ կորիզներից զարնանը դուրս են գալիս նոր ծիլեր և նոր բոյսեր: Մանր սերմ ունեցող բոյսերը, ճաքելով, բամու օգնութեամբ ցրւում են զանազան տեղեր և զրանով բոյսը տարածւում է շատ և շատ հեռու: Որպէսզի սերմերը պաշտպանւած լինեն արտաքին վտանգներից, նրանց վերայ իրենց բոյսերից թափւում են

Սերմի հասունութիւնը

տերևներ և դրանով սերմի համար պատրաստում է մի ծածկոց:

Բոյսի ինքնապատկերները



№ 78. Եխախոտի ծաղիկն ու ներքին գործարանները.

րենց տեսակն ու սերունդը պահպանելու մասին իրենք են հոգ տանում:

Թ. ԲՈՅՍԵՐԻ ԱՌԱՆՑ ՍԵՐՄԵՐԻ ԲԱԶՄԱՆԱԼԸ

306. Երբ մենք ծանօթանում էինք բոյսերի գործարանների հետ, տեսանք, որ ցողունի վրայ գանուղ բողբոջները, որ կոչւում են նաև այլեր, երբ գետնի մէջ են տնկւում, տալիս են արմատներ, այսինքն դրանցից գոյանում են նոր բոյսեր կամ տունկեր:

Բոյսեր բազմացնելու մասերով

307 Մարդիկ օգտւել են բոյսի այդ յատկութիւնից և, ցանկանալով մի որևէ տունկ ստանալ ոչ թէ սերմ ցանելով, որ մի քանի ծառերի վերաբերմամբ կատարւում է շատ ուշ, այլ ուղղակի բոյսի աչքերից, կտրում են ցողունի կամ ճիւղի կտորները և տնկում հողի մէջ:


Բոյսի այն կտորը, որ գետնի տակին գտնւած աչքերից նոր արմատներ է տալիս, իսկ գետնի վերի աչքերից նոր տերևներ, անւանւում է մասն:

Մատներով բազմանում են շատ բոյսեր-օրինակ՝ խաղողի վազը, բարդին, ուռենին, մօրենին և այլն:

Կան բոյսեր բազմացնելու ուրիշ ձևեր էլ—դարձեալ մատներով, միայն առանց մատը իր մայր բոյսից կտրելու:


308 Դրա համար հարկաւոր է մայր տունկի մի տարւայ ճիւղը իր երկարութեամբ կռացնել և հողով ծածկել, ծայրը դուրս բերելով հողից: Այնտեղ, ուր բոյսի աչքը գետնի մէջն է, դուրս են գալիս նոր արմատներ, իսկ մինչև այդ, բոյսը կերակրւում է մայր տունկի արմատներից: Հենց որ նոր տունկը արմատ է գցում, կարելի է նրան կտրել մայր տունկից. դրանով բոյսը առանձնանում է և զառնում ինքնուրոյն տունկ:

Աչքը նոր արմատներ է տալիս



№ 79. Պատուստ ձեղրածով, սեպաձև և կոյճից.

Այդ եղանակն էլ գործ են ածւում պարտիզպանները, այգեպանները, երբ ցանկանում են արագացնել բոյսի պտղատուութեան ժամանակամիջոցը:



№ 80. Բազմացում մատներով, առանց կտրելու

309. Բոյսերի գանազան յատկութիւններից մարդիկ օգտւում են նոր բոյս ստանալու կամ թէ նրա ծաղիկն ու պտուղը ազնւացնելու: Այս վերջին տեսակը կոչւում է պասուսում:

Պասուսումն եւ նրա ձևերը

Սա կայանում է նրանում, որ ազնիւ տեսակի տունկի ցողունը իր բողբոջով կտրւում են և կպցնում կամ հազցնում վայրենի բոյսի բունին կամ ցողունին և ապա այդ տեղը ամուր կապում են: Վայրենի բոյսը իր աճման հիւթը տալիս է պատուստած տունկի աչքին, սա ճիւղ և տերև

բողբոջով կտրւում են և կպցնում կամ հազցնում վայրենի բոյսի բունին կամ ցողունին և ապա այդ տեղը ամուր կապում են: Վայրենի բոյսը իր աճման հիւթը տալիս է պատուստած տունկի աչքին, սա ճիւղ և տերև

է տալիս, որը ունենում է պատուաստած ազնիւ տունկի բոլոր յատկութիւնները:

310. Պատուաստում են միանման բոյսերը—տանձր տանձի, խնձորէնին խնձորենու վրայ կամ նոյնանման սերմ ունեցող տունկերը:

Եթէ ազնիւ տունկի միայն մի աչքով են պատուաստում, առում ենք այնով պատուաստել, եթէ ճեղքում և ճեղքուածքի մէջ մտցնում ենք ազնիւ բոյսի կտորը—անւանում է ձեղխածով կամ սեպով պատուաստել:

311. Պատուաստելու ժամանակ պէտք է ուշք դարձնել, որ միմեանց կպցրած մասերի մակերևոյթը շատ սուր դանակով կտրւած լինեն և մէկը միւսի վրայ լաւ նստի կամ ծածկի. դա նրա համար, որ միմեանց կպցրած մասերի մէջ դատարկ տարածութիւն չլինի:

Ժ. ԲՈՅՍԵՐԻ ԱՃՄԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

312. Չնայած որ բոյսերը տարածւած են ողջ երկրագնդի վրայ, բայց ամեն մի երկիր, նայած

իր տեղին, հողի յատկութեանը, կլիմային ունենում է իր բոյսերը:

Տաք երկրներում աճող բոյսերը ցուրտ երկրներում չեն աճում և ընդհակառակը՝ ցուրտ կլիմաներին յատուկ բոյսերը վնասուում են տաք երկրներում և կամ շատ փոխոխուում են:

313. Բոյսի ազատ և առողջ զարգացման համար մեծ նշանակութիւն ունի հողը և օդը:

Քարոտ, աւազոտ, խճոտ կամ շատ աղեր պարունակող հողերը բոյսերի համար անյարմար են—և նրանց վրայ



Կլիմա եւ բոյսեր

№ 81. Փշածաղկի ծաղիկներն ու արմատը.

Հողը եւ ջուրը

աճող բոյսերը լինում են վտիտ, թոյլ և նոյն իսկ հիւանդոտ: Որքան մի հող հարուստ է օրգանական նիւթերով—այսինքն փտած բոյսերի, կենդանիների մնացորդներով, այնքան նրա մէջ բոյսերը լաւ են աճում և արմատները շատ սնունդ ստանում:

314. Բայց հողի սնունդը մշտական չէ. բոյսերը, տարէցտարի նոյն հողի վրայ աճելով, խլում են հողից նրա միջի հանքային մասերը և դրանից հողը աղքատանում կամ հոգնում է:

Հողի հոգնութիւնը

Հողի աղքատութեան դէմն առնելու համար դիմում են հողի պատասխանելու—այսինքն հողին տալիս են այնպիսի նիւթեր, որ ծծել են նրանից նրա վրայ բուսող բոյսերը — փտած աղբ, բոյսերի արմատներ, տերեւներ, մոխիր և այլն: Սրանք փտելով նորից հարստացնում են հողը նրակողրցրած նիւթերով, որից յետոյ ցանած բոյսերը զարձեալ տալիս են լաւ բերք:



№ 82. Սուրճի բոյսի ծաղիկներն ու սերմը.

316. Անտառներն ու դաշտերը պարարտացման կարիք չունեն, որովհետեւ թէ ծառերի տերեւները, թէ պտուղները և թէ խոտը, թափելով գետնի վրայ, մնում է այնտեղ, փտում, որով հարստանում է հողը բոյսերի համար անհրաժեշտ նիւթերով: Պարարտացումը գործ է ածւում այն հողերի վրայ, որոնցից մարդիկ օգտուում են—հնձում, պտուղ, սերմ ժողովում, այսինքն այգիներում, արտերում, մարգագետիններում, պտղատու պարտէզներում կամ ծաղկանոցներում:

Ինքնապարարտացումն

ԺԱ. ԲՈՅՍԵՐԻ ԿԱՐԳԱՒՈՐՈՒՄԸ

Սպորներով  
զարգա-  
ցումը



№ 83. Խոտանման բոյսի ծաղիկն ու ներքին գործարանները.

Միաշաքիլ  
եւ երկշա-  
քիլ


Միաշաքիլ բոյսերին պատկանում են՝ սոխը, շուշանը, ցորենը, գարին և ընդհանրապէս բոլոր հացարոյ սերը:

Միաշաքիլ  
եւ երկշա-  
քիլ բոյսե-  
ր, յասկու-  
թիւնները

319. Երկշաքիլաւոր բոյսերի տերւերը զուրս են գալիս զոյգ զոյգ, նրանք ունենում են մի գլխաւոր նեարդ, որից ճիւղաւորում են բազմաթիւ երկրորդական նեարդեր. ծաղիկը ունենում է բաժակ և պսակ, արմատը լինում է մի գլխաւոր, որից զուրս են գալիս ճիւղեր, այն ինչ միաշաքիլ բոյսերի տերւերը զուրս են գալիս մէկ

317. Բնութեան մէջ եղած բոլոր բոյսերը բաժանում են երկու մեծ խմբերի: Առաջին խմբին պատկանում են այն բոյսերը, որոնք ծաղիկ ունեն և բազմաւոր են սերմերից. երկրորդ խմբի բոյսերը ծաղիկներ չունեն, այլ բազմանում են սպորներով կամ բլթակներից: Այս վերջին տեսակի բոյսերին են պատկանում բոլոր մամուռները, սունկերը, ջրաբոյսերը և այլն:

318. Բոլոր ծաղկաւոր բոյսերը բաժանում են երկու կարգերի—բոյսեր, որոնց սերմերը ունեն երկու շափիչներ և բոյսեր մի շափիչաւոր սերմերով կամ թէ՛ միաշափիչ և երկշափիչ բոյսեր:




№ 84. Ծնեփակի բազմանալը.

մէկ, տերւերի նեարդերը բաժանում են ամեն կողմից ճիւղերի, առանց մի գլխաւոր նեարդի, արմատները փրնջանման են—առանց կենտրոնական մի արմատի:

320. Բացի այս տարբերութիւնները, բոյսերի ամեն մի խումբ ունի իր բաժանումները, նմանութիւնները:

Բոյսերի  
կարգաւորումը

Մի կարգ բոյսեր միմեանց աւելի նման են թէ՛ ծաղիկներով, թէ՛ պտուղներով և թէ՛ սերմերով:




№ 85. Սունկերի աճումը և զարգացումը.

Եւ ահա ինչպէս որ կենդանիների մէջ կան տեսակ, ընտանիք, ցեղ, կարգ և այլն, այնպէս էլ բոյսերի մէջ կան զրանք.—այս կարգը կոչում է բնական կարգաւորում:

Լիճեյի  
սխառն

321. Բոյսերի բնական կարգաւորումը ամենից մանրամասն կերպով կատարել է շվեդական գիտնական Լիճեյը. այդ կարգաւորումը մինչև այժմ էլ գիտութեան մէջ ընդունւած է: Լիճեյը բոլոր բոյսերը բաժանել է 24 դասերի, որոնցից 23-ը ծաղկաւոր, իսկ մէկը՝ սպորային: Բաժանումը նա կատարել է ունենալով որպէս հիմք, բոյսերի առէջքների և վարսանդների միմեանց հետ եղած նմանութիւնը



նում է մեզ երկրի կարծր, անզործարանական մարմինների ծագման, ձևի և յատկութիւնների հետ անւանուում է հանկարանութիւն:

Հանգեի ծագումը

326. Բոլոր հանքերը երեք ծագում ունեն: Առաջին չաբխա- խաբիսա- յիւս վիժ- ւածկեր խաբիսա պատկանում են այն հանքերը, որոնք առաջ են եկել հրաբխաբանական վիժումից—այսինքն ջրի հետ խառը կամ հալած գրութեամբ դուրս են վիժել զանազան հրաբուխներից և միմեանց վրայ կիտելով, շերտաւորելով, սառել, քարացել են և կազմել են մեր երկրի կարծր մասը—լեռներ, բլուրներ, ժայռեր, քարեր, մետաղներ. այդպէս են բոլոր գրանիտեայ շերտերը, քաւանդ քարերը և զրանց մէջ գտնուող զանազան մետաղներ—երկաթը, արճիճը, պղինձը, արծաթը, ոսկին և այլն: Այդ հանքերը կարծր են և ջրի մէջ չեն լուծուում:

327. Երկրորդ խաբիսա պատկանում են ջրաւոր կամ ջրասեղծ հանքերը: Սրանք առաջ են եկել զանազան մարմինների ջրերի մէջ խառնուելուց և ապա, երբ ջուրը նստել, գորշիացել կամ ծծւել է, նրա մէջ գտնուած նիւթերը, նայելով իրենց ծանրութեանն ու տեսակին, շերտերով նստել են միմեանց վրայ—այդպէս է կաւը, աւազը, խիճը և այլն: Այս հանքերից շատերը, թէև հրաբխային ծագում ունեն, բայց առաջացել են ջրի հետ խառնուելուց: Սրանց մէջ կան և գործարանաւոր նիւթերից առաջացած մարմիններ—ինչպէս տորֆը, քարածուխը, կաւիճը և այլն:

328. Այս խմբի հանքերի մէջ նշանաւոր են այն տեսակները, որոնք սկզբում ջրի մէջ հալւել, լուծւել են, իսկ երբ ջուրը գոլորշիացել կամ ծծւել է հողի մէջ—սրանք քարեղացել են և ապա, ամբանալով, դառել են զանազան լեռնային աղեր, ինչպէս օրինակ՝ ազաքարը, գաճը, կիրը և այլն: Պարզ է, որ սրանք փափուկ հանքեր են և բոլոր էլ ջրի մէջ լուծուում են:

329. Երրորդ խաբիսա պատկանում են այն հանքային մարմինները, որոնք գտնուում են ջրաստեղծ հանքերի տակի շերտերում և իրենց ներքին կազմով նման են

Մ Ա Ս Զ Ո Ր Ր Ո Ր Գ

Գ. ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ

322. Երբ ծանօթանում էինք բնութեան մէջ եղած գործարանական մարմինների՝ կենդանիների, բոյսերի հետ, տեսանք, որ այդ մարմինների մէջ կան գործարաններ շունեցող, միանման նիւթեր—ինչպէս օրինակ զանազան աղեր, երկաթ, ծծումբ, կիր և այլն: Այդ տեսակ նիւթերը մենք անւանեցինք հանքեր կամ հանքային մարմիններ:

323. Հանքերն ու հանքային մարմինները գտնուում են ոչ միայն կենդանիների ու բոյսերի մէջ, այլ և ողջ բնութեան՝ նրանցից դուրս: Բաւական է ասել, որ մեր շուրջը գտնուող գործածական, անհրաժեշտ դառած պինդ իրերի, առարկաների մեծ մասը հանքերից է կազմւած. հանքային ծագում ունի ապակին, աղիւսը, երկաթը և երկաթից շինած բոլոր առարկաները, շինութեան քարերը, հանքեր են՝ կիրը, արծաթը, ոսկին, քարածուխը, պղինձը, կաւը և այս վերջինից շինւած բոլոր ամանեղէնները և այլն և այլն: Դրանք բոլորն էլ կամ հանքեր են կամ հանքերից կերպարանափոխած առարկաներ:

Այժմ մի հարց. ինչպէս են առաջացել հանքերը:

324. Բոլոր հանքերը գտնուում են մեր երկրագնդի ամուր մասի մէջ և նրանք կազմւել են մօտաւորապէս եօթանասուն տարեկից կամ այդ տարրերի զանազան խառնուրդից:

325. Այն գիտութիւնը, որ ուսումնասիրում է թէ ինչ տարրերից և ինչպէս են կազմւած զանազան մարմիններ՝ կոչւում է քիմիա, իսկ այն գիտութիւնը, որ ծանօթաց-

Հանգեի, բոյսերն ու կենդանիները

Հանգեի գործածութիւնը

Հանգեի կազմը

Չաբխա- յիւս վիժ- ւածկեր

Ջրասեղծ հանգեի

Ձեւափո- խակաւի հանգեի

հրաբխային հանքերին, իսկ շերտաւորութեամբ ջրաստեղծներ են: Այս խմբի հանքերը անւանուում են *ձեւափոխական հանքեր*: Բոլոր այդ հանքերն, չնայելով իրենց տեսակների բաղմութեանը, թէ կենդանական և թէ բուսական թագաւորութեան համար կազմում են ամենաանհրաժեշտ կերակուր և միջոց:

330. Եթէ շինէին այդ հանքերը, մենք չէինք ունենալ և բոյսեր, որոնք իրենց մարմնի անհրաժեշտ մասը կազմում են հանքերից, եթէ շինէին բոյսերը, չէին լինիլ և կենդանիները, որ ապրում են բոյսերով և բոյսերից ստացւած արդիւնքներով:

331. Բայց բոլոր հանքերի մէջ մարդու համար աւանձին նշանակութիւն ունեն մանւանդ մի քանիսը— նախ աղը, որ գործ ենք անում մեր կերակուրների մէջ, յետոյ քարածուխը և ապա բազմաթիւ մետաղներ, ինչպէս երկաթը, պղինձը, արծաթը, ոսկին և այլն:

Ծանօթանանք մեզ համար առաջնակարգ նշանակութիւն ունեցող այդ հանքերից մի քանիսների հետ:

Ա. դ

332. Աղը կամ կերակուրի աղ—այն հանքն է, որից կազմւած է քարի աղը. սա բաղադրւած է երկու տարրերից՝ նատրոնից և բլորից:

Սա փափուկ է և տաք, թէ սառ ջրի մէջ հեշտ լուծուող թափանցիկ հանք է, կազմւած խորանարդաձև բիւրեղներից. բիւրեղները հեշտ է նկատել, երբ աղաջուրը եփ տանք: Զուրը գոլորշիանում է և տակին մնացածը աղը ընդունում է փայլուն մանր խորանարդների ձև:

333. Աղը տարածւած է երկրագնդիս շատ տեղերում. մի քանի լեռների մէջ աղի շերտի հաստութիւնը կամ խորութիւնը հասնում է մի քանի հարիւր սաժենի: Բիւրեղները լինում են զանազան մեծութեան երբեմն մի արշինանոց կողեր և մակերևոյթ են ունենում:

Աղը առաջ է գալիս երկու եղանակով—մէկ կարծրացած—որպէս աղահանքերը, կամ աղաքարերը և ապա որպէս աղաւազ, որ ստացւում է ծովերի ջրերի գոլորշիանալուց:

Ամենասարածւած է գործածական հանքեր

Աղի կազմը

Յասկոբիւն ու ծագումը

Աղեւաճկեր

334. Իսկապէս բոլոր աղերը ջրային ծագում ունեն: Ծովերի ջրերը, ափերից դուրս գալով, մտնում են զանազան փոս տեղեր և առաջացնում աւազաններ կամ լճեր. երբ ծովի ջուրը յետ է գնում այդ աւազանների ջուրը արեգակի տաքութեան տակ գոլորշիանում է և նրա տակին մնում են աղի միլիոնաւոր բիւրեղները, որոնք աւելի չորանում, կարծրանում են և դառնում աղաքարեր: Այսպէս գարեր շարունակ մէկը միւսի վրայ ժողոված աղերի շերտերը ծածկւում են յետոյ աւազով, խճով կամ լաւայի շերտերով և այդտեղ քարանում են և ապա, որպէս աղահանքեր, սկսում են մշակւել—այսինքն կտրատւել և դուրս տանւել:

335. Կասպից ծովի հիւսիսային և արևելեան կողմում կան հազարաւոր աղի մանր լճեր, իսկ Անդրկովկասում յայտնի են Կողպի, Կողզանի, Հին-Նախիջևանի աղահանքերը, որտեղից տարեկան մի քանի հարիւր հազար փութ աղեր են կտրատւում և քարերի նման դուրս տանւում վաճառելու:

336. Աղի գործածութիւնը շատ տարածւած է. բոլոր կերակուրների մէջ նրանց համ տալու համար աղ են պցում, բազմաթիւ մթերքներ, բանջարեղէններ, որպէսզի նրանք չփչանան և երկար դիմանան, աղաջրի մէջ են պահում, որովհետև փորձւած է, որ աղը, մտնելով մի մարմնի մէջ, թոյլ չի տալիս նրան լուծւել կամ արգելում է նրա մէջ բակտերիաներ առաջ գալուն: Ընտանի կենդանիներից շատերի կերակուրի մէջ խառնում են աղ կամ թէ ամիսը մի քանի անգամ աղ են տալիս, որով թէ կենդանիների միսը և թէ կաթը և կաթից առաջացած մթերքները համ են ստանում:

337. Բացի այդ, աղը գործ է անում զանազան ուրիշ աղեր, թթուտներ, դեղեր շինելուս որպէս և ապակիի, սապոնի և այլ մետաղագործական գործւածքների և արդիւնագործութիւնների մէջ:

Աղի լճեր և աւազաններ

Աղի սարածումը

Աղի գործարարները

Ք Ա Ր Ա Մ Ո Ւ Խ

Արսաբին կազմը

338. Սրա գոյնը սև է, թաւշային, փայլուն և հիւթալից տեսքով, փխրուն կազմով: Այրելիս բոց է տալիս և թանձր մուխ, հոտաւէտ է և ծանր:

Օգտակար հանքերի մէջ ամենից տարածւածն է, հանքերում գտնուում է շերտերով. ամենից հաստ շերտը հազիւ 6—7 արշինի հասնի:

Նրա ծագումը

339. Քարածուխը բուսական ծագում ունի. մանրազիտակի տակ երևում են մանր անկւածներ, իսկ երբեմն կարելի է նկատել նոյն իսկ տերևի կամ բոյսի մի մասի չորացած և ամխացած յետքը:

340. Քարածուխը առաջացել է բոյսերից, որոնցով պատած են եղել մեր երկրի ահագին տարածութիւնները, ջուրը կամ հեղեղը հեղեղել է այդ տարածութիւնները. որից յետոյ ջուրը գոլորշիացել է, յատակում թողել հողային և աւազային շերտեր, ապա գետնի տակ գտնւած բոյսերը տաքացել և փոքր առ փոքր սկսել են այրել՝ ամխանալ առանց բոցի, իսկ վերևի մասը խիստ ճնշման տակ կարծրացել. ահա դրանից առաջացել է մեր քարածուխը:

Գործարարութիւն եւ արտադում

341. Քարածուխը, որ երկաթից յետոյ ամենից օգտաւէտ և գործածական մետաղն է, տարածւած է երկրագնդի զանազան կետերում, մանաւանդ Անգլիայում, Մ.Ամէրիկայում և Ռուսաստանում՝ Դոն գետի աւազանում:

342. Քարածուխով տաքացնում են վառարաններ, շոգեկաթսաներ, հազարաւոր գործարանների կաթսաները: Դրա շնորհիւ օրական մի քանի միլիոն մեքենաներ շոգի են առաջացնում և ահագին աշխատանք ու զործ արտադրում:

Տեսակներ

Կան քարածուխի զանազան տեսակներ. որքան նա փայլուն է, քիչ ծուխ հանող և մաքուր, այնքան նա բարձր է գնահատուում:

Քարածուխի ուրիշ արդիւնքներ

Քարածուխը որոշ պայմաններում այրման ենթարկելով տալիս է վառուղ զազ, որը լուսաւորութեան համար այնքան մեծ գին ունի:

343. Նրանից պատրաստում են զանազան թթուտներ—ինչպէս նաշաղիր, բէնզին, նաֆտալին և այլն:

Որպէս քարածուխը նոյնպէս և նրանից առաջացած կամ նրան նման այլ հանքեր՝ ադամանդը, կոկար, ասֆալտ, նաւթ, քարաիւղ—բոլորն էլ ամխածնային ծագում ունեն:

Ն Ա Ի Թ

344. Դրանց մէջ ամենից կարևորը նաւթն է, որ անւանւում է նաև *սարաիւղ*: Նաւթի ծագումը

Մինչև այժմ պարզւած չէ՝ նաւթի ծագումը կենդանական է թէ՛ բուսական, միայն անկասկած է՝ որ երկրի խորքում կան այդ սև հեղուկի ահագին ամբարներ, խառը զանազան գազերի հետ:

345. Երբ փորում է գետինը և հասնում են նաւթի առաջանին, նրա հետ խառը գազերը վեր են ցնդում և իրենց հետ բարձրացնում են նաև նաւթը:

346. Հում նաւթը գոլորշիացնում են և նրա երրորդ մասից ստացւում է *կերօսին*, որ մաքուր վառելու բանկելու և լուսաւորելու յատկութիւն ունի, մնացած <sup>2</sup>/<sub>3</sub> մասը անւանւում է *մազութ*: Կերօսին եւ մազութ

Թէ նաւթը և թէ մազութը նոյն դերն են կատարում, ինչ որ քարածուխը. նրանով տաքացնում են կաթսաներ, վառարաններ, զործ է ածւում երկաթուղիների և շոգենաւերի կաթսաները տաքացնելու և շոգի առաջ բերելու համար:

347. Նաւթը կալ երկրիս զանազան տեղերում, բայց ամենահարուստ նաւթահանքերը գտնւում են Հիւսիսային Մ.Ամէրիկայում և մանաւանդ Անդրկովկասի Բազու քաղաքում, ուր իւրաքանչիւր տարի արտադրւում է 600 միլիոն փութ նաւթ և ծախսւում Ռուսաստանում ու արտահանւում ամբողջ աշխարհի զանազան կողմեր: Նաւթի արտադումը

Մ Ե Տ Ա Ղ Ն Ե Ր

Երկաթ

348. Հանքերը տեսակներով բաժանւում են մի քանի խմբերի—այդ խմբերից մէկին են պատկանում *մեսաղներ* Մեսաղներ եւ ցրանց տեսակները

ներք, որոնք բնութեան մէջ գոյութիւն ունեն որպէս պարզ և ինքուրոյն մարմիններ—մետաղներ—այդպէս են երկաթը, արծիճը, պղինձը, ցինկը, արծաթը, ոսկին, պլատինը—այս վերջին երեք մետաղները անւանուում են նաև ազնիւ մետաղներ:

Երկաթ, նրա գործարուքիւնը եւ արտաբերութիւնը

349. Բոլոր, մետաղներից թէ շատութեամբ և թէ մանաւանդ օգտակարութեամբ և մեծ գործածութեամբ առաջին տեղն է բռնում երկաթը:

Բաւական է ասել որ երկաթը 2000 անգամ աւելի է արտաբերուում, քան միւս բոլոր մետաղները միասին առած և նրանից պատրաստուում են աւելի շատ իրեր, քան որևէ մի ուրիշ նիւթից:

Սկսած ժամացոյցների սլաքներից և նուրբ զսպանակներից, որոնք մի քանի անգամ թանգ արժէն, քան նոյն քաշով ոսկին, մինչև կոպիտ շուգունի անիւները—իրերի բոլոր այդ տեսակները պատրաստուում են երկաթից:

Երկաթի նաւեր

350. Երկաթի հանքերը երբեմն ահագին լեռների և բլուրների նման տարածւած են երկրագնդիս զանազան մասերում և զրանց միջից, երբեմն ահագին խորութիւնից մարդիկ արտահանում են օրական մի քանի տասնեակ միլիոն փութ երկաթ:

Երկաթը բնութեան մէջ սերտ կերպով միացած է լինում թթւածնի հետ, այնպէս որ, մինչև չհեռացնես նրանից թթւածինը, նա չի հալուում:

Հալելու եղանակը

351. Այդպիսի մի տարր բոլոր նիւթերի մէջ ածխածինն է, նա է որ ազատ միանում է թթւածնի հետ. դրա համար էլ որպէսզի կարելի լինի երկաթը ածխածնից ջոկել և հալել՝ կան յատուկ վառարաններ, ուր վառելուս մեծ ոյժով փչում են ածխածին, սա միանում է թթւածնի հետ և երկաթը, ազատելով հալուում է:

Չուգուն

352. Երկաթը սկզբում միանալով ածխածնի հետ բարձր ջերմութեան տակ դառնում է չուգուն, իսկ յետոյ արդէն շուգունը հալուում է և նրանից հոսում է հալած, շիկացած երկաթը:

Պողպատ

353. Երկաթի երկրորդ գտած աստիճանն ու տեսակն է պողպատը, որ շուգունից տարբերուում է իր ամրու-

թեամբ, կարծրութեամբ և շուգունի նման փխրուն է, այն ինչ տաքացրած երկաթը սալի և մուրճի տակ տափակում, ճկում և զանազան ձևեր է ընդունում:

Երկաթ արտադրող երկիրներ

354. Երկրագնդի վրայ ամենից շատ երկաթ արտադրում է Հիւսիսային Ամէրիկան, ապա՝ Անգլիան ու Գերմանիան, և միայն չորրորդ տեղը բռնում է Ռուսաստանը: Ուրալի լեռներում, որպէս և Գոն գետի աւազանում կան երկաթի վիթխարի հանքեր:

Անդրկովկասում էլ երկաթ շատ կայ—մանաւանդ հաբուստ է երկաթով Գանձակի նահանգը:

Կ ր ա ֆ ա ր ե ր

355. Գործածական հանքային տեսակների մէջ կրաքարը բաւականին տարածւածն է: Սա ամուր, ծանր մի հանք է ածխածնի և կայցի մետաղի խառնուրդից: Կրաքարի մաքուր տեսակները կաղմւած են բիւրեղներից, որոնք շրջապատւած են լինում զանազան ջրային կենդանիների օրգանական մնացորդների—թեփուկներով:

Կրաքարի ծագումը

356. Կրաքարը՝ ճանաչելու համար կայ մի շատ հեշտ միջոց. բաւական է կրաքարի վրայ կաթեցնել մի քանի կաթիլ որևէ թթուուտ և կրաքարը սկսում է փշշալ. դա ածխածնի և կրաքարի գազն է, որ բաժանուում է քարից:

Կրաքարի կազմը եւ կիր ստանալու միջոցները

Ածխածնի և կրաքարի միջոց հեռացնելու համար կայ և ուրիշ աւելի հեշտ և աժան միջոց: Դրա համար հարկաւոր է միայն կրաքարերը բարձր տաքութեան հասցնել. այդ դէպքում գազը նոյնպէս հեռանում է հանքից և հանքը դառնում է կիր, պահելով իր առաջւայ ձևը: Այժմ հանքը անւանում է իւսկոգրաւ կիր, բայց հենց որ քարի վրայ ջուր ածեցիր, նա ծծում է իր մէջ ջուրը, շափազանց տաքանում է և յետոյ ինքն իրեն քայքայուում սպիտակ, մաքուր փոշի է դառնում:

Այս փոշին իւսկոգրաւ կիրն է, որ այնքան գործ է ածուում շինութիւնների վերայ, երբ հարկաւոր է լինում դրա ցելի լուծւածքով քարը քարին կպցնել և կամ բոլոր ծակերը մի ամուր զանգւածով փակել:

Կաւիճ  
Շինու-  
թեւն նիւ-  
քեր  
Մարմար  
ԵՐԿՐԱՅԱ-  
ՆՈՒԹԻՒՆ

357. Կրային ծագում ունի և կաւիճը, հանքի մի ուրիշ տեսակը, որը կազմւած է ծովային կենդանիների թեփուկներից և խխունջներից.

358. Գան կրաքարերի ամուր, կարծր բիւրեղային տեսակներ, որոնք գործ են ածուում որպէս շինութեան քարեր աստիճանների, քարի սիւների համար:

359. Սպիտակ կամ կարմիր ու մոխրագոյն մարմարն ունի կրաքարն է, միայն շատ մաքուր բիւրեղներից:

360. Մինչև այժմ մեր սոված երեք թագաւորութիւններին պատկանող բոլոր մարմինները, լինեն նրանք գործարանական, թէ անգործարանական, ապրում են, աճում, բազմանում և վերջը ոչնչանում են մեր երկրի վրայ—որը իր կոլոր ձևի պատճառով կոչուում է նաև երկրագունդ:

361. Մեր տիեզերքի մէջ երկրագունդը մի հատ չէ, այլ նա մէկն է այն հազարաւոր մոլորակներից, որ մենք գիշերները նոյն իսկ հասարակ աչքով տեսնում ենք երկնքի վրայ և անւանում *աստղեր*:

362. Թէև մեր երկիրը գնդաձև է, բայց նրա ներքին կազմը մէկ չէ. այլ բազկացած է երեք տեսակ մարմիններից—մէկը դրսի կարծր կեղևն է, որի վրայ կան լեռներ, բլուրներ, հող և մեծ փոսերի մէջ ջուր—այսինքն ովկիանոսներ, ծովեր, լճեր և գետեր: Այդ կարծր կեղևի տակ, մի քանի հարիւր վերստ խորութեան մէջ, գտնուում է տաք, հալւած դրութեան մէջ հեղուկային մի գանգրած, իսկ դրա տակը կայ շատ տաք մի կորիզ—երկրագնդի միջուկը:

363. Այսպէս է երկրագնդի վրայ և նրա մէջ. իսկ երկրագնդիս վերև՝ նրա շուրս կողմը գտնուում է այն օդը, որ մենք շնչում ենք, որը մշտական շարժման մէջ է. այդ շարժումից է, որ առաջանում են քամիներ, փոթորիկներ, անձրև, կարկուտ, ձիւն և այլն:

364. Եւ այսպէս մեր երկրագնդի վրայ միաժամանակ ներգործում են ներսից՝ բարձր տաքութիւնն ու նրա հեղուկ մասերը, վրայից՝ ջուրը ու բոլոր երեք թագաւորութիւններին պատկանող մարմինները, իսկ վերևից՝ օդը և նրա փոփոխութիւններից առաջացած ոյժն ու երևոյթները — անձրևը, ձիւնը, կարկուտը և այլն:

365. Ահա այդ բոլոր ոյժերն են, որ գործում են մեր երկրագնդի վրայ, թէ նրա արտաքին կեղևի և, թէ նրանում եզոդ և ապրող կենդանիների ու բոյսերի վրայ սրանք ունենում են ահագին ներգործութիւն:

366. Այն գիտութիւնը, որ ուսումնասիրում, քննում, ծանօթանում է այդ ոյժերի մեր երկրի վրայ ունեցած գործունէութեան հետ անուանում երկրաբանութիւն:

367. Մենք ասեցինք, որ մեր երկրագնդի արտաքին կեղևի ուրեմն և այդ կեղևի վրայ ապրող ու բուսնող մարմինների վրայ մեծ ներգործութիւն ունի երկրի ներսում գտնուող տաքութիւնը և այդ տաքութիւնից առաջացած երևոյթները:

368. Առաջ քան այդ երևոյթների մասին խօսելը, տեսնենք, ճիշտ որ երկրի խորքերում աւելի տաք է, քան երկրի վրայ:

Մարդիկ իրենց գանազան պէտքերի համար գետնի մէջ հորեր են փորել և նկատել են, որ, երբ հորերը լինում են 5—10—20 սաժէն, նրանց մէջ տաքութիւնը գնալով աւելի պակասում է, բայց հէնց որ շարունակում են գետնի մէջ աւելի խորը փորել, այն է 50—100 և աւելի սաժէն, նկատուում է, որ որքան աւելի խորն ենք գնում, այնքան հորի միջի ջերմութիւնը աւելանում է, մինչև որ այնպիսի տաքութեան ենք հասնում, որ այլ ևս անկարելի է լինում դիմանալ ու շնչել: Իսկ երբ գանազան գործիքներով աւելի խոր են փորում յանկաթժ, երկրի խորքից, դուրս են վիժում տաք, եռման աստիճանի հասնող ջրեր, որոնք ահագին ոյժով, շատուանի նման դուրս են թափուում:

369. Այդպիսի տաք շատուաններ շատ կան եւրոպայի մի քանի երկրներում. օրինակ Իսլանդիայում, ուր տարին տասներկու ամիս երկրի խորքերից դուրս են գալիս մի շարք գեղեցիկ, եռող շատուաններ. ջրի գոլորշին ծածկում է այդ ողջ շրջանը, և որովհետև դրսի օդը աւելի ցուրտ է, ուստի և այդ գոլորշիները սառչում են և, կաթիլներ դառնալով, անվերջ անձրևների նման թափուում են ցած:

Երկրագնդի ներսի տաքութիւնը եւ կազմը

Ջերմուկներ

Հալած  
աղեր եւ  
մեհաղներ

370. Այս բոլորը ցոյց են տալիս, որ երկրագնդի կարծր կեղև տակ, նրա մէջ կայ բարձր տաքութիւն. իսկ մենք գիտենք, որ բարձր տաքութեան մէջ հալոււմ, լուծոււմ են ոչ միայն աղերը և փափուկ մարմինները, այլ և բոլոր մետաղները և կարծր մարմինները: Եւ ճիշտ որ, երկրի մէջ, բացի ջրերից, հալած գրութեան մէջ են մետաղներ, քարեր, աղեր, որոնք տաքութիւնից եռոււմ և եփոււմ են ու երբեմն երկրի կեղևը ծակոււմ ու սարսափելի ոյժով դուրս են ժայթքոււմ: Բնութեան այդ երևոյթիւն մենք անւանոււմ ենք *հրաբուխներ*:

Հրաբուխ

371. Հրաբուխները առաջ են գալիս մեծ մասամբ լեռնային տեղերոււմ և լեռների գագաթներոււմ: Հրաբխային լեռները լինոււմ են սուր, կոնաձև, իսկ գագաթների կենտրոնը՝ փոս ընկած—զրանք կոչոււմ են *հրաբերան* կամ *կրասեր*:

Հրաբուխի  
արսափին  
նշանները

372. Երբ հրաբխային լեռները սկսոււմ են հրաբուխ արձակել, երկրի ներսոււմ առաջանոււմ է ուժեղ շարժոււմ. երկիրը դողոււմ է և նրա վրայ զգացոււմ են ուժեղ հարւածներ: Լեռան գագաթոււմ սկզբոււմ երևոււմ են ջրային խիտ գոլորշիներ, ապա և բոցի ահագին լեզուներ, որից յետոյ սոսկալի ոյժով դուրս են նետոււմ ահագին քարեր, ժայռեր և վերջը ժայթքոււմ է մի թանձր հեղուկ, որը, վիթխարի հեղեղի նման, լեռան գագաթից թափոււմ է ցած և ծածկոււմ նրա շորս կողմը, ստորոտը և գնոււմ հեռու:

Լաւա եւ  
նրա ժայթ-  
քոււմը

373. Այդ թանձր զանգւածը, կոչոււմ է *լաւա*, սա կազմուած է հալած քարերից, հանքերից, մետաղներից և բարձր ջերմութիւն է ունենոււմ: Լաւան, փուփուկ լեռան ստորոտը, սկսոււմ է փոքր առ փոքր սառչել: Սկզբոււմ սառոււմ է վերին շերտը ու կեղև կապոււմ, յետոյ կամաց կամաց սառչոււմ են և նրա ստորին շերտերը: Տաքութիւնը երբեմն տևոււմ է մի քանի ամիս, նոյն իսկ մի տարի: Սառած լաւան յետոյ քարանոււմ է և որպէս միապաղազ հանքեր մնոււմ է այդտեղ և դառնոււմ զանազան յատկութեան քարհանքեր:

Երկրագնդի վրայ հրաբուխների լաւայի տակ մնացել են շատ քաղաքներ, գիւղեր. հրաբխային է և մեր Արարատը, որը սրանից 60—տարի առաջ իր լաւայի տակ թաղեց Ակոռի հայաբնակ գիւղը:

Երկրագրութիւն

374. Երկրիս ներսի եռոյ ոյժերի հետևանք է և երկրաշարժը: Մեր երկիրը իսկապէս ենթակայ է մշտական ներքին հարւածների, սրանք մեծ մասամբ թոյլ և անուժ են լինոււմ, դրա համար էլ մենք չենք զգոււմ. բայց երբեմն երկրի ներսի այդ ցնցումներն ու հարւածները, այնքան զօրեղ են լինոււմ, որ տասնեակ վերստ տարածութիւններ դողդողոււմ են, իսկ նրանց վրայ եղած թէ քաղաքներն ու գիւղերը և թէ երկիրները մեծ փոփոխութիւնների են ենթարկոււմ՝ տները փլոււմ են և աւերակների տակ թաղոււմ նրանց մէջ ապրողներին, գետինը ճաքճաքոււմ է և միջից դուրս են վիժոււմ ջրեր, գոլորշիներ, գետիւղ իրենց հոսանքը փոխոււմ են. աղբիւրները չորանոււմ, լեռներից պոկոււմ են ժայռերի ահագին բեկորներ և երկիրը սկսոււմ է տեղ տեղ սեղմուել. կուշ գալ, տեղ տեղ բացուել: Այս բոլոր ցնցումները և երևոյթը անւանոււմ է *երկրաշարժ*:

Ներքին  
ցնցումներ

375. Երկաշարժի ոյժը մեծ փոփոխութիւններ է առաջացնոււմ մեր երկրի մակերևոյթի վրայ, մանաւանդ, եթէ նա նոյն տեղոււմ կրկնոււմ է շուտ շուտ:

Երկրաշար-  
ժի հետե-  
ւանքները

Մեզ յայտնի երկրների մէջ Եպօնիայոււմ շուտ շուտ երկրաշարժներ են լինոււմ և հազարւոր մարդկային զոհեր տանոււմ: Նոյնը եղել է և Անդրկովկասոււմ—Չամախի քաղաքոււմ և Ախալքալաքի շրջանոււմ: Թեթև, փայտէ կամ եղեգներից շինուած տները միակ միջոցն է ազատուելու երկրաշարժի վնասներից, գոնէ մարդկանց:

Սառցակոյտեր եւ ջրեր

376. Մենք տեսանք թէ ինչպէս երկրի ներսը պտընուած կրակն ու ջուրը և զրանց մէջ հալուող հանքերը, դուրս վիժելով, երկրագնդի արտաքին կեղևի վրայ ահագին փոփոխութիւններ են առաջացնոււմ:

Քննենք բնական այն երևոյթները, որոնք անկախ երկրի խորքում գտնուած ոյժերից, ներգործում են մեր երկրագնդի մակերևոյթի վրայ:

377. Այդ ոյժերից մէկն է լեռներում կուտակուած ձիւնն ու սառուցքը:

Յայտնի է, որ երկրի բարձր տեղերում—լեռների վրայ աւելի ցուրտ է լինում և այդտեղ կուտակուում են ձեանահազին կոյտեր, որոնք մշտապէս մնում են լեռներում:

378. Ձեան և սառուցքի այդ կոյտերը սակայն անշարժ չեն, այլ սրանք էլ մի կողից տաք արևի ազդեցութեան տակ, միւս կողմից սեփական ճնշման սկսում են թէ զրսից և թէ տակի շերտերից հալել և տեղից շարժել ու առաջ գնալ ձորերի ու հովիտների միջով:

Չարժուում են ոչ միայն սառուցքի կտորները, այլ մի քանի վերստ երկարութեամբ և լայնութեամբ սառցային երկիրներ:

Պարզ է, որ սառցային այս վիթխարիները շարժելով իրենց տեղերից, սրբում, տանում են իրենց ճանապարհին գտնուած բոլոր արդեւքները, լինեն զրանք ժայռեր, բլրակներ, անտառներ թէ՛ մարդկային շինութիւններ:

379. Սառցարանների հսկայական այս հալոցքը, սարերի գազաթներից իջնելով ցած, մտնում է ձորերի, հովիտների մէջ և դառնալով վտակներ, գետակներ, առուներ սրբում, լուծում է իր մէջ հանքային ահագին զանգւածներ և վերջը, որպէս լեռնային գետեր, գնում, թափուում է ծովերի ու ովկեանոսների մէջ: Բաւական է սառցարանին անցնել մի տեղով և մի քանի շարժից այդ ողջ տարածութիւնը բոլորովին կերպարանափոխուում է. ժայռերը մերկանում են, բլուրների կողքերը քերուում, փափուկ հողը, մանաւանդ կաւային և կրային շերտերը, ողողւում են և ահագին ձորեր, փոսեր դառնում. այնտեղ, ուր հարթ ու հաւասար էր, այժմ լցւում են խորթ ու բորթութիւններով, առաջանում են ջրվէժներ, անդունդներ. անտառների վիթխարի ծառերն իսկ արմատահան են լինում և դէպի գետերը գնում:

Սառցային ոյժերի առաջանալը

Կրակի ցարժումը

Սառցային ոյժերի ու դրա հետեւանքը

380. Պարզ է որ հողային այս կոյտերը, միացած ջրի և նրա մէջ գլորուող ժայռերի, քարերի, խիճի ու աւազի հետ, երբ թափուում են մի գետի մէջ, այս գետը փոփոխութեան են ենթարկում. տեղ տեղ կիտելով այս բոլորը նոր ցամաք կամ կղզիներ են առաջանում, ուր մի քանի տարուց երևում են նոր բոյսեր, տունկեր, ծառեր. երբեմն ընդհակառակ՝ հեղեղում են գետի ափերը, նրա մէջ գտնուած փոքրիկ կղզիները, հրաւանդանները, լեզակները և քշում տանում են մի ուրիշ տեղ:

Յամաքը երբեմն մի քանի վերստ շարժուում առաջ է գրնում, իսկ մի ուրիշ տեղում նա մնում է գետի ջրի տակ: Այսպէս տարէ ցտարի կորչում են ցամաքի ահագին կտորներ կամ ընդհակառակը առաջ են գալիս նոր ցամաքներ:

Մի խօսքով, թէ սառցարանները, թէ անձրևները, հեղեղը և ընդհանրապէս ջուրը մեր երկրագնդի վրայ ահագին փոփոխութիւններ են առաջացնում, փոխում նրա այս կամ այն կտորի թէ՛ ձևը, թէ բուսականութիւնը և թէ կենդանիներին:

Ք ա մ ի

381. Պակաս աւերիչ չէ երկրի համար և *խաւթիկ*, մամանաւանդ այն տեղերի համար, որոնք աւազոտ և խճոտ են: Բամին, դա օդի շարժումն է, որ առաջանում է երկրի շարժումից և կախում ունի լուսնից և երկրի դէպի արեգակը ունեցած թեքումից:

382. Բամինները լինում են մեղմ, որ կոչւում է *գեփիտ*, կան միջակ քամիներ և վերջապէս ուժեղ *վամիներ*, փոթորիկ և մրրիկ. սրանք ահագին ոյժ ունեն, շարժում են ծովի և ովկեանոսի ահագին շերտեր, անտառներում և պարտէզներում, արմատախիլ են անում վիթխարի ծառեր, լեռներում գլորում են ժայռեր ու քարեր, լեռների վրայից սրբում տանում են ձեան մեծ զանգւածներ, իսկ անտապատներում քշում, շրջում են աւազի և խիճի այնպիսի մեծ քանակութիւն, որ սրանցով ծածկուում են մի քանի տասնեակ վերստ տարածութիւններ:

Գետեր, ջրեր և սառուցքի առաջ փոխութիւնները

Ինչ է քա մին

Քամու ոյժը և նրա կասարած փոփոխութիւնները

Օղի այս շարժումը, բնական է, որ փոփոխում է երկրի զանազան մասեր և երբեմն ծաղկած, մշակած երկիրները մի քանի ըրովում դարձնում է աւերակ և անապատ, կուտակելով այստեղ կամ այնտեղ աւազի անազին բլուրներ:

Քամին եւ ն. ներք

383. Քացի դա, քամին մտնելով ժայռերի մէջ, փչում, դուրս է հանում նրանց վրայի հողային ծածկոցները և մերկացնում է լեռները, իսկ աւազը, անազին ոյժով կըլզելով լեռներին, նրանց վրայ գծեր է անում, քայքայում է փափուկ և փուխը մասերը և մի քանի ամսում լեռները փոխում են իրենց ձևը:

Քամու այս աւերմունքի պատճառով երկրիս վրայ անազին տարածութիւններ մնում են անմշակ և բնակութեան համար անպէտք:

Քամու դէմ մաքանելու միջոցներ

384. Քամու այս վիթխարի ոյժի դէմ կուելու համար մարդիկ բազմաթիւ միջոցներ են ձեռք առնում — քաշում են բարձր պատեր, պատնեշներ, աւազոտ տեղերը զանազան բոյսեր տնկելով ամրացնում են, փայտեր, գերաններ տնկելով գետնի մէջ, ծովերի ու մեծ գետերի ափերը պաշտպանում են քշելուց և այլն:

Բնական ոյժերը եւ նրանց ազդեցութիւնը օրգանական աշխարհի վրայ

385. Եւ այսպէս բնութեան մէջ գտնւած զանազան ոյժեր—երկրաշարժ, հրաբուխ, ջուր, սառցարաններ, քամի և այլն ամեն օր, ամեն ժամ ներգործում են մեր երկրագնդի վրայ, նրան մշտական փոփոխութեան ենթարկում, որով պարզ է և ազդում են երկրագնդի թէ բուսական, թէ կենդանական և թէ հանքային թագաւորութիւնների վրայ:

Նայեա՛ծ թէ բնական այդ ոյժերից, որոնք են այս կամ այն երկրում աւելի ներգործում, այդ երկիրն էլ զանազան ձևեր է ընդունում, տարբեր բոյսեր, կենդանիներ պահում, զարգացնում:

Մարդիկ՝ բնութեան թագաւորները, իրենց համար բնակութիւն և պարապմունք ընտրելիս միշտ էլ հաշի են առնում այդ երկրում տիրող բնական ոյժերն և նիւթերը մի տեղ քարի տներ են շինում, միւս տեղ փայտեայ. գետնափոր կամ եղեգնեայ, մի երկրում մի տեսակ

բոյսեր են մշակում, մի ուրիշ տեղ ուրիշ բոյսեր. մի երկրում մի խումբ կենդանիներ են պահում, մի ուրիշ տեղ տարբեր խումբ կենդանիներ առաջ բերում և պահում:

Նախապատկան օրգան եւ կենդանիներ

386. Գիտնական հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ մեր երկրի վրայ զանազան ժամանակներում ապրել են այնպիսի կենդանիներ ու բոյսեր, որոնք այժմ անհետացել են: Եւ այդ կատարել է բնութեան ներքին եւ արտաքին ոյժերի ազդեցութեան տակ:

Եւ այդպէս բնութեան մէջ ամեն ինչ փոփոխում է: Այդ փոփոխութիւնները խորը ազդում են մեր երկրագնդի և նրա վրայ ապրող երեք թագաւորութիւններին՝ պատկանող բոլոր առարկաների, էակների և մարմինների վրայ:

Երկրագնդի ապագան

387. Կանցնեն մի քանի հազար տարիներ և մեր երկրագնդի վրայ առաջ կգան ուրիշ բոյսեր, ուրիշ կենդանիներ, տարբեր կազմով ու կեանքով: Դրանց հետ միասին կփոխուի և ինքը մարդը:

Վ Ե Ր Զ



Յ Ա Ն Կ

	<i>Երես</i>
Մի քանի խօսք . . . . .	I—VIII
Բնութիւն և բնական մարմիններ . . . . .	8
<b>I. Մարդակագմութիւն</b>	
Չարժողութեան գործարաններ . . . . .	12
Մանկավարժութեան գործարաններ . . . . .	19
Կերակուր . . . . .	27
Արեան շրջանառութիւն . . . . .	29
Աւշային և կաթնային անօթներ . . . . .	36
Չնշառութեան գործարաններ . . . . .	37
Կաշին կամ մորթը . . . . .	41
Ձգայարաններ . . . . .	44
<b>II. Կենդանաբանութիւն</b>	
Կարևասուններ . . . . .	60
Մարդանմաններ . . . . .	63
Գիշատիչներ . . . . .	65
Չնայեղ . . . . .	70
Կռժողներ . . . . .	71
Սմբակաւորներ . . . . .	73
Թռչուններ . . . . .	78
Սաղ . . . . .	79
Գիշատիչներ . . . . .	82
Ճնճողուկներ . . . . .	84
Սողուններ . . . . .	
Օձեր . . . . .	86
Կրիաներ . . . . .	89
Նրկկենցաղներ . . . . .	90

	<i>Երես</i>
Չկներ . . . . .	91
<b>Ա. Առողմաբանութիւն</b>	
Յօդաւորներ . . . . .	96
Բազմատնանիներ . . . . .	100
Խեցղեփնանմաններ . . . . .	100
Մանրէներ կամ բակտերիաներ . . . . .	101

III. Բուսաբանութիւն

Բոյսի կազմը . . . . .	104
Բոյսի էութիւն . . . . .	106
Բոյսերի կեանքն ու զարգացումը . . . . .	108
Սերմ . . . . .	108
Բոյսի աճման աստիճանները . . . . .	112
Արմատ . . . . .	116
Ցողունը և բունը . . . . .	120
Տերև . . . . .	123
Ծաղիկներ . . . . .	125
Սերմի առաջանալը . . . . .	127
Բեղմնաւորութեան միջոցներ . . . . .	128
Պտուղ . . . . .	130
Բոյսերի առանց սերմի բազմանալը . . . . .	132
Բոյսերի աճման պայմանները . . . . .	134
Բոյսերի կարգաւորումը . . . . .	136

IV. Հանրաբանութիւն

Հանրերի ծագումը . . . . .	139
Աղ . . . . .	140
Քարածուխ . . . . .	142
Նաւթ . . . . .	143
Երկաթ . . . . .	143
Կրաքարեր . . . . .	145
Հրաբուխ . . . . .	146
Երկրաշարժ . . . . .	149
Մտոցակոյտեր և ջրեր . . . . .	149
Քամի . . . . .	151



ՀՀ Ազգային գրադարան



NL0249887

6 P



209

### ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Արանասեան, Ա. Գասազիրք բնագիտութեան, հայոց և քաղաքային դպրոցների III., IV և V բաժանանքների համար, 85 նկարներով . . . . . 65 կ.

Պատրաստ է սպազուրթեան համար

Արանասեան, Ա. Գասազիրք բնագիտութեան և բիմլայի. հայոց և քաղաքային դպրոցների համար. բազմաթիւ նկարներով:

Գինն է 65 կոպ.

Գուճարով և ձեւագիրք վճարով գնողներին անուամ է  
ուր:

Գասազիրքի գլխաւոր պահեստը՝ Թիֆլիս, «Գուսսեան»  
ընկ. գրադաճառանոցում:

Իրմեղ՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ“  
իրմ. հեղինակին՝ Тифлисъ, Ашоту Атанасьянцу. Двори.  
ул. д. Грузинск. Дворянства.